

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР
«МАТЕНАДАРАН»

ИОАННЕС КАМЕНЕЦКИЙ

ИСТОРИЯ ХОТИНСКОЙ
ВОЙНЫ

Подготовил к изданию
А. С. АНАСЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

9(~)8
3-85

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՄԵՆԱՅԻ

21002

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
ԽՈԹԻՆՈՒ

Աշխատասիրով յամբ
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆԻ

1408

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԻՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964



Գրքում ուսումնասիրվում է և բնագրով հրատարակվում՝
XVII դարի հեղինակ Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պա-
տերազմին խոթինու» աշխատությունը, որը կարևոր աղբյուր է
Խոտինի 1621 թվականի լեհ-թուրքական պատերազմի պատմության
հետ կապված հարցերի լուսարանման համար:

**ՀՈՎՀԵՆՆԵՍ ԿԵՄԵՆԵՏԻՆ ԵՎ ՆՐԸ
«ՊԵՏՄՈՒԹԻՆ ՊԵՏԵՐԸՄԻՆ ԽՈՒԻՆՈՒ» ԸԹԽԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Լեհական պետության սահմաններում հայերի ներկա-
յությունը մասին հիշատակություններն սկսվում են դեռևս
XI—XII դարերից. իսկ պատմական ու արխիվային հարուստ
նյութերը խոսում են այն կարևոր դերի մասին, որ հայ
տարրը ունեցել է այդ երկրի զարգացման հետագա դարերի
ընթացքում: Լեհաստանի հայերը թողել են հոգևոր ու նյու-
թական մշակույթի մի շարք արժեքավոր հուշարձաններ:

Առանձնապես հիշատակելի են Լվովի և Պոդոլյան Կա-
մենիցի (Կամենեց-Պոդոլսկի) շրջանների հայկական գաղութ-
ներից մեզ ժառանգություն մնացած զրավոր բազմաթիվ հի-
շատակարանները, որոնք թանկագին աղբյուրներ են հանդի-
սանում այդ շրջանների և, առհասարակ, Արևելյան Եվրոպայի
երկրների պատմության համար. իսկ շնորհիվ այն հանգաման-
քի, որ հայերն իրենք գործուն դեր են կատարել այդ երկրների
բաղաբազան, տնտեսական ու մշակութային կյանքում, հայ
պատմական աղբյուրների օգտագործումը կարող է կարևոր
նպաստ բերել այդ երկրների ինչպես ներքին կյանքի երևույթ-
ների ուսումնասիրության, այնպես էլ նրանց փոխհարաբերու-
թյունների հետ կապված հարցերի լուսարանման համար:

Handwritten signature or initials in blue ink.

50019

Հայկական այդ աղբյուրների նշանակությունը մեծ է հատկապես լեհ-թուրքական, լեհ-ուսական և ուս-թուրքական հարաբերությունների ուսումնասիրության համար:

Պատմական այդպիսի սկզբնաղբյուրներից մեկն է Հովհաննես Կամենացու «Պատմություն պատերազմին խոթինու» աշխատությունը, որը վերաբերում է 1621 թվականի դեպքերին:

Հովհաննես Կամենացու այս երկի մի ձեռագիրը ընդօրինակությունը մենք 1953 թ. հայտնաբերել էինք Հայկական ՄԱՌ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվ. Հին Զեռագրերի Ինստիտուտ—«Մատենադարան»-ում (ձեռագիր № 2644, էջ 229ա—254ա) և նրա մասին որոշ տեղեկություններ հաղորդել այն ժողովածուի մեջ, որը Հայկական ՄԱՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս ընծայվեց 1954 թվականին՝ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի առթիվ¹:

Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ չունենք²: Նա իր երկի վերջում գտնվող ոտանավոր հիշատակարանում տեղեկություններ է տալիս միայն իր բնտանեկան պարագաների մասին, խնդրելով հիշել իր հորը՝ Տեր Հակոբին, մորը՝ Համային, կրտսեր եղբորը՝ Պողոսին, և վերջինիս երկու զավակներին, որոնք կոչվում էին Աստվածատուր և Ուստիան³:

Մատենադարանի № 2644 ձեռագիրը պարունակում է 1840-ական և 50-ական թվականներին Կ. Պոլսում Թադեոս

¹ А. С. Анасян, „Отголоски битвы при Хотине (1621 г.) в армянских источниках“, *Հեռույդ ժողովածուի մեջ*. „Великая дружба. Сборник посвященный 300-летию воссоединения Украины с Россией“, издание Академии наук Армянской ССР, Ереван, 1954, стр. 225—238.

² Խոթինի պատերազմի «Պատմության» հեղինակ Հովհաննեսին մենք տալիս ենք Կամենացի մականունը՝ հենվելով այն իրողության վրա, որ պատմական աղբյուրներում Կամենիցի բնակիչներն անվանվում են Կամենցացի, Կամենցի, Կամենացի: Մենք ետևորեն ենք վերջինը:

³ Տե՛ս ներկա հրատարակության մեջ, էջ 82:

Միհրդատյանցի կողմից հավաքված մի շարք մատենագրական նյութեր, որոնց մի մասն ընդօրինակվել է Կ. Պոլսի Սամաթիա արվարձանում՝ Սահակյան վարժարանի աշակերտ Ռուբեն Բաղդասարյանի ձեռքով, մյուս մասը՝ նույնիսկ Թադեոս Միհրդատյանցի ձեռքով, իսկ վերջում մի կտոր էլ՝ մի անծանոթ գրչի ձեռքով:

Հովհաննես Կամենացու «Պատմություն պատերազմին խոթինու» երկի այս ընդօրինակությունն ուղղակի հեղինակի ինքնագրից չի կատարված: Բնագրին հետզհետե կցված հիշատակարաններից երևում է, որ այս օրինակը նրա աննվազն երրորդ ընդօրինակումն է ներկայացնում: Հնագույն ընդօրինակությունը կատարված է եղել ոմն Սահակ գրչի կողմից, որը և երկու տուն հիշատակագրություն է թողել Հովհաննեսի շափածո հիշատակարանի վերջում:

«Սահակ գրրիչս առնէք յիշման,

նա գծեղ յիշէ յիւր գալըստեան», և այլն⁴:

Բայց այս օրինակը եղել է խիստ եղծված, այնպես որ հետազայում Սարգիս դպիրը մեծ ջանքեր է թափել բնագրի հարազատությունը վերականգնելու համար, ինչպես ինքն է ասում՝ Ավետիս Թաբակչազեի օժանդակությամբ «չատ աշխատելով ամենասխալ գրութեան գաղափարին», և նորից է ընդօրինակել 1791 թ.⁵: Բնագիրը վերականգնելու աշխատանքի ղեկավարությունը Սարգիս դպիրն ստիպել է մի քանի տեղերում նույնիսկ հատվածներ բաց թողնել: Օրինակ՝ Բ գլխի վերջում նա ասում է. «Աստ ժԲ (12) տուն ոտանաւոր կայր պատմաբար»⁶: ԺԶ գլխի վերջում նա բաց է թողել մի ներբողական հատված, հայտնելով որ «օրինակն յորմէ օրինակեցար՝ ամենայնիւ աղաւաղեալ գոլով, ոչ կամեցայ աշխատիլ որպէս ի պատմութիւնն»⁷: Հովհաննեսի արձակ հիշատակարանի վերջում Սարգիս դպիրը նույնպես գրում է.

4 Անդ, էջ 83:

5 Անդ, էջ 83:

6 Անդ, էջ 40:

7 Անդ, էջ 74:

որ «թէպէտ զկնի շարունակ բանք շատք կային... որպէս և յառաջն ասացար՝ ի խիստ աղաւաղ գրութենէն ամենեկն այլայլեալ գոյոյն թողար... բայց զկնի սոցա ոտանաւոր յիշատակարանն բազում աշխատանօք ըստ կարի մերում ուղղեցար և գրեցար զուղիղն»⁸։ Սարգիս դպրի այս օրինակից 1856 թվականին Քաղեոս Միհրդատյանցը կատարել է մի նոր ընդօրինակութիւն, որ է այժմ մեր ձեռքի տակ եղածը՝ Մատենադարանի № 2644 ձեռագիրը։

Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խոթինու» աշխատութիւնը գրված է գրաբար։ Թեև տեղ-տեղ աղարտված է բնագրի նախնական լեզուն և սրբագրիչ Սարգիս դպրի կողմից մշակման է ենթարկված, բայց և, ընդհանրապես, Հովհաննես Կամենացու այս երկը աչքի է ընկնում լեզվի ու ոճի սահունությամբ, ինչպես և նյութի շարադրման սիստեմավորությամբ։ Բազկացած է առաջարանից, 18 գլուխներից և հիշատակարաններից։ Հեղինակը մանրամասնորեն պատմագրել է Խոտինի արյունալի դեպքերը՝ սկզբից մինչև վերջ, մինչև գինադադարն ու թշնամի բանակների հեռանալը, վերջին գլուխը նվիրելով սուլթան Օսման II-ի սպանությանը, որը տեղի ունեցավ Կ. Պոլսում 1622 թվականին։

Հովհաննես Կամենացին իր այս աշխատության համար օգտագործել է հավաստի աղբյուրներ, որոնց մասին խոսում է առաջաբանում։ Հայտնելուց հետո, թե ինքն այս աշխատանքը կատարել է իր հոր՝ Տեր Հակոբի ստիպողական հրամանով, նա գրում է. «Որոյ վասն ի խոյզ իսկ եղեալ գտի զառն ումեմն պատուականի զգիր, որ անդ գոլով ականատես լեալ ամենայնի, մի ըստ միոջէ պատմութիւն արարեալ սոցին բանից ըստ պատշաճի իրին եղելոյ, կարճաոտ և այլախօս բառիք»⁹։ Թնագրական համեմատութիւններով պարզվում է, որ Հովհաննեսի նշած այդ «կարճաոտ և այլախօս բառիք» աղբյուրը, որն ականատեսի ձեռքով էր գրված, ոչ այլ ինչ է, քան հայազգի Օքսենտ Կամենացու հայ-կոմա-

ներեն (հայ-դիշդական բարբառով)¹⁰ գրած ժամանակագրութիւնը, որտեղ օրագրական մանրամասնութիւններով են գրի առնված Խոտինի պատերազմի դեպքերը և որի մասին կիսուսներ ստորև։ Հովհաննեսն այնտեղից օգտվել է լայն չափերով, հաճախ նույնիսկ բառացի։ Հովհաննեսն ունեցել է նաև այլ աղբյուրներ, որոնք մեզ հայտնի չեն։ Այդ մասին նա գրում է. «Նաև այլ ևս յոմանց յոլովից՝ որք առ ընդհանուրս համբաւեցին զլուր գովելի գործոյս այսորիկ»¹¹։ Սակայն մեր հեղինակը գրի է առել նաև որոշ բաներ իր տեսածներից ու ստացած հավաստի տեղեկութիւններից, ինչպես ինքն է ասում՝ «և զորս իմ եղեալ ծանօթ մասամբ իւր իբր ծագի մատին նշուլից սմին խորհրդոյ»¹²։ Այսպես, օրինակ, դեպի ճակատ մեկնելու համար Լվով հասած լեհական բանակի շքեղութիւնը նկարագրելիս՝ նա ասում է. «Զոր և իմում տրուպ նուաստութիւնս Յովհաննէս ներգեւեալ ոգի անդ գոլով՝ ականատես եղէ սքանչելատեսիլ փառացն այնոցիկ»¹³։ Հովհաննեսն, ուրեմն, մի կողմից «զուգահաւասարելով միմեանց բնագրացն օտարասեր ազանց»¹⁴,— խոսքը գրավոր աղբյուրների մասին է, որոնք բոլորն էլ օտար լեզուներով են եղել,— և մյուս կողմից նրանց միացնելով իր սեփական ծանոթութիւնները, մեզ տվել է իր «Պատմութիւն պատերազմին Խոթինու» արժեքավոր երկը։

¹⁰ Այս լեզվի կամ բարբառի մասին վերջին տարիների արժեքավոր ուսումնասիրութիւններից տե՛ս հետևյալները. J. Deny, „L'Arméno-coman et les Ephémérides de Kamieniec (1604—1613)“, Wiesbaden, 1957. E. Tryjarski, „Ze studiów nad rękopisami i dialektem kipczackim Ormian polskich“, Warszawa, 1960 (*Rocznik Orientalistyczny*, tom XXIII, zeszyt 2). E. Schütz, „On the transcription of Armeno-kipchak“, Budapest, 1961 (*Acta Orient. Hung.*, tomus XII, fasc. 1—3). Idem, „Armeno-kipchak texts from Lvov (A. D. 1618)“, Budapest, 1962 (*Acta Orient. Hung.*, tomus XV, fasc. 1—3).

¹¹ Տե՛ս ներկա հրատարակության մեջ, էջ 33։

¹² Անդ, էջ 33։

¹³ Անդ, էջ 46։

¹⁴ Անդ, էջ 38։

⁸ Անդ, էջ 80—81։

⁹ Անդ, էջ 33։

Հովհաննես Կամենացու այս աշխատությունը, ինչպես նշեցինք, վերաբերում է 1621 թ. լեհ-թուրքական պատերազմին, որը տեղի ունեցավ Խոտին քաղաքի և ամրոցի պարիսպների տակ:

Խոտին քաղաքը, որը գտնվում է այժմյան Ուկրաինական ՍՍՌ սահմաններում (Չերնովիցի մարզ), Կամենիցից ղեկի հարավ-արևմուտք, Դնեստրի աջ ափին, այն ժամանակ ընկնում էր Մոլդավիայի իշխանության մեջ, իսկ Մոլդավիան հանդիսանում էր Օսմանյան կայսրության հարկատու երկիր:

Ի ղեկ պետք է նշել, որ այս շրջանում ինչպես Կամենիցում, Խոտինում ևս գոյություն ունեւ հայկական մի ոչ-աննշան գաղութ, որի հնազույն հիշատակությունը հասնում է 1418 թվականը, երբ Ալեքսանդր Չել-Քունի հրավերով հազարավոր հայ բնադիրներ տեղավորվեցին Մոլդավիայի յոթը քաղաքներում:

Խոտինը մեծ նշանակություն ուներ որպես ուղղափառական կարևոր կետ՝ լեհ-թուրքական պատերազմում:

Խոտինի տվյալ պատերազմի պատմության նշանակությունը և, դրա հետ կապված, Հովհաննես Կամենացու երկր կարևորությունը վեր հանելու համար ավելորդ չէ համարուտակի հաշվի առնել պատմական ժամանակաշրջանը:

Այս շրջանում քաղաքական իրադրությունն արդեն բարդ էր Արևելյան Եվրոպայի այս մասում, նրանով, որ մի կողմից և հիմնականում լեհ-թուրքական հարաբերությունները, հատկապես 10-ական թվականների ընթացքում, բավականին լարված բնույթ էին ստացել՝ սպառնական դրություն ստեղծելով երկու պետությունների միջև, իսկ մյուս կողմից ուկրաինական հոծ տարրերով բնակված այս շրջաններում պատրաստվում էին այն շարժումները, որոնք քիչ հետո պետք է հանդես գային Քոզդան Խմելնիցկու ղեկավարությամբ: Եվ իրականության մեջ ինչպես լեհաստանի ապահովության խնդիրը, այնպես էլ ուկրաինական խնդիրը կապված էր հարաճուն ծավալման վտանգով սպառնացող սուլթանական թուրքիայի հետ, քանի որ թուրքական նվաճողական քաղաքականությունը միշտ էլ ձգտում էր քանդել իր գերիշխանու-

թյանը ենթակա Մոլդավիայի սահմանները ղեկի լեհաստան հենվելով թաթարական ուժերի վրա:

1616 թվականին Վարշավայում գումարված լեհական սեյմում թագավորական կանցլերն իր ղեկուցման մեջ, խոսելով լեհ-թուրքական հարաբերությունների մտահոգիչ դրության մասին և հանրագումարի բերելով թուրքերի ագրեսիվ դիտավորությունները հաստատող լուրջ փաստերը, ասում էր. «Թուրքի կողմից մեզ սպառնում է ակներև վտանգ, որը երկար ժամանակից ի վեր պատրաստվում էր...: Այս լայնափոր թշնամին երկար ժամանակ է, որ ատամներն է սրում՝ մեզ գիշատելու համար»¹⁵: Այնուհետև ղեկուցողը, ուժգնորեն ահազանգելով վտանգի մասին, հիշեցնում էր, որ նույն ահազանգումն եղել էր նաև նախորդ սեյմին¹⁶: լեհ-թուրքական հարաբերությունների ներդաշնակությունը խանգարող երկվույթներից մեկն, այս շրջանում, Մոլդավիայի գոյավիճակն էր, ընդ որում սուլթաններին հարկատու այս երկրի իշխանները հաճախ դադարի և հայտնի հարաբերություններ էին մշակում լեհական արքունիքի հետ: Թուրքական վտանգի ղեմ պատրաստ լինելու մտահոգությունը լեհերին հարկադրում էր ոչ միայն երբեմն սուլթաններից ապստամբող մոլդավական իշխաններին ապաստան շնորհել և օգնություն տալ, այլև զինված միջամտություն կատարել Մոլդավիայի գործերին՝ երբ թուրքերն այնտեղ գահ էին բարձրացնում լեհերին ուրբարեկամ իշխանների¹⁷: լեհ-թուրքական հարաբերությունների լարման պատճառներից էր նաև կազակների և թաթարների հարցը: Թուրքերը թշնամական երևույթ էին համարում այն փաստը, թե լեհաստանի կազակները Դնեստրի գետաբերանով դուրս գալով Սև ծովը, շարունակ ավերիչ արշավանք-

¹⁵ Eudochiu de Hurmuzaki, „Documente privitoare la Istoria Românilor“, suppl. II, vol. II, Bucuresti, 1895, doc. CCV: „Propositia seymowa Szczesnego Kryskiego, kanclera koronnego, imieniem Iego K. Mci, w Warszawie die 27 Aprilis anno 1616 podana“.

¹⁶ Ibidem.

¹⁷ Հմմտ. Ibidem, doc. CLXXXVI, CLXXXVII, CXC, CXCIV, CXCVII, CXCIX, CC, CCI, CCII, CCIV.

ներ էին կատարում սուլթանին ենթակա երկրների վրա. իսկ լեհերը գանգատվում էին, որ սուլթանի վասալ հանդիսացող թաթարական հորդանների անդադրում ասպատակություններն ու ավերածությունները լեհական տերիտորիաների վրա՝ թուրքերի թուլլատվությամբ ու հրահրմամբ էին կատարվում¹⁸:

Եթե շահավեցը լեհ-մոլդավական սահմանային շրջաններում տեղի ունեցող սովորական բախումները և լեհ-թաթարական հաճախակի ընդհարումները¹⁹, ապա 1620 թվականին Ցեցորայի դաշտում տեղի ունեցած շոքորյա ճակատամարտը հանդիսանում է այս շրջանում Քուրբիայի ռազմական առաջին ելույթը, որը նախերգանք հանդիսացավ 1621 թվականի Խոտինի պատերազմին: Ժամանակի քաղաքական իրադրության գնահատումը թերի կլինի, եթե մենք Խոտինից անջատենք Ցեցորան:

Հաջորդական այս երկու պատերազմներով պետք է որոշվեր թուրքական նվաճողության համար Դնեստրից այն կողմ՝ դեպի հյուսիս տարածվելու ծրագրի բախտը: Հարավում՝ Դնեստրի և Պրուտի հովիտներում գտնվում էր Մոլդավիան՝ օսմանյան սուլթաններին հարկատու իշխանությունը, որը Քուրբիայի համար հանդիսանում էր հենատեղ՝ հետագա առաջխաղացումների համար դեպի լեհական իշխանության սահմանները. իսկ լեհաստանն աշխատում էր իր ազդեցության ենթարկել Մոլդավական իշխանության սահմանամերձ շրջանները և թույլ չտալ, որ Քուրբիայի հետ ռազմական անխուսափելի բախումները տեղի ունենան իր հողերի վրա: Այս է պատճառը, որ սույն՝ 1620—1621 թվականների պատերազմները տեղի ունեցան մոլդավական հողերում:

Այս շրջանի հայկական աղբյուրներից Օքսենտ Կամենացու ժամանակագրությունը խոսում է և՛ Ցեցորայի և՛ Խոտինի պատերազմների մասին: Այս երկն արդեն մենք հիշա-

տակեցինք վերևում՝ Հովհաննես Կամենացու աղբյուրների մասին խոսելիս:

Օքսենտ Կամենացու ժամանակագրությունը, որը, ինչպես ասացինք, գրված է հայ-կոմաներենով և հայերեն տառերով, հայկական հայտնի «Կամենիցյան տարեգրության» մի մասն է կազմում²⁰: Այդ ժամանակագրության մեջ ամփոփված են 1611—1621 թվականների կարևոր դեպքերը²¹:

²⁰ «Կամենիցյան տարեգրությունը» (կամ «Տարեգիրք Կամենիցյա»), որը ժամանակագրական տարրեր երկերի խմբագրություն է, ընդգրկում է 1430—1652 թթ. միջև ընկնող ժամանակաշրջանը: Այս խմբագիր աշխատությունը տես Ղ. Ալիշանի հետևյալ հրատարակության մեջ. «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ», Վենետիկ, 1896, էջ 15—112: Օքսենտի ժամանակագրությունը գրավում է այս հրատարակության 68—109 էջերը:

²¹ Օքսենտի ժամանակագրությունն սկսվում է 1611 թ. հունվարից և վերջանում է 1621 թ. նոյեմբեր ամսի հիշատակությամբ, որին հաջորդող հայ-կոմաներեն մյուս երեք հատվածներն ուրիշի ձևովից են, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, «Կամենից», էջ 67, ծանոթության մեջ:

Հենվելով ժամանակագրության ներքին ավյալների վրա («Կամենից», էջ 69 և 91), մենք 1954 թվականին գրել էինք, որ իր երկում Օքսենտը սկզբի մի-երկու տարվա համար օգտագործել է «Իր եղոր՝ Տեր Հակոբի նյութերը» (տե՛ս ժողովածու «Великая дружба», էջ 227, ծան. 1): 1958 թվականին, մի այլ հոդվածում, այս նույն տեղեկությունը որսերեն թարգմանության ընթացքում այլափոխվել էր ու դարձել՝ «Իր եղոր՝ Տեր Գրիգորի նյութերը» (տե՛ս Պատմա-քաղաքագրական Հանդես, № 2, 1958, էջ 260, ծան. 1): Այս սկիզբն ավելի էր, դժբախտաբար, տարակուսանքի տարիք էր ավել գտնու. է. Տրոյարսկուսն (*Przeгляд Orientalistyczny*, Warszawa, 1959, № 3, էջ 227): Հարգելի գիտնականի տարակուսանքը փարատելու և հարակից հարջերը լրիվ լուսարանելու համար ուզում ենք մանրամասնել մեր ավյալները:

Ժամանակագրության մեջ միայն մի տեղ՝ 1611 թ. դեկտ. 23/1912 թ. հունվ. 2 ամսաթվի տակ գտնում ենք Տեր Հակոբի անվան հիշատակությունը, իր սեփական ձևերով (տե՛ս «Կամենից», էջ 69). իսկ 1612 թ. հուլ. 9/19-ից սկսած արդեն Օքսենտն է սկսում հիշատակվել՝ իր իսկ ձևերով (տե՛ս անդ. էջ 72, 75, 81, 84, 91, 99, 107 և 108): Այս հաշվով Տեր Հակոբը գրել է միայն ժամանակագրության սկզբից՝ 1911 թ. հունվարից մինչև առառավել 1612 թ. հունիսի 20/30-ը ներառյալ, եթե՛ ոչ ավելի պակաս: Այս շատ կարճ ժամանակաշրջանի նյութերի որպես աղբյուր օգտագործման մասին է խոսում Օքսենտը 1621 տարեթվի տակ, Տեր Հակոբի

¹⁸ Այս հարցի մասին ի միջի այլոց հմմտ. Ibidem, doc. CCVIII, CCX, CCXI, CCXII, CCXIII, CCXIV, CCXV, CCXVI.

¹⁹ Օրինակ՝ 1618 թվականի դեպքերի մասին տե՛ս Ibidem, doc. CCXVII, CCXVIII, CCXIX, CCXX.

Հեղինակն այնտեղ գրանցել է բազմաթիվ փաստեր, որոնք վերաբերում են ո՛չ միայն տեղական բնույթ կրող ղեկավարին, այլև քաղաքական իրադարձություններին, ղիվանագիտական հարաբերություններին, ռազմական շարժումներին, թաթարական ասպատակություններին, շրջակա երկրների և հասկապիս անմիջական հարևան Մոլդավիայի ներքին իրադարձություններին, Մոլդավիայի հետ գոյություն ունեցող հարաբերություններին և այլն: Հեղինակը, լինելով Կամենիցի հայ գաղութի վերին խավերի ներկայացուցիչ ու միաժամանակ լեզվագետ մարդ, վայելել է լեհական իշխանությունների վստահությունն ու համակրանքը, և այս հանգամանքով էլ կարողացել է ականատես և մասնակից լինել մի շարք կարևոր ղեկավարի: Այսպես, օրինակ, ինքը պատմում է, որ 1613 թվականի օգոստոսի 14/24-ին Կամենիցի փոխ-գատավոր պան

մանվան ասթիվ, գրելով, որ նա «այս ժամանակագրությունը կազմել էր և ձեռագրով թողել, իսկ ես՝ Օքսենտո, լուսահոգու եղբայրը, նրա ձեռագրից փոխագրելով գրեցի սույն ժամանակագրության մեջ» (անդ, էջ 91):

Օքսենտո ու Տեր Հակոբը Կամենիցի ավազներից Տեր Գրիգորի որդիներն էին և «Կամենիցյան տարեգրության» առաջին մասի հեղինակ Տեր Հովհաննեսի թոռները (տե՛ս մեր հոդվածը՝ «Դիտողություններ Ստեփանոս Մամաստեցու կենսագրության վերաբերյալ», էջմիածին ամսագիր, 1956, № 11—12, էջ 71—72): Պրոֆ. Փ. Դրենին իր ուսումնասիրության մեջ չի կարողացել զբաղվել այս հարցերով, քանի որ նրա ձեռքի տակ եղած Օքսենտի ժամանակագրության միայն մի փոքր հատվածն է եղել, նմամ. Jean Deny. L'Arméno-coman et les Ephémérides de Kamieniec (1604—1613)», p. 24:

է. Տրըյարսկին առաջ է քաշել այն կարծիքը, թե Օքսենտի եղբայր Տեր Հակոբը և Հովհաննեսի հայր Տեր Հակոբը պիտի նույն անձնավորությունը եղած լինեն (*Przeglad Orient.*, 1959, № 3, էջ 213), Այս կարծիքն արտահայտության է գտել նաև հետևյալ աշխատության մեջ. Я. Р. Дашкевич. «Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX веков (Исторический очерк)», Ереван, 1962, стр. 54—59: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Օքսենտի եղբայրը մահացել էր Խոտինի պատերազմի նախօրյակին՝ 1521 թ. ապր. 16/26-ին (տե՛ս «Կամենից», էջ 91): Իսկ Հովհաննեսի հայրը պատերազմից հեռու գետ կենդանի էր և իր որդուն հրամայել էր գրել պատերազմի պատմությունը. ուստի՝ նրանք տարբեր անձնավորություններ էին:

Ազամ Գորսկին լեհական կառավարության կոմից ղեկավարն է ուղարկվում թուրքական սուլթանի մոտ և այս ղեկավարությանը կցվում է ինքը՝ Օքսենտը, թարգմանի (դրվաչ) և տնտեսավարի (շաֆար) պաշտոնով²²: Այսպես և 1620 թվականի հունվարին թուրքական սուլթանից և թաթար-խանից ղեկավարներ են հասնում Կամենից՝ Վարչավա գնալու համար. այս ղեկավարությանը միանում է Օքսենտը՝ որպես պաշտոնական կցորդ (բրբուդավ) և թարգման (դրվաչ), թագավորին ներկայացնելու համար նրանց²³: Նա ականատես և շատ մոտիկից իրազեկ է եղել նաև Խոտինի պատերազմի ղեկավարին. օրինակ՝ 1621 թ. սեպտեմբերի 5/15-ի մարտերի և անցքերի մասին խոսելիս նա գրում է. «Այս բաներն ստույգ ու ճիշտ են, որովհետեւ ես՝ Օքսենտո, որ այս գրում եմ, այնտեղ էի և իմ աչքերով տեսնում էի. իսկ ինչ որ լավ չէի իմանում ու տեսած չէի լինում՝ այդ մասին լավ տեղեկություն էի ձեռք բերում և գրի առնում»²⁴:

Յեցորայի պատերազմի վերաբերյալ մենք Օքսենտ Կամենացու ժամանակագրության մեջ նախադրյալներ ենք գտնում ղիվանագիտական հարաբերությունների բնագավառից: Ինչպես արդեն նշեցինք, այս ժամանակ լեհաստան էին եկել թուրք-թաթարական ղեկավարներ, որոնց կցվել էր Օքսենտը՝ մինչև Վարչավա: Նույն ժամանակ լեհաստանից ևս ղեկավարներ են գնում օսմանյան սուլթանի և թաթար-խանի մոտ: Սուլթանի մոտ գնացող ղեկավար Օսմիլիովսկու մասին այստեղ տեղեկանում ենք, որ նա Կ. Պոլսում թշնամական վերաբերմունք է գտնում, «այնպես որ, — ասում է Օքսենտը, — փաշաները նրան հեռու պահեցին և թույլ չտվեցին, որ նա տեսակցություն ունենա թագավորի հետ»²⁵. իսկ թաթար-

²² «Կամենից», էջ 75:

²³ Անդ, էջ 84:

²⁴ Անդ, էջ 99:

²⁵ «Կամենից», էջ 85: Դեպքում Հեռոնիմ Օսմիլովսկու մի նամակը (6 ապր. 1620 թ.), որ նա ուղղել է լեհաստանի կանցլերին և որով թուրքերի «ազմական ղիտավորությունների մասին է խոսում, տե՛ս E. de Hurmuzaki, suppl. II, vol. II, doc. CCXXV.

ների մոտ դնացող լեհական դեսպան Օլեժկոյին նրանք կալանավորել էին «այն թաթար զորավարների փոխարեն, որոնց կալանավորել են լեհաստանում»²⁶։ Մենք նախորդ էջերում տեսանք նաև, որ թուրք-լեհական հարբերությունների մեջ մինչև այդ էլ արդեն որոշ լարվածություն էր տիրում։

Բայց պատերազմական գործողությունների սկսվելուն ուղղակի առիթ են ծառայում Մոլդավիայի իրազարժությունները։ Լեհ-թուրքական հակամարտությունից աշխատում էին օգտվել մոլդավացիները, որոնց համար թուրքական լուծը շատ ծանր էր և նրանք բազմիցս փորձել էին թոթափել այն։ Այժմ, օգտվելով լեհ-թուրքական հարբերությունների լարվածությունից, մոլդավական իշխան Գասպար Գրացիանին, որը կապեր ուներ լեհական իշխանությունների հետ, այսպես ասած «դավաճանական» ընթացք էր բռնել սուլթանի հանդեպ։ Օքսենտ Կամենացին պատմում է, որ 1620 թվականի օգոստոսի վերջերին (նոր տոմարով՝ սեպտեմբերի սկզբներին) Մոլդավիայի իշխանը, սուլթանի պատգամաբերներին շղթայելով, կոտորում է իր բանակում գտնվող թուրքերին. միաժամանակ նրա հրամանով թուրքերը կոտորածի են ենթարկվում նաև Յաշ (Յասսի) մայրաքաղաքում²⁷։

Գրանից հետո, սեպտ. 7/17—10/20-ը տեղի ունեցան Յեցորայի մարտերը, որտեղ լեհական բանակը կրեց ծանր պարտություն. իսկ այնուհետև լեհերի կորուստները բազմապատկվեցին նահանջի ընթացքում, որը տևեց սեպտ. 20/30-ից մինչև սեպտ. 26/հոկտ. 6-ը, երբ լեհական բանակը քայքայվեց վերջնականապես²⁸։

Թուրքերի համար Յեցորայի պատերազմը լեհաստանի դեմ՝ եղել էր մի կատարյալ հաղթանակ, որից խրախուսված՝ նրանք հաջորդ տարին հարուցեցին խոտինի պատերազմը, իսկ վերջինս նրանց բերեց լիակատար պարտություն։

²⁶ «Կամենից», էջ 85։

²⁷ Անդ, էջ 86։

²⁸ «Կամենից», էջ 86—88։ Տե՛ս նաև լեհական մի քանի վավերագրեր՝ E. de Hurmuzaki, suppl. II, vol. II, doc. CCXXVI, CCXXVII, CCXXIX, CCXXXI,

Հստ Օքսենտ Կամենացու՝ խոտինի պատերազմին մասնակցող թուրք-թաթարական միացյալ ուժերի ընդհանուր թիվը 460.000 էր, որից 210.000-ը թաթարներ էին. իսկ լեհական ուժերի ընդհանուր թիվը 90.000 էր, որից 45.000-ը՝ կազակներ²⁹։

Թեև ուկրաինական կազակների հարբերություններն այնքան էլ ներդաշնակ չէին լեհական կառավարության հետ, այնուամենայնիվ կազակներն օսմանյան սուլթանների և Ղրիմի խաների դեմ լեհաստանի կողմից մղվող կռիվներն ընդհանրապես համարում էին իրենց հարավի թշնամիների դեմ վերաբերմունք ցույց տալու բարենպաստ առիթներ և հաճախ մասնակցում էին դրանց, նպատակ ունենալով թույլ շտալ, որ թուրք-թաթարական նվաճողները ներխուժեն Դնեստրից հյուսիս ընկնող իրենց տերիտորիաները³⁰։ Այսպիսով Ջապորոժյան Սեչը ևս իր պատվաբեր մասնակցությունն է բերում խոտինի այս պատերազմին՝ լեհական ուժերի հետ միասին։

Պատերազմական գործողություններն սկսվում են օգոստ. 23/սեպտ. 2-ին և տևում մինչև սեպտ. 18/28-ը։

Մեր նպատակը չէ կանգ առնել պատերազմական դեպքերի վրա։ Դեպքերի մանրամասն նկարագրությունը տալիս է Հովհաննես Կամենացին՝ իր «Պատմություն պատերազմին խոտինու» աշխատության մեջ, որը պատմական կարևոր աղբյուր է և, անշուշտ, կտա նոր տվյալներ՝ խոտինի 1621 թվականի պատերազմի պատմության հետ կապված հարցերի լու-

1408


21001

400 260

²⁹ «Կամենից», էջ 93—95։

³⁰ Պետր է ասել, որ խոտինի պատերազմի պատմության աղբյուրներից ոչ մեկը մյուսի հետ համաձայն չէ կովին մասնակցող ուժերի թվի զնաճատման հարցում. հմտ. J. Tretiak, „Historia wojny chocimskiej 1621 r.“, Lwów, 1889, s. 131—134. M. A. Алекберли, „Хотинская война (1621 г.)“, Черновцы, 1957, стр. 10—12 и 79—80. „Islam Ansiklopedisi“, 5. cilt, 46. cüz, Istanbul, 1950, sah. 568.

³⁰ Օրինակ՝ 1616—1620 թվականներին լեհական և կազակական ուժերի զինական համագործակցության փաստերի մասին տե՛ս E. de Hurmuzaki, suppl. II, vol. II, doc. CCIV, CCXIX, CCXXII, CCXXVI, CCXXXI.



սաբանման համար, լրացնելով լեհական և այլ աղբյուրները³¹:

* * *

Նկատի առնելով գիտական այն նշանակությունը, որ Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խոթինու» աշխատությունը ներկայացնում է որպես նոր և կարևոր աղբյուր լեհ-թուրքական հարաբերությունների պատմության տվյալ շրջանի համար, մենք նրա բնագրի ուսուցիչներին թարգմանությունը (թարգմանիչ՝ Կ. Յուզրաշյան) նախապես հրատարակեցինք Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի ուսումնաթերթ «Պատմա-բանասիրական Հանդես»-ում, 1958 թ., № 2, էջ 258—286, «История Хотинской войны Иоаннеса Каменецкого» խորագրով³²: Այդ հրատարակությունն ուշադրության արժանացավ գիտական հասարակայնության կողմից:

Ն. Ս. Ռաշբան շատ ճիշտ կերպով արժեքավորեց հրատարակված բնագիրը. «Հովհաննեսի Պատմութիւն պատերազմին Խոթինու-ն վկայում է այն մասին, որ Եվրոպայի ժողովուրդներին հուզող իրադարձություններն արձագանք են գտել հայ ժողովրդի շրջանում, որի ներկայացուցիչները ձրգտում էին հավերժացնել պատմական ուշադրավ դեպքերի հիշատակը: Հովհաննեսը շահեկան փաստեր է նկարագրել թուրքերի և թաթարների դեմ մղվող պայքարում ժողովրդա-

³¹ Խոթինի 1621 թ. պատերազմի մասին արժեքավոր տվյալներ է հաղորդում նաև ժամանակակից հայ հեղինակ Սիմեոն Լեհացին, տե՛ս «Սիմեոն զպրի Լեհացույ ուղեգրութիւն», Վիեննա, 1936, էջ 356—368՝ «Արշաւանք սուլթան Օսմանի ի վերայ Լեհաց»:

³² Այս գործի տպագրությանը մենք չենք կարողացել անձամբ հետևել, այդ պատճառով մնացել են տպագրական որոշ վրիպակներ: Այսպես՝ «в Черниговской области» (էջ 259, տող 22, պիտի լինի՝ «в Черно-вицкой...»), «в четверг» (էջ 268, տող 25, պիտի լինի՝ «в среду»), «с ним 15.000 конных казаков» (էջ 268, տող 26, պիտի լինի՝ «...45.000...»), «да еще 40.000 казаков» (էջ 268, տող 30, պիտի լինի՝ «...4.000...»): Այսպես նաև «своего брата Тер-Григора, см. также стр. 69—91» (էջ 260, տող 46, պետք է լինի՝ «своего брата Тер-Акона, ср. стр. 69 и 91») և այլն:

կան զանգվածների ունեցած մասնակցությունն վերաբերյալ, և ուրիշ աղբյուրներից ոչ-հայտնի հերոսական հետաքրքիր միջադեպեր՝ թշնամու զգալիորեն զերակշռող ուժերի դեմ ուկրաինական ու լեհական ռազմիկների մաքառումից»³³:

Մեզ համար առանձնապես խրախուսիչ էին Լեհաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտական բաժանմունքից դոկտ. է. Տրյարսկու (Dr. E. Tryjarski) 24 փետր. 1959 թվակիր նամակի հետեւյալ տողերը.

«Ես ուրախությամբ ու մեծ հետաքրքրությամբ ծանոթացա Հովհաննես Կամենացու Պատմությանը, որ Գուք հրատարակել եք անցյալ տարի Պատմա-բանասիրական Հանդեսում: Անշուք ուրախ եմ տեսնելով, որ ներկայումս հայ գիտնականները ևս այդպես խոր կերպով հետաքրքրվում են Լեհաստանի պատմությամբ և մասնավորապես լեհական վաղեմի թագավորության սահմաններում ստվար թվով ապրած հայերի պատմությամբ: Հովհաննես Կամենացու Պատմության Ձեր կատարած հրատարակության մասին լեհ ընթերցողների համար ես գրել եմ մի հաղորդում, որը լույս կտեսնի լեհական արևելագիտական հանդեսում («Przegląd Orientalistyczny»)» և այլն³⁴:

Լեհաստանից հայագրի գիտնական Ս. Տոնիկիևիչը (S. Donigiewicz) ևս 26 հուլիսի 1960 թվակիր մի նամակով մեզ հայտնում էր, որ ծանոթանալով Պատմութիւն պատերազմին Խոթինու-ի ռուսերեն հրատարակությանը՝ այդ զնահատում է որպես թանկագին մի աղբյուր լեհական պատմության համար և անհամբեր սպասում է նրա հայերեն բնագրի հրատարակությանը, որպեսզի լեհերենի թարգմանի այն:

Այժմ, ինչպես խոստացել էինք արդեն ռուսերեն թարգ-

³³ История СССР (ամսագիր), Москва, 1959, № 5, стр. 170—172. Հեղինակն անում է մի քանի անճիշտ դիտողություններ, որոնց պատասխաններն արտացոլված են մեր նախորդ էջերում:

³⁴ Այդ սրբախոսությունը տ'ս՝ Przegląd Orientalistyczny, Warszawa, 1959, № 2 (30), s. 211—214. Հարգելի դատնախնի մոտ առաջ կլա՞ծ մի թյուրիմացությունն լուսարանությունը տես վերևում էջ 13, ծան. 21. նաև էջ 18, ծան. 32:

մանուսկրային հրատարակության առաջաբանում, տպագրության ենթ հանձնում «Պատմութիւն պատերազմին Խոթինու» երկի նաև հայերեն բնագիրը:

Ի դեպ՝ ուսերեն հրատարակության մեջ բաց էին թողնելով Պատմութիւն հեղինակի և ընդօրինակողների հիշատակարանները այն նկատառումով, որ դրանք չեն առնչվում գրքի պատմական նյութի հետ: Հայերեն բնագրի ներկա հրատարակությունն այդ տեսակետից բոլորովին լիակատար է:

Այժմ անհրաժեշտ ենք համարում բնագրի հետ կապված մի շարք լուսարանություններ ու դիտողություններ:

Ինչպես տեղեկանում ենք Հովհաննես Կամենացու հիշատակարանից, նա իր աշխատությունը շարադրել է դեպքերի թվականից 6 տարի հետո, 1627 թվականին¹: Այդ պատճառով էլ՝ եթե նա որոշ մանրամասնություններ գրի է առել որպես ականատես և անմիջական ականջալուր, ապա մնացած մասի համար, ինչպես նշեցինք արդեն, օգտագործել է գրավոր աղբյուրներ, այնպիսիներ, որոնք պատերազմին հաջորդող առաջին տարիներին մատչելի են եղել նրան:

Այս տեսակետից Հովհաննես Կամենացու Պատմությունը, որպես ժամանակակից գործ, իր անլիճելի արժանիքն ունի: Այդ նույն հանգամանքով էլ, սակայն, այս գործը կարող է ունենալ և որոշ թերություններ, այնպիսի թերություններ, որոնցից դերծ չէ ժամանակակից պատմական աղբյուրներից առհասարակ ոչ մեկը: Խոթինի 1621 թվականի պատերազմի դեպքերին վերաբերող տվյալների մասին բազմաթիվ կետերում ու հարցերում անհամաձայնություն է տիրում, օրինակ, ոչ միայն լեհական և թուրքական աղբյուրների ցուցմունքների միջև, այլ և լեհական ժամանակակից աղբյուրների միջև: Մ. Ա. Ալեքբերլին իր «Խոթինի պատերազմը (1621 թ.)» աշխատության մեջ պատերազմի պատմության աղբյուրների շարքում ամենից արժեքավորները համարում է Հակոբ Սորիեսկու և Մատ. Տիտլեսկու աշխատությունները, որովհետև

նրանց հեղինակներն ուղղակի մասնակից են եղել Խոթինի պատերազմին. իսկ նրանցից անմիջապես հետո՝ որպես ժամանակակից հայկական աղբյուրներ հաշվի է առնում Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խոթինու»-ն և Օբսեստի «Ժամանակագրութիւն»-ը³⁵: Այս երկու աղբյուրների մասին Ալեքբերլին խոսում է 1954 թվականին մեր հրատարակած հաղորդման³⁶ հիման վրա, և նշելով հանդերձ, որ «նրանց հրատարակումը հայտնի նշանակություն կունենա Խոթինի պատերազմի պատմության հետագա ուսումնասիրության համար», մատնացույց է անում երկու թերություն, որոնցից մեկը լեհական և թուրքական բանակներում կուլոդ գործի թվերի ոչ ճշգրիտ գնահատումն է, իսկ մյուսը՝ թաթարական հորդանների ղեկավարների որոշ անունների ազգավազումը: Ալեքբերլին հավանաբար կարող էր մատնանշել ուրիշ թերություններ ևս, եթե հայկական բնագրերը հրատարակությամբ իրեն մատչելի եղած լինեին: Բայց խնդիրը նրանում չէ: Նմանօրինակ կամ այլ կարգի թերություններ Ալեքբերլին մատնանշում է լեհական վերոհիշյալ աղբյուրներում ևս: Սորիեսկու աշխատության մասին խոսելիս Ալեքբերլին ասում է, որ նա ունի «մի շարք էական թերություններ», գտնելով որ, օրինակ, «այստեղ կան իրերամերժ շատ գրույթներ ինչպես թուրքերի ռազմական հղորդության, այնպես էլ Խոթինի մոտ եղած լեհ-կազակական զորքի ղրույթյան գնահատման հարցում»³⁷. Իսկ Տիտլեսկու երկի մասին ասում է. «Մատ. Տիտլեսկու հաղորդած տվյալներից շատերը մեզ կասկածելի են թվում», կամ՝ «անհրաժեշտ է խիստ քննադատորեն մոտենալ նրա հաղորդումներին» և կամ՝ «հեղինակը միանգամայն երևակայական թվեր է բերում կուլոդ երկրների գործի վերաբերյալ» կամ թե «նա անիրական տվյալներ է բերում նաև կուլոդ կողմերի կորուստների մասին»³⁸: Ուրեմն՝ Ալեք-

³⁵ М. А. Алекберли, „Хотинская война (1621 г.)“, Черновцы, 1957, стр. 10—12.

³⁶ Տես ժողովածու „Великая дружба“, стр. 225—238.

³⁷ М. А. Алекберли, стр. 8.

³⁸ Там же, стр. 9—10.

¹ Տես ներկա հրատարակության մեջ, էջ 80:

բերլին գտնում է, որ այսպես է նաև լեհական ամենակարևոր աղբյուրների վիճակը, և եթե այդպես է՝ ապա զարմանալի չէ, որ հայկական աղբյուրները ևս ունենան որոշ թերություններ, բայց կասկած չկա, որ մեր աղբյուրները ժամանակակից ուրիշ աղբյուրների հաղորդած տեղեկությունների ստուգման, ճշտման ու լրացման համար կունենան կարևոր նշանակություն:

Մեր կարծիքով Հովհաննես Կամենացու «Պատմություն պատերազմին խոթինու» աշխատության մեջ ուշադրության առավել արժանի հանգամանքը ժամանակագրական կարգի խանգարման փաստն է, մի երևույթ, որը կմնար աննկատելի՝ առանց ուրիշ աղբյուրների հետ համեմատության: Հովհաննես Կամենացու մոտ խոտինյան ղեպքերի առնչությամբ ամսաթվերի նշանակումն սկսվում է 1621 թ. օգոստ. 14/24-ին, երեքշաբթի օրով, արքայորդի Վլադիսլավի խոտին ժամանմանը վերաբերող տեղեկությամբ³⁹, այնուհետև՝ թեպետ մի քանի տեղ ևս ամսաթվեր և կամ միայն ամսանուններ նշանակվում են⁴⁰, բայց ղեպքերի ժամանակագրական ընթացքը հիմնականում նշվում է սոսկ օրերի հաջորդականությամբ⁴¹: Սակայն եթե շարունակենք ամսաթվերը կանոնավոր կերպով նշանակել ըստ օրերի հաջորդականության (սկսելով վերոնշյալ օգոստ. 14/24-ից), ապա կտեսնենք, որ պատերազմի վերջին օրը կրնկնի սեպտ. 4/14-ին, երեքշաբթի, մինչդեռ

³⁹ Տե՛ս ներկա հրատարակության մեջ՝ էջ 47: Մեր հեղինակն, իհարկե, գործածում է միայն հին տոմարը:

⁴⁰ Այսպես՝ «Ի ժՁ աուր օգոստոսի ամսոյն» (գլ. 2, 1-ին պարբերություն), «Յաուր շարաթու, օգոստոսի ժԸ» (գլ. է, 1-ին պարբ.), «Ի Իկ օգոստոսի, երեքշաբթի օրն» (գլ. Ը, 8-րդ պարբ.), «Ի շոբեքշաբթի աուր օգոստոսի» (գլ. Ք, 1-ին պարբ.), «Ի կիրակէի աուրն օգոստոսի» (գլ. Ք, 6-րդ պարբ.), «Երկուշաբթի աուրն օգոստոսի» (գլ. Փ, 1-ին պարբ.), «Ի հինգշաբթի աուրն օգոստոսի» (գլ. ԺԱ, 1-ին պարբ.), «Ի շաբաթի օր սեպտեմբերի» (գլ. ԺԱ, 4-րդ պարբ.):

⁴¹ Օրինակ՝ «Ի միում աուր շոբեքշաբթոջ» (գլ. Ե, 5-րդ պարբ.), «Ի սկի կիրակէի և յերկուշաբթոջ աուր» (գլ. է, 3-րդ պարբ.), «Ապա յետ երկուց աուրց» (գլ. է, 4-րդ պարբ.), «Ի հինգշաբթի օր դարձեալ» (գլ. Ք, 4-րդ պարբ.), «Թրբաթ և շաբաթ նոյնպէս» (գլ. Ք, 5-րդ պարբ.) և այլն:

հայտնի է, որ պատերազմի վերջին օրը սեպտ. 18/28-ն է, երեքշաբթի: Այսպիսով պարզ է, որ Հովհաննես Կամենացու մոտ ղեպքերի ամբողջական ընթացքի մեջ ժամանակագրական տեսակետից ուղիղ երկու շաբաթվա մի բաց է գոյանում:

Հովհաննես Կամենացու մոտ ժամանակագրական այս թյուրիմացությունը ծագում է Օքսենտի ժամանակագրությունից, որին հետևել է նա ղեպքերի օրագրության մեջ: Բայց Օքսենտը սկզբում միայն մի անգամ է նշել ամսաթիվ, այն է՝ 1621 թ. օգոստ. 13/23, երկուշաբթի, արքայորդի Վլադիսլավի Կամենից ժամանմանը վերաբերող տեղեկությամբ⁴², իսկ այնուհետև ղեպքերի ամբողջ նկարագրությունը նա սովել է միմիայն հաջորդական օրերով՝ առանց ամսաթվերի: Այդ ամբողջ ընթացքի մեջ Հովհաննես Կամենացու երկր հետևելով Օքսենտի ժամանակագրությանը՝ որոշ տեղերում ցույց է տալիս օրանունների կողքին ժամանակագրական լրացումներ՝ որպես ճշտում, որոնցով, սակայն, ղեպքերի ժամանակագրությունը փաստորեն ոչ թե ճշտվել է, այլ խանգարվել: Այսպես՝ 2 գլխից սկսած «օգոստոս» ամսանվան հետ միասին նշված օրաթվերն արդեն սխալ են, իսկ Թ գլխի 6-րդ պարբերության, Փ գլխի 1-ին պարբերության և ԺԱ գլխի 1-ին պարբերության մեջ նշված «օգոստոս» ամսանունը ևս պարզապես՝ սխալ է թե՛ հին և թե՛ նոր տոմարով, որովհետև այդ պարբերություններում հիշատակված ղեպքերը հաստատ տեղի են ունեցել սեպտեմբեր ամսում՝ թե՛ հնով, թե՛ նորով:

Այդ լրացումները նույնիսկ Հովհաննեսի՝ կողմից են կատարվել, թե նրա երկի ընդօրինակողներից մեկի, ասենք՝ Սարգիս զպրի կողմից, որն այդ երկի աղավաղված բնագիրը վերականգնելու աշխատանքներ է կատարել: Մեր կարծիքով դժվար է հաստատ բան ասել այդ մասին: Միայն փաստ է այն, որ ղեպքերի ընդհանուր ընթացքի մեջ երկու շաբաթվա նույն բացը կա նաև Օքսենտի մոտ, թեև այստեղ առաջին հայացքից դա չի նկատվում այն պատճառով, որ Օքսենտը ամսանուններ չի գործածել:

42 «Կամենից», էջ 93:

Օտար աղբյուրների հետ համեմատությունը հնարավորություն է տալիս պարզելու Օքսենտի և նրան հետևող Հովհաննեսի մոտ եղած թյուրիմացությունը և ուղղելու ու վերականգնելու իսկական ժամանակագրությունը: Այդ նպատակով մենք օգտագործեցինք Հ. Տրետիակի «Պատմություն Խոտինի 1621 թ. պատերազմի»⁴³ հայտնի ուսումնասիրությունը, որը լեհական և այլ աղբյուրներից փաստական հարուստ նյութ է բովանդակում: Շատ արժեքավոր են, մանավանդ, այս գործի Հավելվածում հրատարակված վավերագրերից երեքը, որոնք պատերազմի ժամանակ լեհական բանակատեղում գրի առնելով փաստաթղթեր են և օրը-օրին նկարագրում են դեպքերը. գրանք են՝ Հակոբ Սորբենսկու մի նամակը, որը գրված է 1621 թ. սեպտ. 12/22-ին և ուղղված իշխան Զբարասկուն⁴⁴, մի անանուն «նկարագրություն խոտինյան արշավանքի»⁴⁵ և դարձյալ մի անանուն հեղինակի «Ստույգ հաղորդագրություն թուրքերի դեմ եղած այն արշավանքի մասին, որին մասնակցեց թուրքական սուլթանն ինքը՝ 1621 թ.»⁴⁶, Մենք օգտագործեցինք նաև Մ. Ա. Ալեքսեյևի «Խոտինի պատերազմը (1621 թ.)»⁴⁷ երկը, որի հաղորդած մանրամասն տվյալները հիմնված են լեհական և հատկապես թուրքական աղբյուրների վրա, և Հ. Համմերի «Պատմություն Օսմանյան Կայսրու-

⁴³ J. Tretiak, „Historia wojny chocimskiej 1621 r.“, Lwów 1889.

⁴⁴ „List z cyfer przelozony pana Jakóba Sobieskiego do xiązęcia Zbaraskiego pana koniuszego koronnego z obozu pod Chocimem 22 Septembris 1621 roku“, տես J. Tretiak, s. 204—208. *Նույնը տես նաև* E. de Hurmuzaki, suppl. II, vol. II, doc. CCXXXIII.

⁴⁵ „Opisanie wyprawy chocimskiej“, տես J. Tretiak, s. 209—218.

⁴⁶ „Relacya prawdziwa o expedicye przeciwko Turkom, na której sam cesarz turecki był Ao 1621, woyska koronnego y W. X. Litte pod regimentem pana Karola Chodkiewicza W. X. Litte, które pod Chocimem 1e2. 1o.“, տես J. Tretiak, s. 219—229.

⁴⁷ М. А. Алекберли, „Хотинская война (1621 г.)“, Черновцы, 1957, стр. 75—112.

թյան»-ը⁴⁸, որը հետևում է թուրքական ու եվրոպական աղբյուրների:

Այս նյութերի հետ արված համեմատություններից պարզվում է, որ Օքսենտի և Հովհաննեսի մոտ եղած ժամանակագրական բացը պատերազմի ամբողջ պատմության ընթացքում՝ ի հայտ է գալիս երկու անգամով, յուրաքանչյուր անգամին մեկ շաբաթով:

Հովհաննես Կամենացու մոտ առաջին յոթնօրյա բացն ընկնում է Ե գլխի 4-րդ և 5-րդ պարբերությունների միջև և կազմում է օգոստ. 15/25—21/31 շրջանը: Այս առաջին յոթնօրյա բացը, սակայն, կարող է վեց օրով կրճատվել, եթե վլադիսլավի Խոտին ժամանմանը վերաբերող օգոստ. 14/24 ամսաթիվը համարենք անճիշտ, հաշվի առնելով, որ լեհական աղբյուրների համաձայն այդ իրադարձության օրը օգոստ. 20/30-ն է, երկուշաբթի⁴⁹. իսկ այդ դեպքում ժամանակագրական բացը կմնա միայն մեկ օր, որ է՝ օգոստ. 21/31-ը, երեքշաբթի: Ըստ երևույթին Հովհաննեսն ինքն էլ Օքսենտի ժամանակագրության ձեռագրի ներկայացրած հանգամանքներից նկատել է, որ այստեղ ինչ-որ մի բաց կա. այդ պատճառով էլ ուղեւորը նշած լինել, որ 5-րդ պարբերության մեջ նշված «չորեքշաբթի»-ն նախորդ պարբերության վերջում նշված օգոստ. 14/24-ի «երեքշաբթի»-ին հաջորդող օրը չէ, գրել է. «Եւ ապա ի միում աւուր շորեքշաբաթոջ» (և ոչ թե «ի միսում աւուր շորեքշաբաթոջ»): Այս շորեքշաբթին օգոստ. 22/սեպտ. 1-ի օրն է, երբ կազակների զորամասերը հասան լեհական բանակատեղը:

Երկրորդ յոթնօրյա բացն ընկնում է Ժ և ԺԱ գլուխների միջև և կազմում է սեպտ. 6/16—12/22 շրջանը: Իրոք՝ մինչև այստեղ պատերազմական դեպքերն անընդհատ հաջորդականությամբ նկարագրվելուց հետո հանկարծ, ինչպես հաստատվում է օտար աղբյուրների համեմատությամբ, կանգ են

⁴⁸ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman depuis son origine jusqu'à nos jours“, trad. de l'allemand par J.-J. Heller, t. VIII, Paris, 1837, p. 275—282.

⁴⁹ J. Tretiak, s. 119, 211.

առնում սեպտ. 5/15-ի շորեքշաբթի օրվա դեպքերով. իսկ այնուհետև, մի ոստյուն կատարելով, սկսվում է նկարագրությունը լեհական բանակի այն հարձակման, որի ժամանակ սպանվեց Ալի փաշան, սեպտ. 13/23-ի հինգշաբթի օրը:

Նկատի ունենալով, որ Հովհաննեսի մոտ եղած ժամանակագրական այս բացերն Օքսենտի ժամանակագրության բնագրից են գալիս, կարելի է այդ բացատրել նրանով, որ Օքսենտը հավանաբար առաջին յոթնօրյակի ընթացքում լեհական բանակատեղում չի եղել և միայն պատերազմական գործողությունների նախօրյակին է հասել այնտեղ, այն է՝ օգոստ. 22/սեպտ. 1-ի շորեքշաբթին, և այդ օրվանից է սկսել օրագիր պահել: Գուցե և հենց այդ պատճառով էլ ճշգրիտ չէ արքայորդու Կամենից և խոտին ժամանման մասին նրա տված ամսաթիվը, բանի որ, ինչպես արդեն ասացինք, լեհական աղբյուրներն այդ ամսաթիվը վեց օրով առաջ են շարժում: Իսկ երկրորդ յոթնօրյակի շրջանում նա, — եթե չենթադրենք, որ թերթ կամ թերթեր ընկած լինեն նրա օրագրությունից, — հավանաբար բացակայել էր բանակատեղից, որով միայն սեպտ. 13/23-ի հինգշաբթի օրն է վերսկսել հետևել դեպքերին:

Ինչ էլ պատահած լինի՝ բոլոր դեպքերում այսպիսի վիճակում է, որ 1627 թվականին Օքսենտի ժամանակագրության ձեռագիրն ընկել էր Հովհաննես Կամենացու ձեռքը, երբ վերջինս շարագրում էր իր «Պատմություն պատերազմին խոթինու» երկը:

Ինչպես կարելի է տեսնել ներկա հրատարակությունից՝ բնագրի մի շարք մասերում կան լեզվական նկատելի աղավաղումներ, որոնք հավանաբար առաջացել են ընդօրինակումների ժամանակ, սրովհետև, ինչպես ասացինք արդեն, Մատենադարանի № 2644 ձեռագիրը, որից կատարում ենք մեր հրատարակությունը, Հովհաննես Կամենացու երկի առնվազն հրորդ ընդօրինակումն է: Կարծում ենք, որ եթե որոշ վրիպումներ հնագույն ընդօրինակող Սահակ գրչից են, ապա նրանց մեծ մասը գալիս է Սարգիս դպրից, որը 1791 թվականին այս աշխատության «խիստ աղաաղ» և «ամենևին

այլալեհալ» բնագիրը վերականգնելու համար մեծ աշխատանք է կատարել: Առանց տարակույսի նրանից է, օրինակ, ժԲ գլխի 6-րդ պարբերության մեջ սալերի պատրաստման կապակցությամբ գործածված «լուծել կամ լծել» տարակուսական արտահայտությունը: Նա չի կարողացել որոշել՝ եղծված բնագրում բառը լուծե՞լ է եղել, թե լծել: Սարգիս դպրից է, անտարակույս, նաև Զ գլխի 4-րդ պարբերության մեջ հիշատակվող թաթարական խանի աղավաղված անունը՝ Խան-Գերիչ, որը մեր կարծիքով պետք է լիներ Խան-Գերի: Իսկ այնպիսի վրիպումներ, ինչպես օրինակ գաղղալան՝ փոխանակ գաղղալան-ի (պարզապես տառաձևերի շփոթմամբ), կարող են և կատարված լինել վերջին ընդօրինակող Քաղեսու Միհրդատյանցի կողմից:

Բնագրի այն ընթերցումները, որ մենք ընդօրինակողների գրչի տակ առաջացած աղավաղումներ ենք համարել, իջեցրել ենք տողատակ, իսկ բնագրում դրանք ուղղել ենք:

Պետք է ասել, որ վերջին ընդօրինակող Քաղեսու Միհրդատյանցն էլ ընդօրինակության ընթացքում բնագրի վրա կատարել է որոշ լրացումներ՝ նախադասության միտքը քերականորեն ճիշտ և հասկանալի դարձնելու համար, ինչպես, օրինակ, Զ գլխի 4-րդ պարբերության մեջ «անկան ի պատերազմին» բառերը, որոնք իրոք անհրաժեշտ են: Քաղեսու Միհրդատյանցի այդպիսի լրացումները, որոնք արդեն կոր փակագծերի մեջ էին առնված, մենք պահել ենք: Բայց նրա այնպիսի լրացումները, որոնք լսի բացատրական բնույթ էին կրում, հապավել ենք:

Բնագրում պատահող ուղղագրական մասեր վրիպումները մենք ուղղել ենք առանց նշում կատարելու այդ մասին. օրինակ՝ բարբառել-ը դարձրել ենք բարբառել: Նաև ուղղագրական այլաղանությունները ենթարկել ենք ընդհանուր սխտեմի, առանց նշում կատարելու այդ մասին. Յակոբ-ը դարձրել ենք Յակոբ: Նույնպես ենք վարվել նաև օտար բառերի և անունների ուղղագրության հարցում:

Քերականական որոշ անճշտություններ ուղղել ենք, երբ այդ հնարավոր է եղել առանց բնագրի տեսքը խախտելու, և

այդ դեպքում գործածել ենք անկյունավոր փակագծեր. օրինակ՝ ի օժանդակութենէ—ի [յ]օժանդակութենէ:

Անկյունավոր փակագծեր ենք օգտագործել նաև, երբ հարկ է եղել բնագիրն ուղղել լրացումներով. այսպես՝ Ժ գլխի 2-րդ պարբերութեան մեջ «ուղարկեն զպատգամաւոր այրն Պատիստային»-ը դարձրել ենք «...[ընդ որդոյն] Պատիստային». ԺԱ գլխի 7-րդ պարբերութեան մեջ «կալեալ զՊատիստայն»-ը դարձրել ենք «...զՊատիստայի [ի]ն [որդին]»:

Բնագրի որոշ տեղերում որպես ենթակա օգտագործված էր զօր հայցական ձևը՝ հոգնակի ուղղական ուրբ-ի փոխարեն: Նկատի ունենալով, որ այդ ձևը մտքի տեսակետից թյուրիմացություններ էր ստեղծում, և մանավանդ համարելով, որ քերականական այդ շեղումը հավանաբար ընդօրինակողներից էր դալիս, մենք զօր-ը իջեցրել ենք տողատակ, իսկ բնագրի մեջ տեղադրել ենք ուրբ ձևը: Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ենթակային պատկանող հոլովի խախտման այս դեպքը առկա է նաև բնագրի վերծանող Սարգիս դպրի հիշատակարանում՝ «...ընդօրինակեցեալ եղև զայս պատմութիւն», տես ներկա հրատարակութեան մեջ, էջ 83:

Մենք ամսաթվերի և օրանունների սխալ նշումները հանել ենք բնագրից և իջեցրել տողատակ: Իսկ մեր կատարած ժամանակագրական ճշտումներն ու լրացումները մուծել ենք բնագրի մեջ՝ անկյունավոր փակագծերով ու հավասարութեան նշանով, և թվանշաններն ու ամսանունները նշել՝ շղատառով. օրինակ՝ [=3/13 սեպտ.]:

Պահել ենք հեղինակի գործածած ուղղագրական սիստեմը, որն այժմյան արևմտյան սիստեմն է, ինչպես տեսնում ենք մի շարք օտար բառերի և հատուկ անունների ուղղագրությունից. պալթանի (بالتهجى), պալրախ (پیراق), բր-գալապ (párcálab), Ռառուլ (Radul), Գորեցքի (Korecki), և այլն:

Մենք «Պատմութիւն պատերազմին Խոթինու» երկի ինչպես բնագիրը, այնպես էլ նրա հեղինակի արձակ և շափածո

հիշատակարանները տալիս ենք կորպուս տառերով, իսկ ընդօրինակողների հիշատակարանները՝ պետիտով:

Բնագրի վրա նշանակված աստղանշերը ցույց են տալիս տողատակի նշումները, այն է՝ հեղինակի օգտագործած վկայությունների աղբյուրները և ձևագրի այն ընթերցումները, որոնք մեր կողմից, որպես սխալ կամ աղավաղում, հանված են բնագրից կամ բնագրում փոխարինված են ուղիղ ձևերով: Իսկ արաբական թվանշանները ցույց են տալիս մեր ծանոթագրությունները, որոնք տեղավորված են բնագրի վերջում:

Մեր ծանոթագրությունները լայն նպատակ չեն ընդգրկել: Կանգ ենք առել գլխավորապես պատմա-բանասիրական նըշանակութուն ունեցող կետերի վրա: Լեհական և այլ օտար աղբյուրների ընձեռած տվյալների համեմատությունը մենք օգտագործել ենք հիմնականում ժամանակագրական հարցերի պարզաբանման նպատակով. անհրաժեշտ ենք համարել բնագրական փոքր ի շատե մանրամասն համեմատություն կատարել միայն Օբսենտ Կամենացու հայ-կոմաներեն ժամանակագրության հետ, հաշվի առնելով, որ այդ երկը Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խոթինու»-ի հիմնական աղբյուրն է:

Թյուրիմացությունների տեղի շտալու համար մեր առաջաբանում, «Պատմութեան» բնագրում և ծանոթագրություններում՝ նպատակահարմար ենք համարել ամսաթվերը նշել միաժամանակ հին և նոր տոմարով, նկատի ունենալով, որ մեր հայկական աղբյուրները գործածում են հին տոմարը, իսկ օտար աղբյուրները՝ նոր տոմարը:

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

**ՊԵՏՄԱՌԹԻԻՆ ՊԵՏԵՐԱԶՄԻՆ ԽՈԹԻՆՈՒ,
Ի ԺԵՄՇՆԵԿՍ ՍՈՒԼԹԸՆ ՕՍՄԸՆԻՆ ՏԵՃԿԸՅ,
ԵՒ Ի ԿԸԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԸՆ ՀԸՏՈՑ
ՄԵԼՔԻՍԵՂԻ ՍՐԲՈՑ ԷԶՄԻՇԾՆԻ**

ԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՆ ԳՐՈՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԽՈԹԻՆՈՒ, ՈՐ ԵՂԵԻ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՓԱՇՏ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ ԱՐՔԱՅԻՆ, ԻՎԱՆԱՅ, ԱՅՍԻՆՔՆ ԼԵԶԱՅ, ԶԻԿՄՈՒՆԳԻ ԵՐՐՈՐԳԻ, Ի ՁԵՌՆ ԱՄԲԱՐՇՏ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՐՔԱՅԻՆ ՏԱՃԿԱՅ ՓՈՔՐ ՕՍՄԱՆ ԿՈՉԵՑԵԼՈՅՆ: ԱՐԱՐԵԱԼ ՌԻՄԵՄՆ ՅՈՎԷԱՆՆՈՒ ԱՆԻՄԱՍ շԵՏԵՌՈՂԻ, Ի ԽԵԿՐՈՑ ՀՕՐ ԻՐՐՈՒՄ ՏԷՐ ՅԱԿՈՒ ԲԱՐԵՍԷՐ ՔԱԶԱՆԱՅԻ, ԵՒ Ի ՊԱՐՄԱՆՍ ՀԱՄՕՐԷՆ ՀԱԻՍԱՏԱՅԵԱԼ ԵՂՔԱՐՅ

Յերիս որոշմունս բաժանեալ երևիւր արհեստ վիպարանութեանց՝ իմացմամբ մտաց, տեսութեամբ աշաց, ի լուր լսելեաց:

Արդ՝ ի նախադրեալ հրիցս, ո՛վ Հայր պատուական, առաջինն վեհագունից է ծանօթութիւնն, քանզի իմացողական հոգի՝ զմարգարէականն գուշակէ զտեսակ, որ ոչ ամենեկին կարօտանային օգնութեան գրոց և նշանագրաց, այլ զհոգին սուրբ ունին մտավարժ, որ զամենայն նկարագրէր զխորհուրդ ի սիրտս նոցա, որք՝ բարբառեալ բանիւ վերապատմէին զեղեալսն և զոչ գոյացեալսն անստուերաբար տեսչութեամբ, այլեայլ լեզուօք

* Ձեռագրում՝ զոր:

առանց ուսանելոյ յումեքէ, ըստ որում գրէ Պօղոս թէ՛ Նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս աւետարանիչս*, այլ ոչ ամենեքեան արժանացան այնմ շնորհի. որպէս և կրկնէ յետագայ բանիւք, ո՛չ թէ ամենեքեան մարգարէք իցին կամ թարգմանք, բայց որ տուանն ի վերուստ՝ վասն որոյ զաստուածայինսն աստուածայնոյն պարտ էր վերադրել ի փառս նմին:

Իսկ երկրորդն և երրորդն՝ ոչ այնչափ առաւել կատարելապէս, այլ մասնաւորաբար և նուաստազոյն քան զառաջինն. սակայն միևնոյն հոգի բաժանէ զբազմա- 229 պատիկ պարզևս առ ամենեսին. || որպէս և յոլովք ի նախնեացն մերոց զօրացեալք նովաւ ընթացան զհետ զանազան և ազգի ազգի շնորհաց, զի զոր ինչ ոք և ընկալաւ ի տեառնէ, ըստ վկայութեան առաքելոյն թէ՛ Ումեմն ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան, և այլն թէ նմին հոգւով**։ Ոմանք առաքելութեանց ցանկացան, և ոմանք իմաստասիրական բանից հետեւեցան, բազումք քերականութեան և աստեղաշրջագայութեանցն ծանօթացան, և կէսք ժամանակագրութեանց և պատմաբանութեանց զփոյթն կալան, որք** մինչև ցայսօր պարապին նմին հանճարոյ, և այն*** ևս յերկար աշխատութեամբ և ի [յ]օժանդակութենէ միմեանց, զի մարմին եղծանելի ծանրացուցանէ զմիտս բազմահոգս, մինչ զի հազիւ նկատել կարեմք զայն՝ որ ինչ առ յոտս մեր է ըստ երրորդի բանին:

Իսկ զի իմ ոչ և եթ ունայն գոլով ի լաւագոյն շնորհաց բարձրագունից, այլ և ոչ վերջնոցն և հասարակացն բաւականանայր միտք տառապեալ բնութեանս, բայց զի հարկեցայ ի թախանձելոյ հանապազ ի ձեռն փութացուցանողական հրամանի տեառնդ իմոյ և երկիւղածութեամբ զաստիարակողի՝ Տէր Յակոբ քահանայիդ

* Եփես. Դ. 11:

** Հմմտ. Ա կոր. ժբ. 8:

*** Ձեռագրում՝ զար:

**** Ձեռագրում՝ զայն:

չառաքելութիւն, զյաղթանակ մարտի արքային Իլախաց յեղանակել ամփոփելով յայլմէ ցեղէ ի մերասերն լեզու, և այնքան՝ մինչ զի մոռացումն ետուր զբաղմանց կենցաղականիս, որ յարածամ զզուեն զիս հրապուրեալ ցնորիւք. զոր և ես նախապէս վարկայ զհնազանդութեամբ աշխատութիւնն՝ քան զհեղզութեամբ լռելն:

Որոյ վասն ի խոյզ իսկ եղեալ զտի զառն ումեմն պատուականի զգիր, որ անդ գոլով ականատես լեալ ամենայնի, մի ըստ միոջէ պատմութիւն արարեալ սոցին բանից ըստ պատշաճի իրին եղելոյ, կարճաոտ և ալլախօս բառիւք¹. նաև այլ ևս յոմանց յոլովից՝ որք առ ընդհանուրս համբաւեցին զլուր զովելի գործոյս այսորիկ, և զորս իմ եղեալ ծանօթ մասամբ իւրք իբր ծագիւ մատին նշուլից սմին խորհրդոյ:

230 ա || Ուստի թօթափեալ զտկարութիւնս իմաստից ժողովել մարթասցուք զչառաջարկեալ բանիցս հանդէս ուշիմ նպատակ առնելով զՅիսուս, զի տացէ մեզ տեղի և ժամանակ մինչ ի վախճան ելանել զղուզնաբեայ մատենիկս՝ թեթևացուցանել զսկիզբն յօժարութեան փոքրոգի լծոյս, և անսայթաք ուղևորիլ զհետ ճշմարտութեան՝ զուզահաւասարելով միմեանց բնագրացն օտարասեր ազանց, թէպէտ զժուարահաւաք և տաժանելի իցէ անօգուտ աշխատութիւնս:

Եւ աստ ոչ եթէ զջանից իմոց ցուցանեմ զքաջութիւն և կամ զպերճութիւն, զովութիւն, ունելոյ յումեքէ զիղծ, այլ սակս զերազանցելոյ գրոց և բանից ներգործեցելոց, յաղագս որոյ խոստացաքն կանխագոյն ըստ պատուասիրաբար հրամանիդ, թերևս տացուք զլրումն խնդրոյդ որդիականս հպատակութեամբ, զոր իմ այժմ ուշ եղեալ գրեցից ստոյգ կտակաւ, անյապաղ սկսեալ անտի, տաստի սկսանելն է արժան:

ՅԱՂԱԳՍ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՆ ԻՍՄԱՅԷԼԵԱՆ ԵՒ ՎԱՍԵ,
ԽՈՐՀԵԼՈՅՆ ՕՅՄԱՆԱՅ ՍՈՒԼԹԱՆԻ ԳԱԼ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ
ԻԱՆԱՅ, ՄՈՌԱՅԵԱԼ ԶՈՒՆՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՆ ԻՐՈՅ

Արդ՝ ի զօրանալ խուժադուժ ազգին Սարակինոսաց, որք* յետ հալածելոյ Սառայի զՀագար զաղախինն իւր յերեսաց իւրոց, զետեղեալ բազմացան յոյժ առ ընդհանուրս՝ յաջ և յահեակ սեպհականելով զամենեսին բստ ճշմարտապատում գրոցն, մինչ զի զերիցագոյն մասն տիեզերաց և զբազում վիճակս ազգաց խմբից աշխարհաց հնազանդեցուցեալ ընդ ձեռամբ՝ հարկատուք իրեանց արարին:

Որպէս զԱրարատնանն Մեծ և զՓոքրն, և զԲարելոսն հին և զԵգիպտոսն զառաջին, զԴամասկոս և զՊագեստին, զՎիրս և զԱղուանս, և զայլ յօլոսս, զոր այժմ տեղի տայ յերկարելոյ բանին տկարութիւն ոգւոյս, մանաւանդ զՅունացն ասեմ զբովանդակ տէրութիւնն, և զանյաղթելի կայսերացն Բիզանդիոյ հօր քաջութիւնն, որով** միանգամայն բարձին անանխայարար զբնաւին յոյս զօրութեան ի քրիստոսադաւան ժողովրդոցն, և զչորունս մոլորեցուցին ի կործանակիրթ կրօնս այսակրին և խարուսկին Մահմէտի, զոմանս դաւաճանող խոստմամբ, և զոմանս պէսպէս սաստիւք և սպառնալեօք, յորոց կատարեցաւ առ մեզ կանխադուշակ տեսութիւն մարգարէին՝ յասելն ողբալով ի վերայ Իսրայէլի, թէ՛ Ահա մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պըղծեցին զտաճար սուրբ քո*** և այլն: Եւ զի՞նչ է իմ յերկարելն զբազմաց գուշակեալ իրին շարարանութիւն, ուտիք առ ամենեսեան կարծեմ զոլ կատարելապէս ի նախնեաց վիպագրացն, զոր հաստատագրութեամբ հասուցին մինչ ի մեզ, և զներկայինսն միայն աղագայիցն

* Ձեռագրում՝ զոր:

** Ձեռագրում՝ զոր:

*** Հմմտ. Սաղ. 2Ը. 1:

31ա յանձն||արարին ի կամս, զոր և իմում նուաստութեանս հարկ եղև զրել զայժմուս սակաւութ:

Բայց ոչ բարուք զօգուտն հեթանոսաց, այլ իբրև յարանց յուսացելոց ի զօրութիւն իւրեանց, և զօրացելոցն ի պարտութիւն, քանզի դեռ ևս ոչ պակասեցան աւար հարկանելոյ զերկիր շարաբարոյ ազգն Իսմայէլի, այլ հանապազ իւրոխտան և մոմոան անյագարար իբր զվայրենամիտ գազան, տիրեալ տիեզերաց:

Յորոց մին ի սոցանէ իննևտասներորդ թագաւորեաց ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս, որ էր այր նենգաժէտ և ամբարհաւաճ, մանկագոյն տիօք և անկատար հասակաւ, զոր բստ առաջնոցն իւրոց անուանեալ Օսման սուլթան² որդի Ահմէտի, թոռն Մահմէտի. ուտի ժամանեալ լցաւ կտակ երգոցն բանից իմաստնոյն, զոր աւաղս և ողբս գրեաց ի վերայ քաղաքին, որում թագաւորն մանուկ է՝:

Այսպէս և ի ձեռն սորա բազում վիշտս և աղէտս եհաս ամենայն աշխարհի, զի ոչ այսու ամենայնիւ շատանայր՝ զոր ընկալեալ աւանդեցին նախնիքն իւր, այլ հետեեալ նոցին բարուց և գործոցն՝ լինիլ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան, բստ այնմ թէ՛ Ոչ կարէ ծառ շար բարի պտուղ բերել, և թէ՛ ի պտղոյ իւրմէ ծառն ճանաչի**:

Սա յերրորդ ամի տէրութեան իւրում սահմանեալ սերմանէ զխորհուրդ շարութեան ի սրտին, և հանապազ մախայր ելանել ի վերայ աստուածապաշտ աշխարհին Իլախաց, որ Սարմատ և Սարմատեանք կոչին, որք են ազգաւ Դաղմատք³, և դաւանութեամբ Հոմայեցուց, բնակեալք ընդ արևմուտս կոյս, և են սահմանակիցք Ալամանաց⁴ և Մաճառաց⁵, Պողտանաց⁶ և Ռուսաց որ Մոսկովք կոչին: Եւ արմատացաւ այս գործ շարութեան ի հոգի անիրաւ արքային այն, մինչ զի յանդգնեալ ան-

* Հմմտ. Ժող. Ժ. 16:

** Հմմտ. Մատթ. է. 18 և 20: Անդ, ԺԲ. 33: Դուկ. Զ. 43--44:

հանճարութեամբ, անկաւ յիրս անհաս[ս] և անկարելիս,
231բ կամելով բառնալ զտէ||րութիւնս Լեհաց, և ընդ բռամբ
ածել զամենայն բնակիչս սորա, խրամատելով զղաշինս
երզմանց՝ զոր ի վաղուց ժամանակաց հաստատեալ
ունէին ի միջի երկոցունցն սակս սիրոյ և հաշտութեան:

Ուստի կատարած գործոյն կորուստ անձին իւրոյ
նիւթեաց ըստ բանի ումեմն փիլիսոփայի, որ ասէ. եթէ
ոք ցնորեսցէ զցանկ հայրենեաց՝ հարցին զնա օձք
թունալիցք, զոր եթէ ժամանեսցուք յաւարտ խոստացե-
լոցս՝ զսորայն և ի տեղի իւրում շարադրեցից զդառնա-
գոյն մասն ի դարձի պատերազմին :

Այլ այժմ թողցուք մերոյ պատուիրողի և հրամա-
նատուի՞ կառուցեալ կարճոյ յոյժ սակաւուք ի յուլիցն,
զի մի՛ առաւելութիւն իրին ծանրացուցէ զլուրն:

Չեոյն բաճ դարձեալ կրկնէ ոտաճաւօ շափիւք առ նոյն,
արաւեալ Յովհաննէ՛ տամբք հնգետասանիւք:

Անեղն աստուած որ էնն անլոյժ՝

Անհաս մրտաց և անմատոյց,

Ձարմանալի գործով լըցոյց՝

Ձազգըս մարդկան այսրմ դարուց:

Ձոր Ամբակում իւրովն երգուց՝

Նախանձ էարկ կողմանց երկուց,

Եթէ զիա՛րդ ոչ միացոյց՝

Ձհամայն էակս որ գոյացոյց:

Այլ թէ զանարգս առոյգացոյց՝

Եւ ըզհնազանդն ոչ օգտեցոյց,

Եւ զընտանիսն արօտացոյց՝

.....

Ձամբարտաւանս արմատացոյց՝

Արբանեկաց կեանս ըզգեցոյց,

Եւ զմեծատունս ունայնացոյց՝

.....

Եւ այլ բազումք նրման սոցունց՝
Որ ի վերուստ տրւան յոգունց,
Հրաշատեսիլ զարմանացոյց՝
Ձոր մեզ թրւի առանց բարուց:

Բայց նա սորօք ըզփորձն եցոյց՝
Ամենեցուն որ զայս զատոյց,
Ձի զանհրաժեշտն ըզգաստացոյց՝
Եւ զիմաստունս ըզգօնացոյց:

Արգ դու ըզբանն ա՛ռ սպացոյց՝
Մարգարէին որ քեզ ծանոյց,
Թէ ո՛րչափ զանարգսն բարձրացոյց՝
Քան զԼիբանան ամբակատոյց:

232ա

|| Ապա յետոյ հարևանցոյց՝
Մինչ զի հետոցն լինել անցոյց,
Ձխոնարհագոյնըս մընացոյց՝
Ձխաղաղարարըս փափկացոյց:

Քեզ զաղափար այլ իմն ի գրոց՝
Առակ փրկչին որ վասն որոց
Ձնախկին լինելն ասէ հրրդնոց՝ (sic)
Եւ առաջինքն խոնարհ յետնոց:

Որպէս ազինք Հագարացուց՝
Որք աղախնոյ թրւին ծնընդոց,
Այժմ ի բարձունս թրուչին յօղոց՝
Թէպէտ նրման են անդընդոց:

Սակայն Ներսէս հայրըն հոգուց՝
Մեզ ընծայեաց յոյս խորհրդոց,
Եթէ հրգօրքն Դաղմատացուց՝
Աոցեն ըզվրէժս Մահմետացուց՝:

Ի սոցանէ ոմն ի վերջնոց՝
Կոչեալ Օսման ըստ առաջնոց,
Նրստեալ յաթորս Հոռոմոց⁸
Տիրէր բազում աշխարհայնոց:

Սա բարձրութեամբ կողմանց մերոց՝
Նեղեալ լինէր իբրև այսոց,
Յառնէ ի վեր նրման գայլոց՝
Յափըշտակել ըզփառս այլոց:

Յոյժ նախանձէր կողմանց մերոց՝
Բառնալ զազինս Սարմատացւոց,
Մինչ զայրացմամբ հանգոյն գետոց՝
Եհեղ զալիսն անդրէն յիւր ծոց:

Այլ ես հայցեմ սրբոէ խորոց՝
Զհոգին աստուած յոյսն արդարոց,
Մագեւ ըզլոյս շաւղացս հետոց՝
Մինչև ի կէտ խոստմանցս իմոց:

ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՍՆ ՍՊԱՌՆԱԼԵԱՅՆ ՈՒՂԱՐԿԵԱԼ ԹՂԹՈՅՆ ՕՍՄԱՆԱՅ ՄԱՆԿԱ-
ՀԱՍՍԿԻՆ, ԵՒ ԵՌՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՐՔԱՅԻՆ
ԻԼԱԽԱՅ, ԱՅՍԻՆՔՆ ԼԵՀԱՅ

Եւ ի կատարիլ ամաց կենարարին, որ առ մեզ յա-
ւելմամբ թուոց յարաբարդեալ հազար վեց հարիւր քսան
և միոյ, իսկ յարեթական վիճակն ցեղիցս Հայկայ, որ
ըստ համարոյ հինգհարիւրեկին՝ հազար և եօթանասուն,
և ի բռնութենէն Տաճկաց յառաջնոյն Մահմէտի և Քըղըր-
դայ մինչև ցայս վայր ժողովին ամբ՝ ինն հարիւր և
ութսուն⁹:

Առ այսու ժամանակօք վերակոչեալն Օսման՝ մինչ-
232բ զեւրնդ մակագաւիթ և լայնասփիոն տարածմամբ շո-
րեքին կողմանց, հրամայեալ խրոխտաբար իշխէր ազ-
գաց և ազանց, ուստի յզփացեալ յայնմ փարթամութենէ՝

կալաւ զնա ամբարտաւանութիւն, և անօրինաբար կազ-
մեցաւ զայլոցն ևս յափշտակել զժառանգ, որպէս զի
ամենեքումբբ յաեւուցու բաժինս մասանց խմբից աշ-
խարհաց ի ծոց իւր:

Վասն որոյ առաքէ պատգամաւոր հրովարտակս առ
քրիստոսասէր և փառաւոր արքայն Իլախաց անուա-
նեալն Երրորդ Զիկմունդ¹⁰. որ ո՛չ ըստ օրինի և սովորու-
թեանց թագաւորաց, այլ հեթանոսաբար զայրացմամբ,
սլիշտս և սպառնալիս խոստանալով, այսպիսի օրի-
նակաւ.

«Օսման՝ ողորմութեամբ միոյն աստուծոյ և օգնա-
կանութեամբ մարգարէիին իմոյ կայսր ամենայն Տաճ-
կաց, թագաւոր ի վերայ թագաւորաց և իշխան ի վերայ
իշխանաց, ի տանէ և ի գարմէ կարող և բարձր, յարմա-
տոյ տնկոյն Օսմանայ յառաջնոյ, հրամանատու և տէր
ամենայն ազգաց՝ Երրայեցւոց, Արաբացւոց, Եթով-
պացւոց, Մակեդոնացւոց, Միջագետաց Հայոց, Կիլի-
կեցւոց, Քանանացւոց, Ամորհացւոց, Պաղեստինացւոց,
Քաղղէացւոց, և այլոց բազմաց: Հաստատութիւն և խա-
ղաղութիւն հաւատոյն մըսուրմանայ¹¹, զոր եղև անվախ-
ճանելի պահապան գերեզմանին Մահմէտի, ցրումն և
գայթակղիչ համօրէն քրիստոնէից, հերքիչ և եղծիչ ներ-
հակաց, ահարկու և զարհուրեցուցիչ բովանդակ ազանց:

«Եւ այժմ քեզ ասեմ Զիկմունդի զըրայիդ Իլախաց,
և ամենեցուն որ ընդ քե ես, զի ծանեաք զձերում անմիա-
բանութիւն և զանմարդութիւն ընդդէմ մեր և բարկա-
ցաք յոյժ. և արդ պատրաստ լիջիք, զի ահա յարու-
ցեալ եկից ի վերայ ձեր, և զերկիրդ յորս բնակեալ էք
դուք՝ հրձիգ արարից, և զեկեղեցիսդ ձեր աւար հարից,
և զանուանեալն փայտ խաչի ընդ յերկիր կործանեցից,
և ի պարանոց քահանայից ձերոց եդից զլուծ ծառայու-
233ա թեան, և զամենեսին վարեցից ի գերութիւն ազգին
իմոյ, որպէս և այլոց քրիստոնէից հասուցին նախնիքն
իմ, և ապա տեսից թէ ի՞նչ կարասջիք զերծանիլ ի ձեռաց
իմոց, եթէ ոչ նախ եկեալ հնազանդեսջիք ինձ»:

Զայլ և բազում ևս նման սոցին գրէ բանս հրա-
ժեշտս և անպատշաճաւորս:

Զոր լուեալ հանճարեղ և մեծախորհուրդ թագաւորն
Զիկմունդ՝ զարմացաւ յոյժ ընդ լրբութիւն առն այնպիս-
ւոյ, և ապա յղէ խոնարհարար պատասխանիս առ նա,
քանզի ամենայն շար խորհուրդք ի խոնարհութենէ
սպառին, ըստ խրատու հարցն, և այս ոչ եթէ առ երկիրդ
անօրինացն, այլ զի արդար էր և երկնչէր յաստուծոյ,
վասն այն կամէր իմաստութեամբ շիջուցանել զաղտելի
խորհուրդ հպարտացեալ գոռոզին, և դադարեցուցանել
զանշափ հոսմունսն արեան անպարտ և անմեղ արանց,
և զրէ այսպէս.

«Ո՛վ ինքնակալ և հօօր արքայդ Օսման, ոչ է ար-
ժան մեծամեծաց և վեհազնեայ արանց զանախորժս
միմեանց գրել ծանուցումն, և դու ի քումմէ գերակա-
տար բարձրութենէդ զիա՞րդ համարձակեցար զայսպիսի
անյարմարս և յանդուգս խօսել, որ ոչ էր քեզ անկ. և
արդ տեղեկացիր և տես, զի բաւական է քեզ զոր ըմ-
բռնեալ ունիս զայդքան մեծութիւնդ ազգաց բազմաց. և
այժմ զգոյշ լեր յայտյանդիման խրոխտանացդ, և գի-
տեա հաւաստեաւ, զի մեք ի սնոտի սաստմանէ քումմէ
ոչ զանգիտեմք, միայն զերդմունսն հարցն մերոց, զոր
աւանդեալ յանձնեցին մեզ, ոչ կամիմք շփոթել վասն
կարևոր իրաց անցաւորիս, և պահեմք հաստատուն
մինչև ցայսօր անանցարար. սոյնպէս և դու ի քէն ընտ-
րեա զարժանն, ապա թէ ոչ, զոր հանդերձեալդ ես առ-
նել՝ արա՞ վազվազակի. բայց զոր ինչ և գտանիցես ի
մէնջ՝ զայն խնդութեամբ ընկալչիր. յայսմհետէ մեք
անպարտ եմք յայդմանէ օգտի վրդովմանցդ, արիւն ձեր
ի գլուխ ձեր եղիցի»:

Աստ ժԲ տուն ոտանաւոր կայր պատմաբար:

ՅԱԶԱԳՍ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՅ ՕՍՄԱՆԱՅ ԶԱՄԵՆԱՅ ԶՕՐՍ ԻՒՐ, ԵՒ
ԳԱԼՈՅՆ ՄԻՆՉԵՒ Ի ԳԵՏՆ ԹՈՒՆԱՅԻ

Յայնժամ իբրև ընթերցաւ զիմաստութեամբ պա-
տասխանիսն արքային Իլախաց, երկրորդ նաբուզողո-
նոսորն Օսման զայրանայ յոյժ լի տրտմագին ցասմամբ
առաւել քան զառաջինն, կոչէ առ ինքն զմեծամեծս և
զնախարարս իւր, զպետս և զգաւառակալս, զզօրս և
զզօրագլուխս, զդռնապետս և զզօրականս¹², և ասէ
ցնոսա ցասմամբ. Երթայք հանդերձեցէք ինձ այսր վաղ-
վաղակի զամենայն սպառազինութիւնս մարտից, զի
ահա կամիմ ելանել ի վերայ ապստամբ բնակչաց աշ-
խարհին Իլախաց, զի զամենայն զզօրութիւն նոցա խոր-
տակեալ բարձից յերկրէ:

Իբրև լուաւ զայս ոմն ի խորհրդականացն իւրոց, որ
նախնին ամենեցուն, կոչեցեալն միւֆտի¹³, յառաջ մա-
տուցեալ մեծաւ երկիրդիւ և ասէ. Ո՛ղջ լեր, ո՞վ ամենա-
մեծ և անյաղթելի կայսր. եթէ եգիտ ծառայ քո շնորհս
այսօր առաջի արքայիդ խօսել բանս սակաւս, և արդ՝
զի՞նչ փոյթ է քոյին անկարօտ մեծութեանդ այդպիսի
հակառակմունք աղմկաց և անօգուտ կորստենէ արանց
մերոց և օտարաց. միթէ ո՞չ ունիս բաւականապէս ընդ
լծով ծառայութեան քո այնչափ ազդ և ազինս. զայլս
և այլ բազում բանս ողորականս ասէր նմա. և նա ոչինչ
օգտեալ այնքան խօսից առն այնորիկ, այլ խոժոռեալ
զերեսս իւր անգոսնելով զնա և ասէ. Ի բաց գնա յինէն,
ո՞վ դու զառածեալ ալևոր, և այլ մի՛ երեւեցիս առաջի
աչաց իմոց, ապա թէ ոչ ահաւասիկ առաքեցից զքեզ ի
մետաղն՝ որ ոչ հլանիցես անտի մինչև յօր մահուան քո:
234ա Եւ գնաց այրն լի տրտմութեամբ յանդիմանեալ ի նը-
մանէ, և յայսմհետէ ոչ ևս կարէր համարձակիլ ոք կամ
իշխել յիշել ինչ վասն այնպիսի իրաց:

Ապա յետ այսորիկ արձակէ զբազումս ի դոնապա-
նաց¹⁴ և ի ծառայից իւրոց՝ բարձր հրամանաւ ի կայս և

ի կոչս կողմանս և յլորտս տիեզերաց երկարածիդ աշխարհին իւրոյ առ հեռարնակ զօրսն իւր, քարոզել և ասել. Այս ինչ յայտնի լիցի ձեզ ամենեցուն՝ որք երգ առկայացեալք հնազանդութեամբ ընդ իշխանութեամբ մերոյ. կամ եղև իմում թագաւորութեանս, զի ամենեքին փութապէս ընթացիւք յառաջեսջիք ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս՝ առանց ընդդիմութեան և հակառակելոյ:

Եւ ժողովեցան առ նա յաւուրսն այնոսիկ անթիւ բազմութիւն ժողովրդոց յոյժ յոյժ ոչ միայն հազարապետաց և գաւառապետաց հանդերձ հեծելագունդ զինուորաց, այլ և ուսակաց և շինականաց, քաղաքականաց և գեղջկաց, որք* և առհասարակ ժամանեցին անդ իբրև զմրրիկ յօգոյ, կամ որպէս զերամս ճայեկից:

Եւ իբրև ետես կատարեալ զամենայն կամս իւր Օսման, ապա հրամայէ բանալ զամենայն տունս գանձուց և զինուց, և պատրաստէ զբովանդակ կահս պատերազմաց, զզէնս և զասպարս, և բազում ջոկս ուղտուց և գոմշուց, զի կրիցեն** զզարհուրեցուցիչ զէնսն՝ որ թուի¹⁵ և թֆանկը¹⁶ կոչեն, և զանթիւ զանձս ոսկւոյ և արծաթոյ, զկերակուրս և զրմպելիս, և ո՞վ կարէ ճառել զբազմութիւն զօրացն անհաւատից:

Յայնժամ յարուցեալ գայ մեծաւ զօրութեամբ և աներկիւղ դիմօք մինչև ահարկու գետն՝ որ կոչի Քունա¹⁷, և զոր ի ճանապարհին և ի վերայ ջուրցն՝ թէ որպիսի՞ կամուրջս հնարեցին, այժմ երկարել ոչ կամիմ¹⁸, այլ զայն ի ծանօթութիւն լաւագոյն մտաց քննողիցն առնեմ ապաստան, զիտելով զասացեալն, եթէ առաւելութիւն բանից պատերազմող է լսելիաց:

* Ձեռագրում՝ զոր:

** Ձեռագրում՝ կրեցին:

ՅՅՂԱԿՍ ԳԵԱԼՈՅ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԵՂԱԵԱՅ ԽՈԹԻՆՈՒ

Իսկ բարեպաշտ արքայն Զիկմունդ՝ իբրև ետես թէ ոչ այլագունեաց զբարս իւր անիրաւն Օսման, այլ ըստ նմանութեան ազգաց իժից և քարբից մերձեալ է ի տարածանել զմահարեր թոյնս իւր ի թիկունս անմեղաց, յայնժամ յերեսներորդ շորրորդ ամի թագաւորութեանն իւրում, որ լեալ էր յառաջին տէրութենէն Իլխաց հազար եօթանասուն և մի ամ, առնէ աշխարհաժողով մեծ բազմայլով և տիեզերակոյտ քրիստոնէից գահաւորաց և տոհմակալաց, տէրանց և գաւառապետաց, հոգևորականաց և մարմնականաց, հրամայողաց և հնազանդելոց, ի թագաւորանիստ քաղաքն Վարշով¹⁹, և հրամայէ բերել զնամակն Օսմանին և ընթեռնու ի լուր ամենեցուն, և սկսաւ խօսիլ բանս միսիթարականս ի սիրտ իշխանացն, և քաջալերէ զնոսա ասելով.

«Ո՞վ տեսրբդ Իլխաց և հաւատարիմ սիրելիք իմ, այս բանք նման են Սենեքերիմայ արքային Ասորեստանեայց, զոր զրեաց երբեմն առ Եգիպտոս, նախատանօք նախատել զաստուած կենդանին, և խոստանայր դնել պարան ի պարիսպն Երուսաղէմի և քարշել տանել ի Բաբելովն:

«Եւ այժմ դուք՝ փառաւոր որդիքդ արքունի և ժառանգք հայրենեաց, յիշեցէք զգերահռչակ համբաւ գովելի գործոց նախնեացն ձերոց, թէ որքան զօրութիւնս, քանի քաջութիւնս, քանի յաղթութիւնս ընկալան ընդդէմ բազմազոյն ներհակաց օտար և ընտանի թշնամեաց՝ երբեմն ընդ Գրիժագաց²⁰ և երբեմն Շուետաց, երբեմն Սարակինոսաց և երբեմն Նետողաց²¹, և ստացան իրեանց անուն յափտենական և անջնջելի կտակ, որ մինչև ցայսօր յայտնապէս փայլին անմոռանալի յիշատա-

սաց, զի ամենեքին իբրև զկաթիլ մի ի դուլէ են, և որպէս զմէտ մի ի կշռոց՝ յաշս տեառն, և ոչ ոք ի հողեղինաց ապաւինելոց ի զօրութիւն իւր՝ կարող լիցի առնել ինչ, եթէ ոչ աստուծով զատեալ ընտրեսցի, մանաւանդ եթէ ուխտագրուծ և պատուիրանազանց ևս իցէ. քանզի տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց»:

Իբրև լուան զբանս զայսոսիկ ամենայն բազմութիւն զօրացն, աղաղակեցին առ հասարակ իւրաքանչիւր ի նոցանէ և ասեն. «Ողջ լեր, թագաւոր անյաղթելի, մեք ամենեքեան պատրաստ եմք ի մեռանել վասն անուան Քրիստոսի և ի պահպանութիւն հայրենեաց մերոց և եկեղեցւոյ սրբոյ, այլ և ոչ ևս այլոց ազգաց կամ թագաւորաց կարօտիմք օժանդակութեան, մինչև ոչ նախ զփորձ առեալ ծանիցուք անգամ մի և երկուս զզօրութիւն բարբարոսացն:

Արդ՝ եթէ կամ իցէ քում թագաւորութեանդ վեհագունույ, առաքեսցիք նախ զմեծ իշխանն մեր զհեթման Լիթեարին զկոչեցեալն Գարուլ խոտրելի²², զի երթեալ ընդ սահմանս Պուղտանաց պատրաստեսցէ մեզ տեղիք ըստ պիտոյից պատերազմաց, մինչ չև եկեալ իցեն անօրէն զօրքն Տաճկաց»:

Եւ էր խոտրելին այն՝ այր ճարտար և հզոր բանիւ և արդեամբք, վայելուչ հասակաւ և գեղեցիկ պատկերօք, լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն աստուծոյ, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ամենայն մրցական արիութեամբ ամս ՄԵ, մանաւանդ ի Մոսկով և յԱլամանս և ի Ֆլանտ և ի Մաճառս, որ ոչ սակաւ յաղթութիւնս մարտից ցուցանէր առաւել քաջութեամբն իւրով և ի պարտութիւն մատնէր զամենեսին:

Եւ իբրև հաճոյ թուեցաւ այս թագաւորին և ընդհանուր ժողովոյն, յայնժամ հտուն նմա զպատիւ սպարապետութեան և հաստատեն զզօրագլուխ ի վերայ համօ-
235բ րէն նախարհին Իլախաց²³. և ապա հտուն ի ձեռնն նորա զօրս հեծելագունդ զինուորաց արս իբրև երեսուն

հազար, որ և նա յառաջընթաց փութութեամբ եկն վաղվաղակի և եհաս յերկիրն Օլախաց²⁴ ի գիւղաքաղաքն Խոթին՝ յուլիսի Ժ, օրն երեքշաբթի²⁵ [=10/20 յուլ.], և անդ զտանէ տեղիս պատշաճաւորս առ ակն գետոյն, որ Նիստ[ր]²⁶ կոչն:

Եւ ապա բազմահնար հանճարիւք հաստատէ զբանակն ի բարձրավանդակ և անմատչելի տեղուոց, ըստ նմանութեան տէրունական առակին, որ ասէ թէ՛ Փորեաց և խորեաց, և եդ հիմն ի վերայ վիմի. ի յառնել հեղեղաց՝ բաղխեաց գետն զտունն և ոչ կարաց շարժել զնա, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր*:

Նոյնպէս և զբերզն խոթինու ի մէջ առեալ ընդ գլուխ բանակին, այսինքն, թապորին կամ օպոզին, և մտեալ բնակէր անդ ամենայն քաջօքն, ոչ բազում աւուրս մնալով զայստեան արքային և տեառն իւրոյ:

ԳՂԻՆ Ե.

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԱՐԲԱՅՈՐԴԻՈՅՆ Ի ԲԱՆԱԿՆ, ԵՒ ՎԱՍՆ
ԳԱՍՏԵԱՆ ԽԱԶՆԱՅՆ

Բայց զի խոհմն այն և արին քան զյուրովս ի թագաւորացն՝ քրիստոսասէր արքայն Զիկմունդ ընդ աւուրսն ընդ այնոսիկ մինչդեռ պարապէր ի հոգս այլոց հարկաւոր պիտոյից աշխարհին իւրոյ, որ և այնր ազագաւ ոչ կարաց ընթանալ առժամայն, վասն որոյ նախ արձակէ անդ զդեռաբողբոջ զաւակն և զթագաժառանգ անդրանիկն իւր զբազմերանեան Վլատիսլաւ²⁷ հանդերձ մեծամեծ նախարարօք և իմաստնագոյն խորհրդակցօք իւրոք, յորս էր գերագոյնն Գազանովսքի²⁸ և զարմանալին Վալիո գլուխ Ալամանաց²⁹, և ունէր ընդ իւր արս իբրև երկոտասան հազար³⁰: Նա և այլ ևս յուրից ազատագունդ հեծելոց և հետեակակոյտ զօրաց, որք փութաշաւիղ հետեամբ զիմեցին ի մայրաքաղաքն Իլով³¹, պնդեալք զմիմեանս արիական նախանձու, և ճակատա-

մարտ քաջութեամբ, պարունակեալ ահարկու զինուր և պարփակեալք փայլակնացայտ պողոպատիկ զրահիւր, 236ա զարդարեալ||ոսկիակազմ երիվարօք և գեղեցկայարմար մեծածախ կառօք, և այլ բազմապատիկ և երփնագունակ զանազան հանգերծիւք ըստ որակութեան ծաղկանց գարնայնոյ, մինչ զի ափշեալ հիացուցանէր զաշտ տեսողաց գեղեցկազարդ վայելչութիւն արանցն. զոր և իմում տրուպ նուաստութիւնս Յովհաննէս ներգեկեալ ոգի անդ գոլով՝ ականատես եղէ սքանչելատեսիլ փառացն այնոցիկ:

Ապա յետ քանի մի աւուրց ել անտի և զնայր. իսկ բազմութիւն քաղաքակցացն արձակեալ զկնի մեծաւ շարժմամբ և առ հասարակ ընթանային՝ ուղարկել ըստ արժանեացն պատուով զամէնօրհնեալն յաստուծոյ զարքայորդին Վլատիսլաւ. և ապա յայնմ օրէ պատուիրեն արքունական և իշխանական հրամանաւ քարոզել առ ընդհանուր աշխարհս Իլախաց, զի ամենեկիմբ դադարեցուցեն զպէսպէս ձայնս երաժշտականաց և նուագարանաց, քնարաց և թմբկաց, տաւրից և ամենայն ազգաց արուեստականաց, մինչև վերասցի ցասումն յերկրէ:

Եւ եղև իբրև լուեաց ամենայն անպատշաճ և սնտոխ խրախճանութիւնն, յայնժամ գիմեցին առ հասարակ ազգ և ազինք յիւրաքանչիւր յեկեղեցիս մեծաւ յուսով կարդալ առ տէր և կոչել յօգնութիւն ի նեղութեան, և այնքան առաւելան ի նոյն, մինչ զի ի գիշերի և ի տունջեան ոչ դադարէին երբեք հնչմունք զանզակաց, ձայնք աղաղակաց, երգ[ք] հայցուածոց, պաղատանք աղօթից, մատուցմունք պատարագաց, լուցմունք լապտերաց, զենմունք զուարակաց՝ ի քաղաքս, ի գեօղս, ի վանս, յանապատս և յամենայն շէնս մինչև ի [յ]օր վերջոյ պատերազմին:

Իսկ արքայորդին Վլատիսլաւ յետ վեց աւուր հասանէ ի յաստուածապահ քաղաքն մեր Կամենից³², և զիշեր մի օթեանեցաւ ի կլայն, և սպա ի վաղիւն իշխան քաղաքին և ամենայն ժողովուրդն, ևս առաւել ազգս Հա-

յոց մեծաւ պատրաստութեամբ ուղարկեցին զնա մինչև ի բերդն Խոթինու, որ կէսօրեայ ճանապարհաւ իբրև մնաց, լուաւ զօրավարն Խոտբեխչ, ել ընդ առաջ նորա ամենայն բազմութեամբ զօրօք, և յոյժ երկիւղածութեամբ և սիրով ողջագուրեալ զմիմեանս մտանեն ի 236բ բանակն||օգոստոսի ԺԴ, օրն երեքշաբթի³³ [=14/24 օգոստ.]:

Եւ ապա ի միում աւուր շորեքշաբթոյ [=22 օգոստ./ 1 սեպտ.] զայ հասանէ զօրագլուխն Ռուսաց՝ անուանեալն Պորոտաւքա, և ընդ նմա Խն հազար հեծեալս Խազախաց, որ կոչին Զափորոհցիք. և ի ճանապարհին հանդիպեալք զօրուն Թաթարաց և Տաճկաց, և արարին ընդ նոսա մեծ պատերազմունս զաւուրս ութ, մինչև սպանին զփաշայն Սիլիստրէի Հիւսէին անուն, և զայս բազումս³⁴:

Իսկ անօրէնքն ոչինչ այսպիսի կարացին առնել, բայց միայն հազարապետի ումեմն՝ կոչեցեալ Սահայտաչնի վէրս ուժգինս հասուցին յոտսն, և զայն առանց վնասու. և զի շորս հազար Խազախ ի սոցանէ ուղարկեալ էր զօրավարն ի հեռագոյն տեղուց վասն աւարի, այնք ոչ ևս կարացին դառնալ, քանզի ի վերայ հասեալ անօրէն ազգն Տաճկաց, և անդ կոտորեցին զնոսա առ հասարակ, զոր յետոյ ամենայն զօրքն վրէժխնդիր եղեն ի վերայ Պորոտաւքային, որ և զայս յիւրում տեղուց գրեցից:

ԳԼՈՒԽ 9.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ՕՍՄԱՆԼԻ Ի ԽՈԹԻՆ, ԵՒ ԶԿԻՒՒ ԹԱԹԱՐ
ԽԱՆԻՆ] [ԵՒ] ԽԱՆ-ԹԱՄԱՆԻՐԻՆ

Ապա ի ԻԳ աւուր^{**} օգոստոս ամսոյն [=23 օգոստ./ 2 սեպտ.] եկն Եհաս ամբարիշտ արքայն Տաճկաց Օսման ի սահմանս Խոթինու, և ընդ նմա զօրք բազումք հե-

³² Զեռագրում՝ ուրբար:

³³ Զեռագրում՝ ապա ի ձգ աւուր:

ծեալք և հետևակք անթիւ և անհամար³⁵, որք էին առաւել քան զբազմութիւն քրիստոնէից տասնապատիկ յաւելուածովք, և իջևանեցաւ հանդէպ բանակին Իլախաց իբրև մղոնաւ մի հեռի, և սփռեալ տարածեցան ի վերայ երկրի ազգի ազգի վրանօք, մինչև առ հասարակ ծայրէ ի ծայր լցին զերեսս դաշտին. բերէին ընդ իրեանս և զահագնատեսիլ թոփերս երեք հարիւր համարով³⁶. Իսկ 237ա ի մէջ այնոցիկ կային շորեքտասան առաւել||մեծամեծք, որք հազիւ կարէին տանել և. և լուծք գոմշից, և այլք փոքրագոյնք քան զմիմեանս:

Եւ եղև իբրև դադարեցին ամենայն զօրք անհաւատիցն ի բանակն իրեանց՝ նոյնժամայն սկսան հնչեցուցանել զփողան և զթմբուկսն և զամենայն նուագարանս մարտից ի պատրաստութիւն ժողովրդոց, և այս ոչ հրամանաւ արքային իրեանց, զի եթէ որ կամեսցի՝ փորձեսցէ զանձն իւր ի հանդերձեալ գործն իւր:

Յայնժամ ելին ի Տաճկաց արք ժՌ, և առեալ զբազում թոփս ընդ ինքեանս գան մեծաւ բարկութեամբ ի վերայ քրիստոնէից, և սկսան հարկանել զբանակն. զայն տեսեալ զօրքն Իլախաց՝ ելին ընդդէմ նոցա արք հինգ հարիւր, և հանդիպեալք միմեանց սակաւ մարտակցութեամբ, բայց ոչ կատարեալ պատերազմաւ, այլ զի տեղեկացին զորպիսութենէ աղտեղի զօրացն մահմետականաց. և զի երեկոյացեալ էր ժամն, վաղվաղակի դադարեաց գործ պատերազմին:

Արդ՝ յայսմ սկսմունս խաղալեաց յերկոցունց կողմանց, նախ ի քրիստոնէից զօրաց արք քսան, իսկ անհաւատիցն երկոտասան միայն (անկան ի պատերազմին). և ապա յայնմհետէ ևս քան զևս գային և աւելուին զօրքն Տաճկաց, քանզի ի միւսում աւուր ուրբաթի [=24 օգոստ./3 սեպտ.] գայ հասանէ Խան-Գերի^{*37} խանն թաթարին, որ ունէր զօրս ճլՌ, և ընդ նմա ևս քան զինքն շարագոյն Խան-Թամուր մրգա նոյնպէս՝ ՉՌ արամբք,

և եկեալ իջևանեցան յետոյ բանակին Տաճկաց ի վերայ նոյն գետոյն, որ նիստր կամ Թուռլա կոչեն, և տարածեալ ասպատակ ամենայն կողմանց՝ ըմբռնեցին զընթացս ճանապարհացն, զի մի՝ ոք կարասցէ տանել դարմանս քրիստոնէից, որ և զբազումս գտեալ ի ճանապարհին, որք կրէին թագաւորորդոյն ռոճիկս, և երկուս կառս մեծամեծս աւելի պարութիւ ի պէտս թոփից և թըֆանկաց, և կալեալ զայն թաթարացն տարան պարզև արքային իրեանց, ուստի խնդութեամբ ընկալաւ և յոյժ շնորհակալ եղև նոցա: Յայնժամ հրամայեաց Օսմանն արուեստաւորացն իւրոց, զի փութապէս հաստատեսցեն 237բ կամուրջս ի վերայ գետոյն՝ վասն անցման || զօրացն, զոր մեծաւ ճարտարութեամբ և շտապով մինչև ցհինգ օրն պատրաստեցին յոյժ վայելուչ և ամրակառոյց. և ասեն թէ այլում ժամանակի ոչ որ կարող էր շինել զամ մի ողջոյն, թէպէտ ի փայտից էր: Ապա յետոյ ոչ բազում աւուրց անցանէ անօրէն մրգան Խան-Թամուր յիսուն հազար արամբ ի յերկիրն Իլախաց մինչև ի Լուպլին հնգետասան աւուր ճանապարհ, զբազում գաւառս և զանդաստանս խանձեալ ապականեաց սրով և հրով, և բազում աւարաւ և զերութեամբ դառնայր առ Օսման:

Եւ մինչդեռ անցանէր մօտ ի Կամենիցն՝ ժողովեալ բազում քաղաքակցաց և զեղջկաց, և շորս հարիւր այլ ևս Ալամանք, և ի վերայ հասեալ թաթարին՝ զսակաւ կոտորեցին, և զաւարս և զգերիս բազումս ազատեալ մուծին ի քաղաքն, ընդ որ բարկացեալ անօրինացն այրեցին զձալոց եկեղեցին, այսինքն զվանս Սրբոյ Լուսաւորչին, որ կառուցեալ կայ ոչինչ հեռի ի քաղաքէն, հանդերձ մերձակայ շինութեամբն. նոյնպէս և զՍուրբ Խաչին վերեն միայն, և ոչ զգմբեթն³⁸

Ապա յայնմհետէ լսեցէք զամենայն համբաւս պատերազմաց, որք լինէին յաւուրսն յայնոսիկ:

* Չեռագրում՝ խան-գերիչ:

ՅԱՂԱԳՍ ԳԱՆՅ ԶՕՐԱՅ ՏԱՃԿԱՅ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ԽԱՂԱԽԱՅ,
ԵՒ ԱՄՐՔԱԼԻՑ ԳԱՌՆԱԼՈՅՆ

Իսկ յաւուր շարաթու, օգոստոսի ԻԵ՝ [=25 օգոստ. /4 սեպտ.], յարուցեալ զօրք բազում Տաճկաց գան մեծաւ զօրութեամբ, և արձակին ի վերայ բանակին Լեհաց, յայն կողմ, ուր Խազախքն էին, և սկսան հարկանել ի հրարորբոք թոփից և ի թֆանկիցն մինչև ցիրիկունն, բայց ո՛չ զոք կարացին վնասել, զի բազում զգուշութեամբ ամրացեալք էին, և զթշնամիսն ի յերկիր թաւալէին. և զի Խազախ ազգն այն շատիմաց** և խո-
238ա բամանկ ևս են, վասն այն ոչ առժամայն || ելին արտաքս, մինչև երեկոյացաւ օրն, և ձանձրացան թշնամիքն ի յընթանալոյ զօրն հանապազ յայս կոյս և յայն կոյս:

Իսկ յիննևտասներորդ ժամն միաբանեալ զօրք Խազախացն ելին ախոյեան, և խաչակնքեալք զղէմս իւրեանց՝ սկսան հարկանել զայլազգիսն, մինչ զի ոչ ևս կարացին ծուծկալել, այլ շոքան յետս փախստեամբ. և նոքա զհետ մտեալ կոտորէին անխնայ յոյժ, զոր անթիւ ասնն զանկեալ դիակունսն, որ ծածկեաց զերեսս երկրի. և զի տարածամեալ էր օրն, դարձան մեծաւ յաղթութեամբ, ժողովելով զառ և զաւար, և զերկու պատուական թոփսն քարշեալ բերէին զկնի իւրեանց. և այսպիսի գործ քաջութեան ցուցին յաւուր յայմիկ զօրքն Խազախաց, մինչ զի ահ պատեաց զամենայն հեթանոսս, որ և թագաւորն Օսման ևս հանդերձ նախարարօքն առ յերկիրդի լեալ, ոչ սակաւ հոգայր և աւաղէր զկորուստ անշափ պատուական արանցն մահմետականաց:

Իսկ ի կիրակէի և յերկուշաբթոշ աւուր [=26—27

* Ձեռագրում՝ օգոստոսի ժը:

** Ձեռագրում՝ շատիմաց:

օգոստ./5—6 սեպտ.] ոչ ևս համարձակեցան ելանել ի մարտ, վասն զի դեռ ևս ապաշաւէին զանցեալ աւուր ահագին կոտորուածն:

Յայնժամ Օսմանն լի եղև բարկութեամբ, և տայ կոշիկ առ ինքն զնախիշխանն, որ ենիշար-աղասի կոշի, և երկաթի կապանօք առաքէ ի բանտ, և զերկուս փաշայից՝ զմիոյն ասէ հատանել զզլուխն, և զմին քսորէ ի պատուոյն, վասն զի սոքա խոստացեալ էին յառաջագոյն ի միում աւուր ջնջել և բառնալ զբանակն Լեհաց, և այժմ, ասէ, յայսբան աւուրս ոչինչ օգտիք, այլ և զբազումս ի զօրաց իմոց կորուսիք ի ձեռն անմարդի Խազախաց³⁹. և աստ կատարի բան մարգարէին որ ասէ թէ՛ Արտաքուստ մանկակոտորս արասցէ զնոսս սուր, և ի ներքուստ շտեմարանաց նոցա, անդ է արհաւիրք ահից՝:

Ապա յետ երկուց աւուրց [=28 օգոստ. / 7 սեպտ.] ելանէ քսան հազար արամբք իշխանն Բաբելացոց Մուստաֆա** փաշա⁴⁰ անուն և զայ նոյնպէս ի վերայ Խազախաց, բայց ի ծածուկ, զի մի՛ ոք գիտացէ, և յանկարծակի արձակեցան ի վերայ հետևակազօրաց քրիստոնէիցն || որք պահէին զճանապարհն արտաքոյ զրան բանակին, մինչ զօրքն զճաշն ուտէին արք երկու հարիւր. որք*** իբրև տեսին զբազմութիւն անհաւատիցն՝ դարձան ի փախուստ, և անօրէնքն զհետ մտեալ սպանին ի սոցանէ զայր ոմն պատուական, որ էր հարիւրպետ⁴¹, ընդ նմա այլ ևս յիսուն, բայց [զ]որ ձողն կրէր՝ կենդանի ըմբռնեալ տարան ընդ ինքեանս ի բանակն Տաճկաց, նոյնպէս և [զ]ձողն առին, որ թարգմանի տաճիկ լեզուաւ պայրախ⁴²: Զայն լուեալ զօրքն Լեհաց ելին փութանակի յարտաքս, և մարտուցեալ ընդ անհաւատսն՝ փախստական արարին, կոտորելով ի նոցանէ զարս երեսուն կամ աւելի:

* Հմմտ. Բ Օր. ԼԲ. 25:

** Ձեռագրում՝ միստէֆայ:

*** Ձեռագրում՝ զոր:

ՅԱՂԱԳՍ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՆ ՇԵՆԵԱՒԱԲԵՐՆ. ԵՒ ԿՈՏՈՐԵԼՈՅ
ՉԱՆԱԶԱՆ ԱԶԳԱՅՆ ՏԱՃԿԻՆ

Դարձեալ ի նմին աուր [=28 օգոստ. / 7 սեպտ.] միաբանեալք անհաւատիցն, և գումարեալ անթիւ զօրք հեծելոց յուրվագոյն աղանց, և այլք մերկամարմինք, և հերարձակք իբրև զկանայս, և Արարացիք, որք եկեալ էին ի Քաբելովնէ և յԵգիպտոսէ, աղաղակելով մեծաձայն՝ լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ⁴³, և այսպիսի ահարկու տեսչեամբ և լրբագոյն զիմօք ուղի անկեալ գային մինչև ի դուռն բանակին, անդ ուր փոքր զօրավարն⁴⁴ էր Լեհաց. և ի միւս դրանէն մեծ հեթմանն⁴⁵ Խոտքեիչ տեսեալ զգալուստ անօրինացն բարկանայ յոյժ, և կամէր մեծաւ զայրացմամբ ելանել ընդ առաջ խառնիճաղանձ ժողովոյն. իսկ դուռն զինուորացն, որք պահապանք էին դրան բանակին, իբրև տեսին զսրտմտութիւն առնն, ոչ ետուն թոյլ առժամայն ելանել ի մարտ, այլ հազիւ դարձուցին յետս բազում սղոքանօք:

Յայնժամ մեծ զաշղալան՝ Բոլոցքին⁴⁶ և հսկայա-
239 ա զինն||Շենեաւքին⁴⁷ իբրև երեք հազար արամբք, և հարիւրապետ մի ևս ի հեթմանին⁴⁸ զօրացն, հրամանաւ մեծ զօրաւարին⁴⁸ ելանեն ախոյեան մարտի, և կարգաւորեն զղասս հեծելոցն ամենայն պատրաստութեամբ ի հանդիպումն հակառակորդաց իրեանց. և ապա ամենայն բազմութիւնք հաւատացելոցն միաբան ամրացեալք, [կնքեալ] զղէմս իրեանց նշանաւ խաչին, կոշելով զանունն Յիսուսի յօգնութիւն՝ երեքկին կրկմամբ բստ օրինի քրիստոնէից, և միանգամայն արձակեցան մեծաւ զօրութեամբ ի վերայ թանձրախիտ և անհուն զօրացն Իսմայէլացոց, և հարեալ անցին ի միւս կողմն որպէս զկայծակն ընդ յեղեզսն, մինչև ոչ ումեք ունայնացան

* Ձեռագրում՝ զաշղալան:
** Ձեռագրում՝ ներմօճեն:

նիզակք ի խայթելոյ զօք. ի սպառել նիզակացն՝ գեղարդեանց դարձան առնուլ, և սկսան երկսայրի սուսերօք և փոքրագոյն թֆանկօք ինքնարորբօք ք և հրդեհեալ զամենեսին թօթափէին յերկիր առանց հոգւոյ. և այնքան խմբեցաւ պատերազմն, մինչ զի խառնակեալք՝ ոչ կարէր տեսանել այր զընկեր իւր:

Իսկ ամենադովելի տէրն Պերեժանու՝ պարոն Շենեաւքին հեծեալ ի ձի սուր հանդերձ ընկերակցօք իւրովք, և առեալ զաջոյ թև գնդին՝ գնաց կոտորելով անխնայարար, սկսեալ ի տասն ժամէ աուրն մինչև ցքսան ժամն, և այնչափ բեկէր և խորտակէր զթշնամիսն, մինչև առ հասարակ լցաւ դաշտն Խոթինու սատակեալ Տաճկօք, և բազումք վիրաւորք անկեալք ի մէջ արեանցն թաւալէին, զիզեալք յոյժ ի վերայ միմեանց իբրև զփայտ մայրեաց:

Նոյնպէս և երանելի զաշղալանն՝ Բոլոցքի, վստահացեալ ի զօրութիւն անձին իւրոյ և հետամղեալ բարկութեամբ մեծաւ, և քաջապէս մարտուցեալ դարձուցանէր զձախ թև գնդին, և ամիրայից և մեծամեծաց հատեալ զզուրիս յերկիր ընկնոյր, մինչև անկաւ ի մէջ բազմութեան հեծելոց. և մի ոմն ի զօրաց անհաւատից եհար գեղարդեամբ ի պարանոցն, զոր անցեալ ի ներքս սաղաւարտին և վէրս վնասակարս ետուր նմա. բայց ոչ առժամայն անկաւ յերկիր յերիվարէն, այլ դարձաւ

239 ր անդ||ըէն կենդանի ի բանակն:

Իբրև լուան զայս զօրք քրիստոնէիցն՝ ևս առաւել զայրացեալք դարձան և կոտորեցին զամենայն զօրս անհաւատիցն, մինչև դարձան ի փախուստ, և հազիւ՝* թէ ի հազարաց տասն զերծան. և ապա ժողովեալ զամենայն աւարս այլազգեացն՝ դարձան մեծաւ յաղթութեամբ:

Արդ՝ յայս մեծ և առաջին պատերազմին անկան ի

* Ձեռագրում՝ զաշղալանն:
** Ձեռագրում՝ և ան հազիւ:

զօրացն իլախաց ոչ բազումք, այլ երկու այր ի զինուորաց, և երկուսանք ի զինուորացն ծառայից.⁴⁹ Բայց ի հեթմանին զօրացն զձողն առին. նոյնպէս և բարեյազթ տէրն Բոլոցքի յետ հինգ ատուր աւանդէ զհոգին արիական մահուամբ ի փառս Քրիստոսի, խառնելով զարիւնն իւր ընդ արեան մարտիրոսացն, զի և պսակացն նոցին ժառանգակից եղիցի, ամէն:

Իսկ ի կողմանէ անօրինացն անթիւ բազմութիւնք սատակեցան, զոր ի գիշերին այնմիկ եկեալ անհաւատիցն լուցեալ լապտերօք ժողովէին զգիակունսն կոտորելոցն գլխաւորաց և ծանօթականացն, և առեալ տանէին, և մնացեալքն անկեալ կային կերակուր գէշ թըռչնոց երկնից և ամենայն գազանաց երկրի:

Այս եղև ի ձեռն նոյն Մուստաֆա փաշային՝ զոր վերագոյն յիշեցաք, ի ԻԸ օգոստոսի*, երեքշաբթի օրն [=28 օգոստ. / 7 սեպտ.]:

ԳՆՈՒՆ Թ.

ՅԱՂԱԳՍ ԵՒԱՆԵԼՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՑ ՀԱՆԱՏԱՑԵԼՈՅՆ Ի ՃԱԿԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ԵՒ ՏԱՃԿԱՑ ՈՐ ՈՉ ԻՇԵՆՑԻՆ ԵՒԱՆԵԼ ԱՄՆԵՆԻՆ

Յայնժամ ի շորեքշաբթի ատուր օգոստոսի [=29 օգոստ./8 սեպտ.] ամենայն զօրք քրիստոնէիցն պատրաստեցան մեծաւ զգուշութեամբ խոստովանելով և հաղորդելով, և ի միմեանց զթողութիւն հայցելով. և ապա միահաղոյն ելին արտաքս վաղվաղակի, և բազում ճարտարութեամբ հանդերձեցին զգունդ հեծելոցն դասս 240ա դասս, նոյնպէս և զհետևակազօրսն ըստ պատշաճի պիտոյից պատերազմացն, և մնային յերկար գալստեան հակառակորդացն:

Իսկ զօրք անհաւատիցն հայեցեալ ի վերայ զարհուրեցուցիչ և ահարկու աղանց Լեհացն, որք միահամուռ կապուտազգեստ և երկնազունակ, երկաթապատ

* Չեռագրում՝ ի իս օգոստոսի:

պողոպատիկ զրահիւք հաստատեալ կային ի զիմի՝ որպէս զլեառն անդրդունլի կամ իբրև զպարիսպ ամրակառոյց, յայնժամ պակուցեալք ամենեքին ըմբռնեցան [յ]ահ և երկիւղ, և ոչ համարձակեցան ելանել ի մարտ, այլ բերեալ զմեծամեծ թոփսն ի մէջ անտառախիտ ծառոց, և անտի թաւալէին* (զոտմբսն) ի վերայ քրիստոնէից, և բարձր ձայնիւ աղաղակէին՝ Արիք ընդ առաջ. զոր տեսեալ քրիստոնէից զանվաւր գործս նոցա, թոյլ ետուն ի տեղիս իրեանց. նոյնպէս և նոքա արարին:

Յայսմ ատուր ի բանակն Տաճկաց գրեցին շորս հազար ենիշարի, քանզի յոյժ պակասեալ էր զօրք հետևակացն:

Ի հինգշաբթի օր [= 30 օգոստ. / 9 սեպտ.] զարձեալ զօրք քրիստոնէիցն ի ճակատամարտին հանդերձեցան, և թշնամիքն ոչ կամեցան ելանել ամենեին որպէս և յերէկն. բայց սակաւք ի Թաթարաց անցեալ յետս խոթին, և խորհեցան նենգաւ հարկանել, իսկ քրիստոնէից ունէին յառաջագոյն դարանակալս** ի պահեստի յեկեղեցին խոթինու՝ նոյնպէս հարիւր այր հետևակ, որք*** ի վերայ հասեալ ըմբռնեցին ի նոցանէ երեք Թաթար կենդանի և բերին առ հեթմանն, և զօրքանս սատակեցին սրով, և մնացեալքն փախեան անմխիթար:

Ուրբաթ և շաբաթ [= 31 օգոստ. — 1 սեպտ. / 10—11 սեպտ.] նոյնպէս եկին այլազգիքն ի վերայ խազախաց շորս և կամ հինգ անգամ, և ոչինչ օգտեալք դարձան յետս ամօթով:

Իսկ ի կիրակէի ատուր**** [=2/12 սեպտ.] շաբժեցան ամենայն զօրութեամբ բազմութիւն անհաւատիցն, և եկեալ շուրջանակի պաշարեցին զբոլոր բանակն քրիստոնէից իբրև զամպ խրթնացեալ, և որպէս զվիժանս հոսմանց փրկեալ յալեաց, և այնքան առաւել՝

* Չեռագրում՝ բաւալին այսինքն նետլին:

** Չեռագրում՝ դարանակեալս:

*** Չեռագրում՝ գոր:

**** Չեռագրում՝ իսկ ի կիրակէի ատուր օգոստոսի:

մինչ զի ոչ ամենևին երևիր դաշտն և ոչ լերինքն, և յամենայն կողմանց եղեալ զահագին թոփան սկսան հար-
240բ կանել||անդագար, զոր ասեն թէ ի սմին աուր թաւ-
լեցին զթոփս աւելի քան զերկու հազար անգամ, բայց ի
զուր և ընդ վայր, զի ոչ զոք վնասել կարէին երբեք:
Նոյնպէս և բրիստոնեայքն ի ներքուստ հարեալ զթոփս
և զթֆանկս կործանէին յերկիր զբազումս ի նոցանէ, և
ոմանք ելանէին արտաքս ի նիզակակիր զօրաց և հետե-
ւակացն և պատերազմէին ընդ բարբարոսս մինչև յերե-
կոյն, ուստի ձանձրացեալք թշնամեացն գնացին տրտ-
մութեամբ:

Ի սմին աուր զօրքն հազախաց զմեծ զօրապետն
իրեանց արտրեցին ի պատուոյն, և ի տեղի նորա կա-
ցուցանեն զայր ոմն քաջ և պատերազմող՝ որ կոչիւր Մա-
հայտաշնի*, որ յառաջն հազարապետ էր նոցա. և այս
այնր աղագու դատեցին, զի ի գալն իրեանց ի հոթինն՝
ուղարկեալ էր շորս հազար հազար⁵⁰ ի յերկիրն Պուղ-
տանաց վասն ազահութեան, որ կորեան անդ անօգուտ
առանց գիտութեան ընկերացն, որպէս և յառաջն ասա-
ցաք. և յետ երկու շարաթի զլիսատեցին զՊորտուքա ի
բանակն իրեանց⁵¹:

ԳՆՈՒՆ Ժ.

ՅԱՂԱԳՍ ԳԱՍՏԵԱՆ ԳԵՍՊԱՆԱՆ ՏԱՃԿԱՅ ՎԱՍՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ,
ԵՒ ԿՈՐՍՏԵԱՆ ԽԱՐԱԽԱՇ ՓԱՇԱՅԻՆ

Երկուշարթի աուրն* [=3/13 սեպտ.] գայ ոմն
հրեշտակութեամբ ի կողմանէն Տաճկաց Կոստանդին
անուն՝ որդի Պատիստայի, և մտեալ առ բարեհոգի զօ-
րավարն հոտքեիչ, և երկիր պագեալ նմա սկսաւ խօսել
յազգաս հաշտութեան և սիրոյ, և ասէ եթէ առաքեսչիք
և զուր գեսպանս առ պարոնն Պուղտանայ Ռատուլն, զի
և նա անդ գոլով հանապաղ ընդ վեզիրն և ընդ նախա-

րարս՝ միշտ շանայ զխաղաղութիւն հաստատել յերկո-
ցունց կողմանց:

Իսկ ամենագովելի հեթմանն թէպէտ ոչ ունէր ի
241ա թագաւորէն||իրմէ հրաման հաշտութեան, այլ խոր-
հուրդ արարեալ ընդ արքայորդոյն և ընդ մեծամեծս և
ընդ բանին Պուղտանայ՝ ընտրեն ի միջի իրեանց ի
գեսպանութիւն զոմն ի զինուորաց, որում անունն էր
Ժելենսքի. և ապա ի միւսում աուր [=4/14 սեպտ.]
ուղարկեն զպատգամաւոր այրն [ընդ որդոյն] Պատիս-
տային ի բանակն Տաճկաց, և այլ ոչ ինչ լուան պա-
տասխանիս⁵²:

Եւ այս վասն այն, զի յաուր շորեքշարաթոջն [=5/15 սեպտ.] եկն եհաս փաշայն Պուտինու Քարաքաշ
անուն⁵³, որ ունէր ընդ իւր շորս հազար արս քաջ պա-
տերազմողս, որ եկեալ համբուրէր զոտս Օսմանին, և
ասէր. Ողջ լեր, արքայ անյաղթելի, ես այսօր ոչ ճաշ-
կեցիք ի սեղանոյ տեառնդ իմոյ՝ մինչև նախ երթեալ
բնաջինջ արարից զթշնամիս քո, և զին՝ չէ այս նոր
սքանչելիս քոյոյ թագաւորութեանդ, որ այսքան աուրս
ոչ կարացիք բառնալ զսակաւարնակ բանակս կա-
վուրաց⁵⁴:

Չայս լուեալ անօրէնն Օսման, վաղվաղակի մոռա-
նայ զխոստումն խաղաղութեան՝ պատճառաւ զոռոզ
առն այնմիկ, և զի գիտէր զնա յառաջագոյն այր հա-
մարձակ և բարեբախտ ի մարտս, վասն որոյ հրամայէ
տալ նմա պարգևս մեծամեծս, և հանդերձս ոսկենկարս,
և ընդ նմա վեց հազար հեծեալս Անատոլցիս, և հինգ
հազար հետեակ ենիշարիս, և երկոտասան հազար Ռու-
մելցիս⁵⁵, որ միահողոյն լինին քսան և եօթն հազար արք
ընտիրք և պատուականագոյնք, և ասէ. Երթալք և օգ-
նեսցեն ձեզ Մահմէտն և Ալին:

Յայնժամ անօրէնն հարախաշ հրամայէ հնչեցու-
ցանել զփողսն, և զամենայն նուագարանսն պատերազ-
մաց, և ի ժամ ճաշուն սկսան ամենայն բազմութիւնք
անհաւատից գոչել՝ Ալլահ, ալլահ. և զիմեցին միաբան

* Չեռագրում՝ երկուշարթի աուրն՝ օգոստոսի:

ի վերայ քրիստոնէից դառն սպառնալեօք և բուն զօրութեամբ, զոր այժմ տկարանամ ի պատմել լսողացդ զսարսափելի սաստիցն զտեսիլ՝ մանաւանդ զոռումն և 241բ ճայթումն հրաբորթութեանց թոփից և թֆանկաց, փայլատակմունք վաղակատր սուսերաց և զինուց, խխնջին և որոտմունք ահեղակոխ երիվարաց, մինչ զի թնդայր և զղրդէր [առ] հասարակ զաշտն և լերինք ամենայն, և այսպիսի յաղթող զօրութեամբ ևս քան զևս գային և յաւելուին, և զմիմեանս յորդորէին ի գործն հեծեալք և հետեակք, և ի մահ եղեալ զանձինս իրեանց՝ անկանէին ի վերայ դրան բանակին մեծաւ ջանիւ, և այնչափ, մինչ զի մերձ եղեն ի մտանել, զոր տեսեալ քրիստոնէից լուսահատեցան բազումք ի փրկութենէ:

Իսկ զօրավար ոմն Վայիո անուն գլուխն Ալամամանացն զօրաց՝ հասանէ ի տեղին այնմիկ շորս հազար թֆանկատր արամբ, ընդ նմա և ամենայն զօրք Իլախաց գումարեցան վաղվաղակի բոլորապատ ի վերայ խանտակին⁵⁶. վասն որոյ առեալ [յ]օգնութիւն զաստուած և զամենայն սուրբս, մեծաւ յուսով և հաւատով կաղմեցան ի պատերազմ, և այնչափ զղէմ եղեալ ճակատէին ընդ այլազգիսն, մինչև զբազումս ի նոցանէ կոտորեցին, և մնացեալքն դարձան ի փախուստ: Եւ մինչդեռ փախչէին՝ անօրէնքն, ոմն Ալաման այր ճարտար և սովոր, վերացուցեալ զթֆանկն և էզարկ զոտն փաշային, զոր ի սաստկութենէ վիրացն զարկաւ զգետնի, և երիվարն անկեալ սատակեցաւ: Ապա մի ոմն ի զօրաց իւրոց մատուցանէ նմա այլ երիվար՝ զի հեծեալ փախիցէ: Եւ իբրև էառ ողորմելին խարախաշ զձին և կամէր ելանել ի վերայ նորա, յայնժամ միւս ևս Ալաման ուղղեալ զթֆանկն նոյնպէս և եհար զհրացեալ կապարն ի սիրտ անհաւատին, և նոյնժամայն անկեալ յերկիր փրչեաց զգառնացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Չայն տեսեալ զօրացն՝ կապեցին շուան ի սատակ

մարմինն, և քարշէին զկնի իրեանց իբրև նետընկէցս երեք, և ապա դադարեցին սակաւ մի ի մէջ անտառին, մինչև բերեալ զկառսն, և բարձեալ տարան ամօթալից զիմօք ի բանակն իրեանց. նոյնպէս և զայլ կոտորելոցն 242ա զմարմինսն կարալցին տանել. և քրիստոնեայքն արձակեալք զկնի՝ առին զամենայն աւարս նոցա, և դարձան բազում ուրախութեամբ զոհանալով զտեսանէ, որ [յ]այնպիսի հզօր թշնամոյն ապրեցոյց զնոսա յաւուրն յայնմիկ:

Եւ իբրև լուաւ զայս անօրէն արքայն Օսման՝ ի խոր խոցեցաւ, և ուրոց հանեալ վշտալից ողորով լայր դառնապէս ի վերայ այնպիսի կոտորածին, մանաւանդ զկոչեցեալն Քարաբաշ, որ զամենայն յոյս ի նմա էր եղեալ, այնպէս և զամենայն ընտիր և զպատուական հեծեալսն Պոսնայու և զԱնատոլու, որ ի կորուստ եղեն ի ձեռն Լեհաց. այսպէս ամենայն զօրքն աւաղէին, և զմիմեանց զկորուստն ողբային:

Արդ՝ [յ]այս մեծ պատերազմին անկան ի քրիստոնէից արք եօթն, և ի կողմանէ անհաւատից՝ երեք հազար⁵⁷, և քան զնոյն երեքկին աւելի վիրաւորեալք եղեն, որք՝ յետոյ մի մի սատակէին ի բանակն իրեանց, և ամենեքին որ կորեան՝ նախնիք և հզօրագոյնքն էին հեծելոցն: Բայց այս ամենայն եղև ի ձեռն Մաճառ հետեակազօրի միոյ, որ փախեաւ ի քրիստոնէից, և երթեալ միաբանեցաւ ընդ անհաւատսն. և նա առեալ զայր զանուանեալն խարախաշ ասելով թէ յայս նիշ տեղուջ բանակն Լեհաց անպատրաստ է ի զինուց, և ոչ գոն պահապանք՝ յայն կողմն, և խանտակն^{**} յոյժ ցած է, ուստի զիրաւ կարող ես գտանել զնոսա, որպէս և էրն իսկ: Բայց զխորհուրդն զոր կամեցան, խափանեաց տէր, վասն որոյ ըմբռնեալ զապերախտ այրն այն և սրախողխող արարեալ բարձին որպէս զամբարիշտ յերկրէ ասելով. Դու եղեր պատճառ կորստեան այսքան զօրուն մըսըմանայ:

* Ձեռագրում՝ քաղչէին:

* Ձեռագրում՝ գար:

** Ձեռագրում՝ խանտակն:

ՅԱՂԱԳՍ ԽԱԶԱԽԱՅՆ ԵՒ ՎԱՍՆ ՄԱՀՈՒՄԱՆ ՀԵՔՄԱՆԻՆ՝ ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՅՆ ՏԱՃԿԱՅ ԶԳԵՊՊԱՆՆ ՔՐԻՍՏՈՆԻՅ

242բ || Իսկ ի հինգշաբթի աւուրն** [=13/23 սեպտ.] աստուածասէր զօրավարն Խոտրեկիչ հրամայէ Խազախ հեծելոցն, որ յայս կոյս ջրոյն բանակեալ էին, զի անցցեն զգետն և եկեսցեն յայն կողմն, ուր մեծ բանակն էր Իլախաց. և ըստ հրամանի նորա ելեալք ի զիշերի հազար երկու [հարիւր]⁵⁸ այր, և կամէին անցանել զՔուռլայն, բայց ի խելս կամրջացն ունէին ի պահեստի երկու հազար Տաճիկք, որք*** անհոգս եղեալ ննջէին, յորս էր մին Ղարահիսար փաշասի, և միւսն Ալի փաշա⁵⁹. զայն տեսեալ Խազախացն, և զաղտաբար անկան ի վերայ և կոտորեցին զամենեսին ի մէջ վրանացն, մինչ զի ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց միայն զարապն փաշային կենդանի բերեալ պարզես արքայորդոյն, և զամենայն աւարս բաժանեցին ի միջի իւրեանց⁶⁰:

Զոր լուեալ Օսման լի եղև սրտմտութեամբ և բարկութեամբ, և հրամայեաց զօրաց իւրոց, զի ի վաղիւն [= 14 / 24 սեպտ.] ամենայն զօրութեամբ արձակեսցին ի վերայ քրիստոնէից, և առաւել յայն կողմն, ուր Խազախքն էին. որք*** բաղմաշխատութեամբ և ջանիւ մինչև երեկոյ ոչ զաղարէին ի մարտնչելոյ, և երկու անգամ ընթացան մինչև երեկոյ դրան բանակին հանդերձ թոփիքն, զոր եկեալ թաւայէին, և դառնային վաղվաղակի գալստեամբ:

Իսկ զօրք Լեհաց և Խազախացն ելանէին ի բանակէն հետեակ և ճակատէին ընդ նոսա, մինչև սպանին զերկու ձողակիրս նոցա, և զգլուխ[ս]ն և զձողան բերեալ թագաւորորդոյն, և ընկալան պարզես ի նմանէ, և մնացեալքն փախչէին արագ արագ որպէս յերեկն և յեռանդն:

* Զեռագրում՝ հարմանին:

** Զեռագրում՝ իսկ ի հինգշաբթի աւուրն օգոստոսի:

*** Զեռագրում՝ զոր:

**** Զեռագրում՝ զոր:

Իսկ ի շաբաթի օր սեպտեմբերի [=15/25 սեպտ.] ամենագովելի և աստուածահաճոյ զօրավարն Գարուչ Խոտրեկիչ հանգեաւ ի Քրիստոս բնական մահուամբ⁶¹, և Եթող սուգ մեծ ամենեցուն, վասն որոյ արքայածինն իշխան Վլատիսլաւ, և բովանդակ զօրքն և զօրագլուխիւր յոյժ աշխարէին զնա կսկծալից ողբով, որ [յ]այնպիսի վշտալից և դառնաշատ ժամանակին կանխաժաման 243ա մահուամբ բաժանեցաւ ի||փոփոխական կենցաղոյս յանմահ և յանվաղճան կեանս, որոյ Քրիստոս աստուած փառաւորեսցէ զհոգի նորա ընդ սրբոց իշխանացն, և զմեղաց թողութիւն պարգևեսցէ զգիտութեան և զանգիտութեան:

Ի սմին աւուր դարձեալ եկին ի վերայ Խազախաց բաղում մեծամեծ թոփիք, և ոչինչ կարացին առնել: Յայսմ աւուր ի բանակն Տաճկաց գրեցին Լնիչարութեան զարս տասն և չորս հազար հանեալ ի դրանէն արբունի:

Եւ ի կիրակէի աւուր Վերացման սուրբ Խաչին՝ [= 16/26 սեպտ.] ասէ խոնթիւքարն անցուցանել զգետն ժ՛՛, մեծագոյն թոփսն, և [յ]այսմ կողմանէ ջրոյն հարկանել զբանակն, նոյնպէս և ի միւս կողմանէն, սկսեալք յառաւօտէն մինչև ցերեկոյ, և ոչ կարացին առաւել վնասել, բայց և եթ երկու ծառայիք⁶² և չորս ձիոց. նոյնպէս և ի միւս կողմանէն ոչ ինչ օգտեալք՝ դարձան անմխիթար ամենեկին:

Ապա յետ այսորիկ [=17/27 սեպտ.] արձակեն Տաճիկք զգեսպանն մեր զբան ժելինսքին, նոյնպէս և զՊատիստային որդին, որ յառաջն էր եկեալ. ուստի բերեալ ծանուցին փոքր զօրավարին ստարոստա Սենտոմիրսքին⁶³ զամենայն պատասխանիս Տաճկաց՝ ըստ հրամայեցելոցն նոցին, զոր կալեալ զՊատիստալիին [որդին] եղին ի պահեստի զգուշութեամբ զաւուրս երկու, վասն զի մի՛ տեղեկացի և ծանուցէ անօրինաց զմահ մեծ զօրավարին, մինչ ինքն խորհուրդ առնիցէ ընդ թա-

զատրորդուոյն, թէ որպիսի օրինակաւ ուղարկեսցեն զեկեալ դեսպանն ի Տաճկաց:

Դարձեալ ի սմին աուր անօրէն արքայն Օսման արտորէ ի պատուոյն զմեծ վեզիրն իւր, և զենիշարազասին նոյնպէս ընկենու ի փառացն, պատճառս տալով նոցա, թէ դուք անշնահատոր⁶⁴ և անբաղղ ոմանք էք, վասն այն ոչինչ օղտեցայք այսքան ժամանակս, և ի տեղի նոցին զայլ ոմանս (կացուցանէ), գիտացեալ թէ այլքն յաջողք և հօրապոյնք լինելոց իցեն, մոռանալով զասացեալն՝ եթէ ոչ տէր շինէ զտունն, ի նանիր վաստակին շինողք նորա*:

243բ

|| ԳՆՈՒՆ ԺԹ.

ՅԱՂԱԳՍ ՄԵՍ ԵՒ ԱՀԱԳԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏԱՃԿԱՅ ԸՆԴՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ

Ապա յաուր երեքշաբաթոշ [= 18 / 28 սեպտ.] հրամայէ Օսման բարձր քարոզել աղաղակաւ ի մէջ բանակին առ ամենայն զօրս իւր, զի յայնմ աուր ամենեքեան ի միասին ի մեծամեծաց մինչև ցփորունս պատրաստ լինիցին ի պատերազմ, և եթէ իցէ որ որ ընդդիմացի հրամանին՝ կորուսցէ զկեանս իւր:

Յայնժամ մեծաւ զգուշութեամբ հանդերձեցին ամենայն զօրավարքն և զօրագլուխքն զբովանդակ հեծեալքն և զհետեակազօրս՝ որպէս զՏաճիկս, նոյնպէս զՊողտանցիս, զՄինթացիս⁶⁵, և զԹումելցիս, զՊոսնացիս, և զԱնատոլցիս, և զԹաթարս, և զամենայն ազգս, որք եկեալ էին ի հեռաստանէ, մինչ զի ոչ ոք մնաց ի բանակն, բայց միայն ընդ իւր երկու հազար մերձաւոր սուլթա⁶⁶ և շորս** հազար ենիշարիս, և նոյնչափ տապարակիրս, որք են պալթաճիք.⁶⁷ և զայլ ամենայն զօրս իւր խազացոյց հանդերձ փզօքն ի վերայ քրիստոնէից ասելով թէ՛ Չոր ինչ լինելոց է եղիցի այսօր, կա՛մ կո-

* Մաղ. ճԻԶ. 1:

** Չեռագրում՝ զօրս:

տորիցէք* զթշնամիս մեր, կա՛մ ամենեքին կորնչիցիք** միահաղոյն. և ապա ասէ անցուցանել զզետն քառասուն թուփս մեծամեծս, և [յ]այնմ կողմանէն ևս հարկանել զբանակն, զոր առժամայն կատարեցին. և ընդ թոփերացն անցին շորս փաշայք՝ շորս հազար արամբք⁶⁸, և եղին անդ զզրահս իւրեանց, և արքն որք ընդ նոսա պատրաստ կային ի վերայ երիվարաց. նոյնպէս և հինգ հարիւր ենիշարիք առ ասին գետոյն պահէին, և ոչ տային թոյլ քրիստոնէից իջանել ի ջուրն: Եւ այսպէս ոմանք յայսմ կողմանէ և ոմանք յայնմ կողմանէ ջրոյն՝ սկսան յառաջին ժամէ աուրն մինչև ցյետին ժամն հարկանել զբանակն քրիստոնէից. և յայսմ աուր ինն ան-
244ա զամ, մեծաւ ջանիւ դիմեցին||ի մարտ, մինչ զի բազումք յանհաւատից ելին ի վերայ խանտակի*** բանակի դրանն և կամէին անկանել ի ներքս:

Իսկ քրիստոնէայքն անտուտ հարեալ ծակոտկէին զնոսա ազգի ազգի սուսերօք, զոր սատակեալ անկանէին ի խանտակն.**** բայց այժմ ոչ միայն կամաւ իւրեանց պատերազմէին այլազգիքն որպէս յայլ աուրս, այլ զի յետոյ կացեալ հարիւրապետաց և հազարապետաց՝ մերկ սուսերաւ և ոմբաւ վարէին զեղկելի զօրսն յոչ կամաց ի վերայ քրիստոնէից:

Եւ ինքն Օսման ել ի վերայ բարձրագոյն բլրի միող առ յետոյ Խոթինին՝ որ կոչի Հորոտիշէ, և առաջի իւր երկու փիղս, և ի վերայ փղացն արք շորք փողահարք**** և երգեցիկք, և ազգի ազգի նուագարանք, զի ուրախացուցեն զնա, և ակներե տեսանէր զմարտակցութիւն զօրաց իւրոց: Յայնժամ մատեան առ նա խաբուսիկք և զաւաճանք, աւետիս ետուն նմա և ասեն, թէ՛ Ուրախ լեր, արքայ, զի ահաւասիկ մերձ եմք ի կործանել զթշնամիս

* Չեռագրում՝ գտեցիցէ:

** Չեռագրում՝ կորնչիցին:

*** Չեռագրում՝ խանտակի:

**** Չեռագրում՝ խանգլկն:

***** Չեռագրում՝ փղահարք:

քո. և ոմանք թէ՛ Զորդի թագաւորին հարաք թոփիւ ի մէջ բանակին, և զվրանս և զամենայն կահս նոցա մանրեալ խորտակեցար. բայց սուտ և ընդ վայր ել:

Իբրև տեսին քրիստոնեայքն եթէ առաւել համարձակութեամբ յարեան ի վերայ այլազգիքն, յայնժամ բերեալ զբովանդակ թոփսն, և լցին զամենեսին բազմադիմի անօթիւք երկաթեղինօք, զոր պատրաստեալ ունէին յառաջագոյն, և արձակեցին միանգամայն ի վերայ անհաւատիցն, որ մանրեալ զամենեսին հոսեաց ընդ յոլով մասունս, և այնչափ երկարեցաւ գործն մարտի, մինչև առ հասարակ լցաւ արեամբ և դիակամբ մեռելոց բոլոր բանակն և զաշտն ամենայն. իսկ մնացեալքն սկսան փախչիլ ըստ սովորութեան իւրեանց, և իբրև զշունս մի ըստ միոյ՝ թօթափելով և զղէնսն. և ապա զարձուցին զթոփսն ի մի կողմն, և ուղղեալ ճարտարութեամբ զերկուսն միայն և այնպէս հարին զթոփապետն*⁶⁹ Տաճկաց, որ [յ]երկուս հերձաւ, և փաշայիցն զվրանն նոյնպէս բնաջինջ արարին բազում արամբք:

Զոր տեսեալ անհաւատիցն՝ վաղվաղակի սկսան
244բ լծել^{***} զսայլսն յորոց^{***} վերայ թոփքն էին, և զվրանսն փութապէս ժողովեալ փախեան և նոքա ևս ամօթալից գիւմօք, ոչինչ օգտեալք ոչ յայնմ կողմանէ և ոչ յայնմ. ընդ որ յոյժ վիրաւորեալ Օսման, և տարակուսեալ ի ծանր սգոյն՝ յուսահատեալ ամենեկմբ, և ի [յ]անհնարին տրամութեանն նստեալ լայր զբեկումն իւր, յորում ունայնացաւ ի բազում արիական զօրաց: Ապա յայսմհետէ ոչ ևս համարձակեցան ելանել ի մարտ, այլ հնազանդեալ ահամայ կամօք ստուգապէս կամեցան զխաղաղութիւնն հաստատել:

Արդ՝ [յ]այս մեծ և վերջին պատերազմին անկաւ ի զօրաց հաւատացելոց, նախ ոմն պատուական Մաճառ հաղարւսպետ⁷⁰ մի, որում անունն Ֆեքեթի կոչուր, և

* Զեռագրում՝ զթօփապետս:
** Զեռագրում՝ լուծել կամ լծել:
*** Զեռագրում՝ յորոյ:

ինքն էր այր հմուտ ամենայն պատերազմական արիութեանց. ընդ սմին այլ ևս արք քսան և ութն, որք կատարեցան սրով յաւուր յայնմիկ. իսկ ի կողմանէ անհաւատից՝ անբաւ և անհամար, բայց ըստ կարծեաց և ըստ նմանութեան թուեցին յայքան՝ ի հետեակաց ԳՌ⁷¹, և ի հեծելոց ԳՌ, և ի Պուղտանցոց և ի Մինթացոց ԶՌ⁷², և վիրաւորեալք ի սրոյ և ի թոփից՝ աւելի քան տասն հազար⁷³, որ բարձեալ սայլիւք կրէին ի բանակն իւրեանց, և զսատակեալ ծանօթսն և զզխաւորսն միայն առնուին, և զմնացեալսն զորս արկանէին ի գետն և զորս թաղէին անդ, և զորս թողուին ի մէջ դաշտին կերակուր շանց և զազանաց:

Եւ գիտել պարտ է, զի ոչ միայն սուսերօք և զինուր լինէր կորուստ անօրինացն, այլ մանաւանդ անբրևոյթ աջովն աստուծոյ հանապազ հարեալք և եղծեալք և կործանեալք լինէին:

ԳՂՈՒՅ ԺԳ.

ՅԱՂԱԳՍ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԳԵՍՊԱՆՆ ՏԱՃԿԱՅ, ԵՒ ԸՆԳ ՆՄԱ
ՅԳԵՆ ԶԻՌԵԱՆՑ ԳԵՍՊԱՆՆ

245ա ||Յետ այսորիկ ի բանակէն Իլախաց արձակեն ի շորեքշաբթի աւուրն [=19 / 29 սեպտ.] զպատգամաբեր ալրն որ եկեալն էր ի Տաճկաց՝ զորդի Պատիստային, և ընդ նմա առաքեն զգեսպանս քրիստոնէից զգաշղալան բան Պլզղեցբին և զվոյվոճիչ Լուպեխբին⁷⁴, քսան և հինգ արամբք. բայց ի զօրաց Լեհացն գնացին ուղարկել զգեսպանսն երկու հարիւր հեծեալք, արք ընտիրք և պատուականք, զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ և վայելչատեսիլ գազանամորթ վերարկուօք, այլ և հանդերձ իշխանաց և բազում մեծամեծաց, մինչ զի ինքն զօրավարն ևս ստարոստա Սենտոմիրսբին⁷⁵ յանձանօթս լեալ գնայր զհետ նոցա մինչև որ մերձ եղեն ի բանակն Տաճկաց:

Յայնժամ ի կողմանէ Տաճկացն իբրև տեսին զգա-

լուստ քրիստոնէիցն՝ ընդ առաջ ելին նոյնպէս և նորա բազմապատիկ և զարմանալի բեհեզագործ կերպասիւք, և ցեղ ի ցեղաց կազմեալ մեծագին երիվարօք, որ սպահիք⁷⁶ կոչին՝ արք ԳՃ, և շավուշք⁷⁷ Ճ, և այլ բազմութիւն զօրաց նոցա, որք եկեալ ի դաշտն հանդիպին միմեանց ողջոյն տալով ուրախութեամբ, և ապա առեալ տարան զղեսպանսն քրիստոնէից առ Օսման, և մնացեալքն զարծան խաղաղութեամբ ի բանակն իրեանց:

Բայց յառաջ քան զղեսպանն ի սմին աւուր առաքէ անօրէնն խոնդբար զբազում արս թաթարաց և ենիչարեաց և ընդ նոսա զմեծամեծ թոփս, որք* զնացեալ ի վերայ գիւղաքաղաքի միոյ, որ կոչի Բանուլցա, ոչինչ հեռի ի խոթինու, և սկսան մեծաւ ջանիւ արծակիլ ի վերայ, և հարկանել հանապազ զպարիսպն թոփու և թֆանկիւ մինչև ցմեծ ժամ աւուրն, իսկ քաղաքացիք ի ներքուստ հարեալ կործանէին ի նոցանէ:

Եւ ոմն քահանայ աղգաւ Ռուզ, անուն Օթէջ նիբուսքի**, պատրաստեալ զթֆանկն և եհար ճարտարութեամբ զանիրալ|այրն որ զթոփսն թաւալէր, և առժամայն անկեալ սատակեցաւ. զոր տեսեալ անօրինացն ժողովիցին փութանակի զամենայն զէնս և զասպարս իրեանց և զնացին անդառնալի հետիւք լի ամօթով:

Ի հինգշաբթի, յուրբաթի, և ի շաբաթի, և ի կիրակէին օր [=20—23 սեպտ./30 սեպտ.—3 հոկտ.] ոչինչ եղէ ընդ միմեանս՝ մինչ զնսպանքն առ նոսա էին,*** այլ խաղաղեցաւ պատերազմ յերկոցունց կողմանց. բայց հանապազ ի պատրաստի ունէին ամենայն զօրք քրիստոնէից, ոչ վստահանալով պատրողական բանից և խօսիցն անհաւատից:

Յաւուրսն յայնոսիկ բարեյաղթ և քրիստոսասէր իշխանն վլատիլաւ սկսաւ առատաձեռն պարզեօք շնորհել ամենեցուն հսկայաձև ազանց և հեծելազունդ զօ-

* Ձեռագրում՝ զօր:

** Ձեռագրում՝ օրէցնիկ օլսփի:

*** Ձեռագրում՝ կր:

րաց օժիտս և ձիրս մեծաձեծս, վասն առաւել և աներկբայ հաւատարիմ ծառայութեանց իրեանց. նոյնպէս և խաղախաց և Ալամանաց յորդառատ պարզեօք հատուցանել խոստանայ զփոխարէնն քաջութեան նոցա՝ յետ ուրախութեամբ դարձին իւրոյ, որ և արարին իսկ, և յամենեցուն շնորհակալ լինել, և գոհանայր ի նոցանէ վասն ամենայն իրացն գործեցելոց:

Ապա յաւուր երեքշաբաթոջ^{*78} [= 25 սեպտ. / 5 հոկտ.] սուլթան Օսմանն արձակէ զղեսպանս քրիստոնէից, և Տաճիկ շավուշ մի ընդ նոսա, որ կատարեալ զբովանդակ դաշինս երգմանց, և մուրհակ խաղաղութեան անդառնալի տուեալ ի ձեռս նոցա, եկին բերկրալիբ աւետեօք ի բանակն Լեհաց:

Բայց զբան զեսպանացն ոչ որ կարաց հաւաստեալ իմանալ՝ թէ յո՞յր վերայ հաստատեցին զպայմանն, քանզի բազումբ բազում ինչ այլ ընդ այլոյ պատմէին անմիաբան միմեանց, վասն որոյ և ես ոչ կարացի այժմ ստուգիլ գրել զերկբանական ծանուցումն անիմանալի իրին, մանաւանդ զթաղաւորական և զարքունական 246ա գործսն, այլ զկարծեօք||խորհուրդսն աստուծոյ թողեալ անհաս իմաստիցն և ի մնացեալ յայտնիսն զիմեցից՝ ընտրելով զստոյգն ի յուլովից:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՅԱԶԱԳՍ ԺՈՂՈՎԵԼՈՅՆ ԶՍՄԵՆԱՅՆ ԶՕՐՍ ԻՐ ՕՍՄԱՆԻՆ ԵՒ ԳԱՌՆԱԼՈՅՆ Ի ՅԵՐԿԻՐ ԻՐ ՅԵՏ ԿՍԱՐԵԼՈՅ ՀԱՇՏՈՒԹԵԱՆՆ

Յայնժամ շորեքշաբաթի աւուրն [= 26 սեպտ. / 6 հոկտ.] սուլթան Օսման պատրաստէ հինգ հարիւր շավուշս, և բազում զոնապանս և առէ անցանել յերկիրն Իլախաց, զի զորս գտանեն անդ ի զօրացն իւրոց, թաթար կամ Տաճիկ և կամ այլ ամենայն ազգս յիւրոցն, վաղվաղակի անցուցանիցեն յերկիրն Պուլտանաց. որ և

* Ձեռագրում՝ շորեքշաբաթոջ:

արարին իսկ, և քարոզ կարդացին յամենայն բանակս Տաճկաց մեծաւ սպաննալեօք, զի մի՛ որ յայնմհետէ իշխեսցէ անցանել զչորն և կամ աւեր* ինչ հասուցանել համարձակեսցի յերկիրն Իլախաց, և եթէ գտանիցի որ [որ] յանդնեալ արասցէ զայն, մահապարտ լինիցի [յ]ամենայն յատենի. և ապա որպէս յառաջն ամեցան, նոյնպէս և ի վերջն սկսան պակասիլ մի ըստ միողէ, մինչև ամենևին գաղարեցին հետք նոցա յընդհանուր աշխարհէն Լեհաց: Իսկ յաւուր ուրբաթու [= 28 սեպտ. / 8 հոկտ.] ի բանակն քրիստոնէից եղև ուրախութիւն յոյժ առ հասարակ զօրաց և զօրապետաց, մեծաց և փոքերց, և սկսան հարել զթոփս և զթֆանկս, և հրնչեցուցանել զփողս և զնուագարանս և զթմբուկս մեծաւ զոչեցուցմամբ, մինչ զի զօրքն Տաճկաց հիանային ընդ ահեղ զղղումն լերանց և վիմաց ի յուրախական ձայնէ քրիստոնէիցն. և այսպիսի պայծառութեամբ և բերկրու-

246բ Թեամբ օրհնէին և գովէին զաստուած զգիրկիչն ամենեցուն, որ զայնքան մեծ բարկութիւնն և զցասումն նոր Յուրանոսին գարձոյց ի խոնարհ և ի նախատինս որպէս ամենագէտ տէր: նոյնպէս և քահանայք և ուխտականք, որք էին յայնժամ ի բանակն, պարակիցք եղեալ հոգևորացն ընդ մարմնաւորսն, միաբան հանդիսի և բարձրարարբառ եղանակօք առեալ զկցորդսն Գաթի երգէին ասելով խրախումամբ. նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան**, մեք ժողովուրդք և խաշն արօտի քո***:

Ի շաբաթ օրն [= 29 սեպտ. / 9 հոկտ.] եկն շավուզ մի, և ընդ նմա մեծաւոր Պողտանցի մի որ բրգալապ⁷⁹ կոչիւր. ուստի ետուն զբերդն խոթինու ի ձեռս նոցա և ինքեանք ազգն Լեհաց ելին ի միջէն. և այս բերդս նախ առաջ Պուղտանաց էր և Տաճիկք տիրէին. բայց հինգ ամ յառաջ քան զայս իշխան ոմն Իլախաց Գորեցբի⁸⁰ անուն

* Ձեռագրում՝ աւուր:

** Սաղ. 2 է. 6:

*** Սաղ. 2 Ը. 13:

զնացեալ անդ և բռնութեամբ էառ զբերդն զայն, զոր մինչև ցայս վայր կալեալ ունէին:

Արդ՝ այժմ թուի թէ այսու աղագաւ հաստատեցին զխաղաղութիւն յերկոցունց կողմանց, զի վերստին դարձուցեն առ նոսա զլիլայն Հոթունի. իսկ յետոյ անիրաւքն համբաւեցին թէ, սուտ բարբաջմամբ, խոստացան քրիստոնեայքն հարկս հանդիսականս տալ Տաճկաց, զոր մի՛ որ իշխեսցէ հավատալ անհանձար բանից նոցա⁸¹:

Ապա ի կիրակէի աւուր [= 30 սեպտ. / 10 հոկտ.] յարուցեալ Օսման ընդ առաւօտն և հրամայէ հնչեցուցանել զփողսն ի լուր ամենեցուն, զի յայնմ պատրաստեցին ի ճանապարհ ամենայն զօրք իւր հեծեալք և հետեակք, և ապա ի ժամ ճաշուն շարժեցաւ ընդհանուր զօրքն և բոլոր բանական, և զնացեալ հեռացան ի քրիստոնէից, մինչ զի հաղի երեւէին, և իջևանեցան ի վերայ նոյն գետոյն Թուրալի ի բարձրավանդակ տեղոջ իբրև

247ա զամպս թխացեալ. իսկ բազմութիւն անհաւատիցն որպէս զմառախ սփռեալ ծածկէին զերեսս երկրի [և] դաշտին. և ապա ի միառում աւուր ելեալք անտի, և զնային անդառնալի ուղեզնացութեամբ:

Յայնժամ յաւուր [երկուշաբաթի և⁸² երեքշաբաթի [= 1—2 / 11—12 հոկտ.] սկսան զօրք հաւատացելոց անցանել զչորն, այլ ոչ ամենեքեան, քանզի կամուրջն Լեհաց որ էր մտա ի բերդն՝ կործանեալ էր, վասն այն փոքր նաւակաւ անցանէին սակաւ առ սակաւ: Բայց ի հեռաւոր տեղոջ կամուրջն Տաճկաց դեռ ևս կայր հաստատուն, զի ինքն Օսման ի դարձին իւրում պատուէր ետ զօրաց իւրոց, զի մի՛ տապալեցեն զայն, այլ թողցեն ամբողջ, զի անտի եկեալ անցանիցեն հեծեալքն Լեհաց:

Ապա ի շոբեքշաբաթի և հինգշաբաթի աւուրն [= 3—4 / 13—14 հոկտ.] ամէներանեալ իշխանն Վլատիսլաւ հանդերձ ամենայն զօրք և զօրավարքն զայ անցանէ ընդ այն կամուրջն և մտանէ ի սեպհական հայրենիսն

իւր յերկիրն Իլախաց, և եկեալ բանակն առ ստորև գիւղաքաղաքի միոջ որ կոչի Ըզվանէջ:

Արեմն աստ պատեհագոյն իմն թուի ինձ արտադրել և դնել ի շար բանիս զգալուստ արքային Իլախաց, թէպէտ ոչ կարաց ժամանել զործոյն. այլ զի ամենեւեմ կատարելապէս ծանուցի ձերում վեհագոյն մտաց զհտուութեանց՝ վասն որոյ այժմ գրեցից ձեզ զփոքրն ի շատէն, զստուգիւ եղեալսն իրացն զճշմարտութիւնն, և ասպա զարձայց յառաջին բանսն անձանձրալի հետովք ընթանալ մինչև ի վերջին կէտ՝ բնաւին աշխատութեանս վեհիմաստութեան ձերում:

247ր

|| ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԱՂԱԳՍ ԳԱՆՍՏԵԱՆՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՆԱՅ ԸՆԿՆԱՆՈՐ ԶՕՐՔ ՅԼՈՎ, ԵՒ ԱՆԳ ԼՈՒԵԱԼ ԶԷՆՏՏՈՒԹԻՒՆ ԸՆԳ ԹՇՆԱՄՍԻ, ԳԱՐՁԱԻ ՎԵՐՍՏԻՆ Ի ՎԱՐԺՈՎ ՔԱՂԱՔ

Ընդ ատուրսն ընդ այնոսիկ ինքնակալ և բարեպաշտ արքայն Զիկմունդ, իբրև կարգաւորեաց իմաստութեամբ զամենայն հաճոյս աշխարհին իւրոյ, և զի դեռ ևս ոչ էր լուեալ զհամբաւ հաշտութեան ընդ Հագարացիսն, յայնժամ առաքէ զբազումս ի պաշտօնէից իւրոց առ ընդհանուր երկիրս Իլախաց բարձր հրամանաւ բարողել և պատուիրել ամենայն դասուց զինուորաց և զօրաց, ազատաց և ծառայից, հեծելոց և հետևակաց, զի ամենեքին փութանակի յառաջեսցեն ի մայրաքաղաքն Իլովոր և ինքն իսկ նոյնպէս առանց յերկարելոյ վաղվաղակի շոքաւ անդ, բազում մեծամեծ իշխանօք, և զումարեցան առ նա զումարումն մեծ զօրաց յաւուր յայնմիկ ազգ ընդարձակ և բազմաթիւ, որք՝ լինէին երեք հարիւր հազար:⁸³

Ապա միաբանեալք մեծաւ պատրաստութեամբ կամէին դնալ ի վերայ խուժադուժ ազգին բարբարոսաց. և մինչ այս խորհրդով շտապէին ելանել ի քաղաքէն՝ նոյնժամայն հասին շուտափոյթ ընթացիւք դեսպանքն ի բանակէն քրիստոնէից, և աւետիս մատուցեալ և ասեն.

70

Ողջ լեր, թագաւոր անյաղթելի, և բերկրեա ճոխութեամբ, բանզի տէր ինքնին պատերազմեցաւ ընդ թշնամիս քո ընդ այն, և անդրդուելի պահեաց զնորաբողբոջ զաւակն քո և զտէրն մեր զմեծն Վլատիսլաւ հանդերձ ամենայն զօրօքն, մինչ զի ի հրեշտակութիւն առաքեալ անհաւատիցն, և հայցեցին զուխտ խաղաղութեան և զաշինս՝ սիրոյ ի մէնջ, որպէս և եղևն իսկ. և արդ մի՛ ևս
248ա աշխատ|լիցի բումդ բարձրագոյն թագաւորութիւն, զի ահա մերձ է ի դալ առ քեզ բարեպատեհ որդին քո ամենայն ազատագունդ հեծելովք. նոյնպէս և զամենայն եղեալ զործան պատմէին մի ըստ միոջէ:

Զոր իբրև լուս աքքայն՝ տրամեցաւ յոյժ, և յոգւոց եհան և ասէ. Զի՞նչ գործեցից, զիա՞րդ առանց մեր կամաց յանդնեալ արարին, ոչ մնալով զալստեան մերոյ: Այսպէս ամենայն զօրքն ափսոսային զայնպիսի պատահումն, որ այսքան բազմութիւն ժողովրդոց ոչինչ արութիւնս ցուցեալ հարկեցան դառնալ վերստին ի տեղիս իրեանց տրտնջալով և մեղադիր լինելով արքային, որ այնքան ժամանակ երկարեաց զընթացս իւր, և ոչ առժամայն շոքաւ. բայց այս ոչ եթէ յանհոգութենէ եղև, այլ ի պատճառս պիտոյից աշխարհին, որպէս և յառաջագոյն յիշեցաք: Ապա յետ քանի մի ատուր զնաց դարձեալ արքայն Զիկմունդ ի քաղաքն իւր վարշով:

Այլ ևս զայս ճշմարտեմ հաստատեալ, զի եթէ ժամանեալ էին անդ՝ այսու ամենայնիւ բնաջինջ առնէին զամենայն զօրս այլազգեացն, բանզի ուխտ եղեալ էին ի միջի իրեանց՝ ոչ դառնալ յետս, մինչև ոչ նախ մտցեն ընդ գրունս Կոստանդնուպոլսոյ, և այնչափ պատրաստութեամբ, մինչ զի զվեց ամսոյ դարմանս բարձեալ բերէին զհետ իրեանց, և զէնս և զասպարս անթիւ, որք ամենեքին էին արք ընտիրք և ճարտարք և հմուտք ի գործ պատերազմի: Իսկ զօրք անհաւատիցն լքեալք և հիւժեալք էին ի սովոյ և ի տօթոյ, և մանաւանդ որ այն-

* Զեռագրում՝ դաշինք:

71

չափ ժամանակս օր ըստ օրէ հանապազ ի մարտ և ի պատերազմունս հարեալք և վիրաւորեալք էին, որոյ վասն դիրաւ լինելոց էր կորուստ և մահ ամենեցուն:

Բայց ամենագէտն աստուած և ճշմարտադատ, որ քննէ զսիրտս և զերիկամունս ամենայն մարդկան, որ կշռէ զլիրինս և հաստատէ զհիմունս երկրի, որ և ածէ անձրև ի վերայ հաւատացելոց և անօրինաց, և տայ զվայելչութիւն արեգականն՝ ծագել ի վերայ արդարոց և մեղաւորաց, ոչ կամեցաւ առնել ըստ կամաց հողածնաց և մտաց մարդկան, այլ ամենասքանչ զօրութեամբն 248բ իւրով || հանդարտեցոյց զյարուցեալ խռովութիւնս ի միջոյ յերկուց թագաւորաց, զի մի՛ որ երեւեցի տրտում ի զրկմանց, այլ իւրաքանչիւրքն կացցեն ըստ շափու իւրեանց:

Իսկ ես ընդ այն զարմանամ, թէ զիա՞րդ յամեալ երկարեցաւ անբաւ զթութիւնն աստուծոյ ի վերայ սրբոց իւրոց, որ և ոչ ևս կամի զկորուստ թշնամեաց խաչին իւրոյ. բայց թուի ինձ թէ դեռ ևս կամի զկծեցուցանել զապերախտ քրիստոնեայս, այս անպիտան և գազանաբարոյ ազգաւ, ըստ օրինակի հնոյն, որ սպառնայր Բարայէլի ասելով. Բաժակ սրտմտութեան է ի ձեռին իմում նարուզողոնոսոր, և ում կամիմ՝ արբուցանեմ զնա: Այլ և մեր ամենեցուն ցածոյց զտառապումն մտաց երանելին Եսայի՞ խրատելով թէ՞ Ո՞ զիտաց զմիտս տեառն, կամ ո՞վ եղև խորհրդակից**։ Ահա և առաքեալն սքանչացեալ ընդ անհասութիւն զատաստանին աստուծոյ՝ ասէ. Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեանն աստուծոյ, զի առանց քննելոյ են ճանապարհք նորա, և առանց զննելոյ՝ իրաւունք նորա***։ Վասն որոյ և մեր այժմ թոյլ տուեալ սմին լուութեամբ, դարձցուք ընդ առաջակայ տեղին ձեռնարկեալ գործոյս՝ ասելով. Եղիցին կամք տեառն օրհնեալ յաւիտեան:

* Ձեռագրում սխալմամբ՝ յոր:

** Հմմտ. Ես. Խ. 13: Հմմտ. Հոոմ. ԺԱ. 34:

*** Հմմտ. Հոոմ. ԺԱ. 33:

ՅԱՂԱԳՄ ԳԵԱՂՈՅ ԱՄԵՆԱՅՆ ՉՕՐԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԻՅՆ Ի ՏԵՂԻՍ ԻՐԵԱՆՅ ՓԱՌԱԻՌԵԼՈՎ ԶԱՍՏՈՒԱՄ ԵՒ ԶԱՐՔԱՅՈՐԳԻՆ ՎԱՏԻՍԼԱԽ

Յայնժամ յաւուր ուրբաթի [= 5 / 15 հոկտ.] արքայ-որդին Վլատիսլաւ եկեալ ամենայն զօրքն հարկանէ զբանակն ի դաշտն Կամենիցու*, և ինքն մտեալ բնակի ի կլայն շաբաթ մի. իսկ զօրավարն ստարոստա Սենտոմիրսքին իջեանեցաւ ի տան Հայոց դատաւորին, որ կոչիւր բան Լուքաշ⁸⁴, և անդ ուրախացեալք լինէին յայնքան աւուրս կերակրովք և ըմպելօք:

249ա || Ապա յետ ութ աւուր արձակեցան ամենայն զօրքն քրիստոնէից իւրաքանչիւրքն ի տեղիս իւրեանց՝ հրամանաւ որդոյ արքային. տարան և զմարմինն երանելի և մեծ զօրավարին Գ[ա]րուլ Խոտքեիչին, որ ի բանակն փոխեցաւ ի Քրիստոս, ի սննդական բերդն իւր, և անդ ամփոփեցին մեծաւ պատուով:

Բայց սպարապետն Խազախաց Սահայտաչնին երեսուն հազար արամբք զնաց ի սահմանս իւր Զափորոհ, անդ ուր բնական տեղիքն են Խազախաց⁸⁵:

Իսկ մեծ իշխանն Վլատիսլաւ յետ այնքան աւուրն և ինքն զնացեալ մերձ եղև ի քաղաքն Իլով: Յայնժամ շարժեցան ամենայն բազմութիւն ժողովրդոց մեծամեծաց մինչև ցփոքունս և զարդարեալ զփողոց և զապարանս քաղաքին՝ ելին ընդ առաջ մեծաւ զղրմամբ, և ամենեքին անկեալ երկիր պագանէին նմա հանդերձ շնորհունակ զոհութեամբ, և ասէին. Օրհնեալ գալուստ որդոյ արքայիդ, խաղաղութիւն երկրիս և փառք ի բարձունս աստուծոյ: Եւ բերեալ պարպևս ոսկւոյ և արծաթոյ՝ մատուցանէին նմա, այլ և արջառոց և զուարկաց ևս և երիվարաց. և ոմանք յօրինեալ բանս մաղթողականս և ճոխացուցանողականս՝ երգէին նմա հրճուանօք: Եւ եղև

* Ձեռագրում՝ կամանիցայու:

ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ ի մայրաքաղաքն
Իլով, և յընդհանուր աշխարհս Իլախաց:

Եւ աստ գիտելի է, զի պատմիչն Յովհաննէս, որ դայս գրեալ է և
թարգմանեալ առ մեզ, բազում գովասանական բանս ասացեալ է ի
վերայ արքայորդւոյն գեղեցիկ բանիւ և ճոխ գովասանութեամբ.
բայց օրինակն յորմէ օրինակեցաք՝ ամենայնիւ ազաւաղեալ գոլով
ոչ կամեցայ աշխատիլ որպէս ի պատմութիւնն, նմանապէս ի գովա-
սանական բանին յոգնիլ, զի մանաւանդ որ հիւանդանալ եկն ի վերայ
անձինս, և թողաք:

249բ

|| ԳԼՈՒԽ. ԺԷ.

ՅԱՂԱԿՍ ՍՈՒՂՈՅՆ. ՈՐ ԵՂԵՒ Ի ՄԷՋ ԵՐԿՈՒՑ ԲԱՆԱԿԱՅՆ, ԵՒ ՎԱՍՆ
ԹՈՒՈՑ ԶՕՐԱՅՆ ՏԱՃԿԱՅ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՒՑ

Իսկ արդ՝ քանզի հարկեցաք յառաջագոյն յօժարու-
թեամբ բովանդակել զորպիսութիւն նախակարգեալ
կտակիս, վասն այսորիկ դարձայց այժմ, և սկսայց գրել
ձեզ վերստին զայլ ևս երկոցունց բանակաց զվշտակիր
նեղութեանցն վտանգ, որ ի նուազութենէ դարմանից և
կերակրոց թալկացեալք բազմաց յոչ կամաց շնչասպառ
լինէին⁸⁶:

Եւ նախ ի բանակն քրիստոնէից յոյժ սովեաց,
քանզի յամենից կողմանց պաշարեալք էին ի զօրաց ան-
հաւատիցն, և ուտեքէ շոյր հնար գտանել կերակուրս.
միայն այնք, որք յառաջագոյն ունէին աւելեօք, նոքա
ևս մեծաւ գնով վաճառէին միմեանց այսպէս. մի փա-
րայի հացն և փարայ⁸⁷, մի ձուն Բ փարայ⁸⁸, մի փոքր
ձուկն Ի՛ փարայ⁸⁹, մէկ նուկի պանիր Կ դրամ⁹⁰, նուկի
և կէս օղին ՃՁ փարայ⁹¹, նուկի մի քացախ և փարայ⁹²,
և այլն ամենայն սոյնպէս: Բայց միտն ի բանակին ո՛չ
այնքան թանկագին, զի զօրք և ազախացն յամենայն օր
ելանէին ի բանակէն, և երթեալք ի գիշերի անկասկած
անկանէին ի վերայ զօրացն Տաճկաց, և կոտորեալ
զնոսա առնուին բազում աւարս ի նոցանէ գտավարս, և
բերեալ զնոսա վաճառէին Իլախաց բաւական գնով, զի
տային զմէկ ուղտն մէկ դահեկանի ոսկւոյ, և զգոմէշն

ի ձ փարայ՝ զի որպէս ասի թէ՛ Ձեռն որ ո՛չ վաստակեսցէ,
ակն մի՛ խնայեսցէ: Եւ ի տիրելութենէ սովոյն տառապէին
բազումք, մանաւանդ ողորմելի զօրքն Ալամանացն, որք՝
ի դրանէն ևս թիւնու մինչև ի Կամենից աւելի քան զհա-
րիւր այր անկան ի վերայ ճանապարհին, և այլ ոչ կա-
250ա րացին գնալ. նոյնպէս և ի քաղաքն՝ մինչև ի քսան
օր մեռան անսուղորթեամբ համարմամբ թուոյ՝
Իլախք և Ալամանք՝ հազար եօթն հարիւր, զոր ժողովեալ
զամենեանն և տարեալ թաղէին արտաքոյ պարսպին. և
այս Ալամանաց զօրքն էին բովանդակ՝ հետեակք ութն
հազար, և հեծեալք երկու հազար հինգ հարիւր, որ լի-
նէին երկոտասան հազար հինգ հարիւր⁹³. Իսկ ի սոցանէ
կորեան ի պատերազմունս և ի ճանապարհին հինգ
հազար, և մնացեալքն դարձան վերստին յաշխարհն
Իւրեանց ի Տանցքա⁹⁴:

Արդ՝ ամենայն թիւք քրիստոնէից որք էին ի բա-
նակն՝ Իլախք, Ալամանք և Խաղախք, հեծեալք և հե-
տեակք, ըստ ասելոյ ոմանց էին արք իրրև հարիւր հա-
զար, որք քաջութեամբ զդէմ եղեալ մարտնչէին ընդ
անթիւ զօրացն բարբարոսաց զաւուրս քառասուն և հինգ,
և որք կատարեցան ի հանդիսի ճակատամարտին
արիական մահուամբ, և ի դարձին հեծելոց, որք մեռա-
նէին ի ճանապարհ, ասեն՝ ընդ ամենայն հնգետասան
հազար, որոց անուանք. նոցա եղիցի գրեալ ի դպրու-
թեան կենաց անվախճանից. յանճառ և յանդրաւ ուրա-
խութիւնն երկնից, ամէն:

Եկեսցուք այժմ ի կողմն Օսմանցոց, որ բացարձակ
և լայնասփիւռ տարածմամբ բանակեալ էին ի դաշտին
առանց պաշարմանց և երկիրդի յումերէ, որ և յամենից
կողմանց դիւրաւ կարէին գտանել կերակուր. սակայն ի
բազմութենէ զօրացն առաւել սաստկացաւ սովն ի մէջ
նոցա, քան թէ ի բանակն հաւատացելոց. այսպէս՝ մէկ

* Ձեռագրում՝ զոր:

կապիճ՝ այսինքն եմն զարին եղև Զ ոսկի⁹⁵, երկու նուկի պաքսիմատն Մ փարայ⁹⁶, մեկ ստկի հացն Կ ստակ⁹⁷, երկու նուկի բրինձ Կ փարայ⁹⁸, մէկ հաւ Զ դրամ այսինքն փարայ⁹⁹, մէկ ձու Ը փարայ¹⁰⁰, սակաւ մի աղ Ա ոսկի¹⁰¹. բայց միսն բաւականապէս ունէին, քանզի շնաբարոյ Քաթարքն բերէին յամենից կողմանց զյափշտակեալսն իրեանց ոշխարս և զարջառս և զձիս վաճառէին սակաւ գնոյ, իսկ այլ ամենայն դարմանք կերակրոցն թանկացաւ յոյժ, և այնր աղագաւ տկարացան ամենայն զօրքն այլազգեաց, և անկան յախտ հիւանդութեան, և բազումք ի բանակն սկսան սատակիլ ի սովոյն:

250բ || Եւ իբրև դարձաւ Օսման գնալ յաշխարհն իւր, իսկ և իսկ մեռանէին ի ճանապարհին հեծեալք և հետեակք, և եղեն դիակունք նոցա անթիւ, որ անկեալ ծածկէին զերեսս երկրի, և ի բազմութենէ մարմնոցն սատակելոց նեխեցան և հոտեցան դաշտքն և լերինք ամենայն, մինչ զի ոչ ոք իշխէր անցանել ընդ այն ճանապարհ ի բազում ատուրս. նոյնպէս և պատուական Տաճիկք և երիվարք մեծագինք, ջոկք ուղտուց և գոմշից և եզանց՝ անթիվ և անհամար, որք անկանէին տապաստ ի ճանապարհին մինչև ի Կոստանդնուպոլիս:

Իսկ ամենայն զօրք Տաճկացն, որք եկեալ էին ի Խոթինն, Տաճիկք և Քաթարք, Ուլահք և Մինթացիք և այլ ամենեքին էին արք իբրև տասն հարիւր հազար, այլ ըստ վկայութեան և հաստատելոյ ոմանց, աւելի զոլ՝ քսան անգամ հարիւր հազար. և որք կորեան ի սրոյ և ի սովու, և ի շէնս, ասեն՝ հարիւր քսան հազար, որք անօգուտ և վայրապար տեղիս կոտորեցան անխնայ. բայց ամենեցուն առիթ և պատճառ խորտակման եղև անօրէնն Օսման, ուստի և ինքն ի կատարածին անձամբն իւրով ելից զգուրն՝ զոր պատրաստեացն, ընկալելալ զհատուցումն գործոց ներկայիս, և ապագայիցն սպասեալ մնայ անսպառ և անզերծանելի տանջանացն ընկալման:

ՅԱՂԱԳՍ ՍՊԱՆՄԱՆ ՕՍՄԱՆԻՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ԹԷԱ, ՄԱՅՍԻ ՍԹ, ՅԱՒՈՒՐ ՉՈՐԵՔՇԱՐԱԹԻՆ¹⁰²

Արդ՝ որովհետև ժամանեցաք ի վերջ լիակատար պատմութեանս, օն առեալ ընթացցուք յառաջին զպարտսրն մեր ծանուցանել զմնացուածս բանից սկզբբան զլիտն, յորս թոյլ ետ յայնժամ հարկ տեղւոյն այնորիկ: Քանզի լուաք ի տեղեկագունից և ի ճշմարտապատում արանց, թէ իբրև և հաս անօրէն արքայն Օսման ի քաղաքն իւր ի Կոստանդնուպոլիս, յայնժամ սկսաւ 251ա հո|| զալ և տխրել հանապազ անհանգիստ խղճի մտօք վասն ամենայն անցիցն անցելոց, մինչև նեղէր և տաղնապէր ի բազում խորհրդոցն:

Ապա մտավարժ լեալ հանճարեցաւ նոր իմն խորհուրդ՝ հնարիք ինչ հատուցանել զփոխարէնն վրիժուց ազգին Իլախաց: Վասն որոյ կամեցաւ մեծաւ պատրաստութեամբ գնալ ի Մակքան, զի ոչ եթէ փոյթ ինչ էր նմա գնալ անդ, այլ ի մտի եղեալ էր անցանել ի յերկիրն Անատոլու, և հաստատել նոր հեծեալս և ի միտում ամին զալ դարձեալ ի վերայ քրիստոնէից. զոր լուեալ զայս ամենայն նախարարացն իւրոց՝ ջանիւ մեծաւ կամէին արգելուլ գնալ ի կամացն, իսկ նա ոչ բնաւ ումեք ի նոցանէ անսայր, այլ ընդդիմադրեալ զբանս նոցա ասէր կեղծաւորաբար, թէ ո՛չ կամիմ այլափոխել զբանս իմ, զի ուխտ երդմամբ արարեալ եմ գնալ անդ անպատճառ:

Իբրև տեսին մեծամեծքն, թէ ոչ կարեն դարձուցանել գնալ ի կամացն իւրոց, յայնժամ ժողովեցան ամենայն զօրք իրեանց ի մէջ քաղաքին, և ուղարկեն առ նա դեսպանս և ասեն. Մեք զգնալն քո ի Մակքան՝ արգելուլ չկարեմք, բայց տուր մեզ նախ զմեծ վեղիր քո զՏիլավէր փաշայն¹⁰³, և զաւագ կուսակալն, և զայլ ևս ութն արս, որք հակառակ են մեզ, և երթ դու խաղաղութեամբ:

* Ձեռագրում՝ Միկէլէ:

Իսկ Օսման ոչ կամեցաւ տալ նոցա և ոչ զմին ի նոցունց, զի մի՛ և նոքա զնա մատնեսցեն զօրացն, քանզի խորհրդակիրք էին միմեանց: Եւ դարձեալ առաքեն երկու և երեք անգամ վասն նոյն իրաց, և նա ոչ տայր թոյլ ամենևին մերձենալ ի նոսա:

Եւ տեսեալ ամենայն ամբոխն թէ ոչինչ օգտին՝ յայնժամ համարձակեալ ամենայն բազմութիւն զօրացն, և դիմեալ առ հասարակ մինչև ի դարպաս վեզիրին առանց հրամանի թագաւորին, և ըմբռնեալ զնա քարշէին արտաքս ի փողոց քաղաքին, և անդ սրախողիտող արարեալ ընկեցին ի կերակուր շանց. նոյնպէս և զայլոցն հատեալ զզլուխն՝ կախեցին զփայտէ, և զմարմինս նոցա թաւալէին ի թէլատրոնն Աթ-մեյտանի¹⁰⁴. և այսպիսի խոտվութիւնք աղմկաց անկաւ ի միջի նոցա յաւուր[ս] յայնտակ, մինչ զի բերեալ վաղվաղակի զհօրեղբայրն Օսմանին՝ զսուլթան Մուստաֆայն հաստատեցին թագաւոր ի վերայ իրեանց:

Իբրև լուաւ Օսմանն զեղեալ գործսն՝ երկեաւ յերկիւղ մեծ, և թագուցեալ գայ ի տուն իշխանին, որ ենիշար-աղասի կոչի, և ուզարկէ զնա առ ամբոխն՝ խոստանալ նոցա պարզես ամենայն գլխոյ ճ՝ դահեկան ոսկի՝ թերև հանդարտեցին այնպիսի վրդովմանց: Իսկ գունդք հեծելոցն ոչ ետուն թոյլ խոսել նմա և ոչինչ, այլ և կայեալ զնա սատակեցին ի նմին տեղոջ, և ումմին Հիւսէին փաշայի նոյնպէս ջախջախեալ բեկին զզլուխն, և ոչ այսու ամենայնիւ շատացան անզգամ ազգն Սարակինոսաց, այլ ևս քան զևս խոռվէին իբրև զալիս մրրկեալս կամ որպէս զյորձանս հեղեղաց գարնանազայր զետոց:

Եւ յարուցեալ գան մինչև ի դրունս պալատին կայսերականի, և ըմբռնեալ զողորմելին Օսման, նստուցանեն ի վերայ անարգ երիվարի միոջ, և առեալ տարան

մինչև ի տեղին, զոր՝ կոչեն Ետի-խուլ¹⁰⁵, և ապա անդ ողորմաբար խեղզամահ արարեալ կորուսանեն զարքայն իւրեանց, որ՝ բազմողոք աղաղակաւ հայցէր ամենից զփրկութենէն և ոչինչ օգտէր. որ և է այս՝ նշան և՛ եղծման և՛ կործանման տանն հեթանոսաց:

Բայց այս ամենայն վրէժխնդրութիւնք յուղեցան ի տեսունէ և յերկայնամտէն աստուծոյ ի վեայ ամբարտաւանին Օսմանայ, զի այժմ ևս պատրաստ էր հեղու վերստին զարին. և զնենգութիւն դաւաճանութեան դառնացեալ սրտին իրոյ ի վերայ քրիստոնէից, թէպէտ եղ ուխտ սիրոյ և դաշինս երզմանց: Վասն որոյ յեղակարծ ժամանակի մինչդեռ ի բարձրագոյնս կամէր ձրկտիլ՝ նուազեցաւ ընդհանուրք, ի խնդրել սակաւուն՝ զբրկեցաւ ի հանուրցն, առ յուժգին ընթանալն՝ ընկլաւ սաստկապէս, [յ՛]անխախտելի կարծիւն՝ մանր խորտակեցաւ և որ՝ ի յերկինս բարձրանալն՝ էջ ի դժոխս լի դառնութեամբ, որպէս զկափառնայում ընկղմեալ ջրնջեցաւ շաղախեալ զհոգի իւր արևամբ անմեղաց: Ընդ 252ա որս և մեք || ամենեքեան զուարճացեալք ոգւով, բարձրարբբառ բանիւ զբիրակործան վտանգեալ զանօթն ապականիչ՝ միաբան սաղմոսասաց ցնծութեամբ ասասցուք. Այս այն այր է որ ոչ արար զաստուած իւր օգնական, այլ յուսացաւ սա ի բազում մեծութիւն իւր, և զօրացաւ ի նանրութեան իւրում****:

Ապա յետ այսորիկ զանհատանելին յօրհնաբանութիւն առաքեսցուք գոհութեամբ ամենասուրբ երրորդութեանն, քանզի զոր մինչև ցայս ժամանեալ վայր՝ անդադար հետևանց սակս համառօտութեան բանիս և զրոյս հանդերձ ծանօթութեամբ մտաց, և վկայութեամբ սրտից մերոց՝ ըստ ուխտադրութեանս մերում առաջաբանի, թէ որչափ մարթն էր՝ այժմ բովանդակապէս

* Զեռագրում՝ որ:

** Զեռագրում՝ գու:

* Զեռագրում՝ որ:

** Զեռագրում՝ գու:

*** Զեռագրում՝ գու:

**** Սաղ. ԾԱ. 9.

ետոր զվախճանն օժանդակութեամբն իւրով: Ուրեմն աստանօր ժամ է և մերս դադարեցուցանել զփութութիւն ջանից աշխատութեանցս, փառաւորելով զամենակարող և զանհասանելի մեծութիւն զօրութեան նորա, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԻՆՔՆԱԳԻՐ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐԱՐՈՂԻ ԲԱՆԻՍ, ՈՐԻՇ Ի ԹՈՒՈՅՆ

Արդ՝ յայսմ անդորրութեան աւուրցս, յորում ընդոտնեալ մերժեցան վնասակար թշնամիք եկեղեցւոյ, յետ ամաց վեցից անցանելոյ, ես՝ Յովհաննէս հուսկ յետին բանահիւսաց և տարտամ հետեոյս ուսումնաւորաց, թողեալ զբազում տառապանս մշտակիր ոգւոյս և խանդաղատեալ սիրով՝ ցանկացայ թարգմանել խօսիւք նիւթական լեզուիս զայս բարեզեկոյց արգասաւորեալ նորագործ հրաշիցս համբաւ, վերավկայելով կրկին յաւելուածովք:

Որում տպաւորեալ տնօրինաբար, ճշգրտիւ պատուաստեալ կառուցի ընդ համարս ամաց կենարարին՝ որ միշտ ընթացման է արուսեկին հոլովեալ ի մեզ յոբելինից ութերին շորից և ի յօդն յաւելեալ հիւսմամբ, կրկնակի գոյիւ հնգիցս հնգից և երկրորդ յարակից¹⁰⁶. 252բ իսկ Արա||րատեան Թորգոմայ տոհմին զարմիցն ի նորոգմանէ հինգհարիւրեկին, զկնի կատարման զարուն ըստ շրջագայութեանց յեղանակաց ժամանակիս յայսմիկ. յաւել՝ ևս առ մերս քանակութիւն շափոյ հօթներեակ տասանց և վեցից¹⁰⁷: Յամս աստուածապատիւ և աթորնկալ սուրբ ուխտին Վաղարշապատու տեառն տէր Մելքիսեդեկին, և ի թագաւորութեան ինքնակալի տեառն տէր և բարեպաշտի Զիկմունդի Երրորդի, որոյ Քրիստոս աստուած պահեսցէ զընտրեալն իւր ընդ ամբածածուկ աջովն իւրով. մանաւանդ զմեծապայծառ իշխանն և ծիրանածին զանդրանիկն իւր զմեծն Վլատիւլաւ, և զայլ մեծամեծսն թագաւորութեանն իւրոյ հաս-

տատեսցէ տէր ի գործ արութեան, և օրհնեսցէ զամենեսեան անսպառելի օրհնութեամբ, ամէն:

Թէպէտ զկնի շարունակ բանք շատր կային՝ շնորհակալութիւնք յիւրեանց բնակելոցն Հայոց անդ, և հայրախնամ գթութիւնք Լեհաց տէրութեանն, որ առ ստորագրեալս գովասանաբար յայտարարութիւնք բազումք, որպէս և յառաջն ասացաք՝ ի խիստ աղաւաղ գրութենէն ամենեկն ալլայլեալ գոյոյն թողաք. որ ևս իսկ անհարկաւոր առ մեզ գոյոյն շաշխատեցաք զսխալանացն: Բայց զկնի սոցս ոտանաւոր յիշատակարանն բազում աշխատանօր ըստ կարի մերում ուղղեցար և գրեցաք զուղիղն:

Դարձեալ շնորհեմ սիրով զայս բան,
Գովել ազինդ իմ պատուական,
Սւ յազգայնոցրս մարմանական,
Մանկանց տղայոց որք ապա զան*:

Առ ձեզ աղերս գերագրական
Յիմոց ջանից սակաւ այսքան,
Թէպէտ շնորհաց բանիւ ունայն,
Այլ հրահանգիցն է ազդարան:

253 ա || Մըխիթարիչ յուսադրական
Ընդդէմ ազգին ամբարտաւան,
Քրիստոնէից զըւարթարան
Սւ անհաճիցն մըտաց դարան:

Հաւատացեալքն աստ զօրանան,
Առ այս գործոյս յաղթողական,
Մահմետականք սրգով ողբան
Զհագարացւոց անլոյծ վարան:

Հըրճուին հոգւով ամենեքեան,
Որոց Քրիստոս է օգնական,
Քանզի հարեալ հալածեցան
Այնք որք չպատուեն զյաղթող նըշան:

* Զեռագրում՝ ապագայն:

Եկեղեցւոյ փառս անվախճան
Փայլէ ի գլուխս զագաթան,
Զի ի հաղբից հայրենական
Եկաց մաքուր ւ անապական:

Քագաւորնաց տէր յաւիտեան,
Հայցեա՛ սիրով մայր հանգրստեան
Պահել գերկիրս այս անսասան
Մինչ՝* ցօր երկրորդ իւր՝** գալըստեան:

Ընդ սա և զմեզ կարգեալքս սորայն,
Ընդ բուն որդւոցրն սեպհական,
Զի թէ նրժգեհ ծնընդեամբ միայն,
Այլ սընընդեամբ եմք միարան:

Եւ դուք մանկունքրդ պատուական,
Որք պարապիք սըմին խընդման
Յիշել հայցեմ զմեզ անխափան,
Զի ձեզ տացի նոյնպէս զփոխան:

Նաև ըզծնողս իմ սըրբազան
Ըզտէր Յակոբ ծեր քահանայն
253բ || Եւ զբարեպաշտ մայրն իմ Համայն,
ԶՊօղոս եղբայրս կըրտսերամեան:

Եւ զընտանիսն ազնւական,
Որք լինելոց են և որ կան,
Զղեռաբողբոջ ծաղկանըման
զԱստուածատուրն և զՈւստիան:

Բայց ես գործով թափառական,
Ի լաւազոյն շնորհաց սոցայն,
Միայն կամու կամ անբաժան
Եւ մերձակայ գործովս արեան:

* Զեռագրում՝ մինչև:

** Զեռագրում՝ յիւր:

Թէ համարիք և աստի բան,
Զիս Յովհաննէս անձն անպիտան,
Խառնել ի թիւ սոցին արժան,
Թէպէտ յետոյ և անագան:

Լիջի՛ք և դուք յիշեալ առ այն,
Որ է անեղ և անսահման.
Զձեզ պըսակէ փառօք յայնժամ
Ի յերկնային սուրբ հարսնարան:

* * *

Սահակ զբրիչս առնէք յիշման,
Նա զձեզ յիշէ յիւր գալըստեան,
Յորժամ նըսացի յաթոռ դատման,
Մեղաւորաց նա քաւարան:

Ամենատուրք երրորդութեան
Տացուք պատիրս զոհութեան
Յանցեալ, գալոցն և այժմ որ կեան,
Եւ անըսպառ միշտ յաւիտեան:

* * *

254ա || (ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅՕՐԻՆԱԿՈՂԷ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ)

1. Յամի տեսուն 1791, Հայոց ՌՄԽ* թուին, յունուարի ամսոյն օրի-
նակեցեալ եղև զայս պատմութիւն ի հին և աղաւաղեալ ձեռագիր՝ գրթէ միոջէ-
յանկեան ուրիք մնացելոյ, ի Սարգիս դպրէ պաշտօնէլ մանկատան Սրբոյն
Յակոբայ Մծրնայ հայրապետի, շատ աշխատելով ամենասխալ գրութեան
գաղափարին և շուտափոյթ գրութեանն վասն կարճութեան պահուն, ձե-
ռամբ գրասէր եղբոր իմոյ մեծապատիւ տիրացու Աւետիսին Քապաբզատէ
կոչեցելոյ, որոյ տէր լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոցն՝ ընդ պատմիչ Յով-
հաննէսին, որ զայս թարգմանութեամբ ի լոյս ածեալ է:

2. Եւ մեր գաղափարեցար ի նոյն օրինակէ 1856 սեպտ. 25 ի Կոստան-
դինուպոլիս ի Սամաթիա: Աղաչեմ յիշել նաև զիս զանարժանս յարժանա-
ւոր աղօթիս ձեր, որ եմ Քաղէոս Միշրդատ Տէր Աստուածատուրեան Միշր-
դատեանց կոչեցեալ:

* Զեռագրում՝ ոմի (իս և ի տառերի շփոթման հետեանքով):

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նկատի ունի Օրսենտ Կամենացու ժամանակագրությունը, տե՛ս Ներկա աշխատության առաջաբանը, էջ 8—9 և 13—15:

2. Մուլթան Օսման II-ը թագավորել է 1618—1622 թթ.:

3. Հայկական աղբյուրները պոլոնների աստաստակ տալիս են իլլիս կամ լեհ անունը: Վերջինս գործածական է և այսօր: Իսկ նրանց տրվող սարմատացի անունը գտնում ենք և լեհական աղբյուրներում: Գաղմատացի կոչման մասին տե՛ս ժան. №. 7:

4. Մեր հեղինակը գերմանացիներին տալիս է պլաման անունը, որը հայկական աղբյուրներում սակավ հանդիպող տեմին է: Այստեղ փոխառված է Օրսենտ Կամենացու հայ-կոմաներեն ժամանակագրությունից:

5. Մաշաո (արևմտահայ ուղղափարական սիստեմով՝ մաճաո): Հայկական աղբյուրները թուրքերենի միջոցով եկած այս տեմինով են անվանում հունգարացիներին:

6. Բուղղան կամ Բուղղան (արևմտահայ ուղղափարությամբ Պոլտան, Պուլտան):

XVI—XVII դարերում հարևան ժողովուրդների կողմից Մուղավիային տրվում էր Բոզդանիա անունը՝ հետևողությամբ թուրքերի, որոնք 1513 թվականին իրենց գերիշխանությունը պարագրելով Մուղավիայի իշխան Բոզդան III Սեին՝ այնուհետև նրա երկիրն անվանեցին Բուղղանի (Բոզդանի) երկիր, կամ պարզապես՝ Բուղղան կամ Կարա-Բուղղան (այսինքն Սև-Բոզդանիա):

Հայկական աղբյուրներում ևս Մուղավիան կոչվում է Բուղղան (Պուլղտան) և Բուղղանայ (Պուլղտանայ) երկիր, բայց հաճախ նաև՝ Բուղղանաց (Պուլղտանաց) երկիր, մի ձև, որը ցույց է տալիս, թե Բուղղան (Պուլղտան) անունը հալասարապես տրվում էր նաև Մուղավիայի ժողովրդին: Այս վերջին իմաստով երբևից գործ էր անում նաև Բուղղանցի (Պուլղտանցի) ձևը, ինչպես կա և Հովհաննես Կամենացու մոտ:

7. Խոսքը վերաբերում է հայոց կաթողիկոս Ներսես Պարթևին (IV դար) վերագրված մարգարեությունը, որի համաձայն հայերը հազարացիների լծի տակ ընկնելուց հետո մի օր պիտի ազատագրվեին հոռմեացիների կամ, ինչպես Հովհաննես Կամենացին է ասում, դաղմատացիների ձեռքով: Այս մարգարեությունը մուծված է IX դարի մատենագիր Մեսրոպ

Սրեցի գրած՝ Ներսես Պարթևի կենսագրության մեջ, որը մեզ հասել է երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: Երկու խմբագրություններն էլ հրատարակված են:

Թյուրիմացությունները կանխելու համար պետք է ավելացնել, որ հայ մատենագրության մեջ դաղմատացի անունը հաճախ գործածված է հոռմեացի նշանակությամբ: Ազաթանգեղոսը հայոց Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի դեպի Հոռո ուղևորության մասին խոսելիս ասում է, որ նրանք «երթային հասանելին յաշխարհն Իտալիացուց և յերկիրն Գաղմատացուց ի թագաւորական բաղաքն Հոռմայեցուց», տես «Ազաթանգեղայ պատմութիւն», Վենետիկ, 1930, էջ 644—645: Այստեղ երկիր Գաղմատացուց կամ Գաղմատիա նշանակում է Լատին: Իսկ Գաշանց թղթի համաձայն, Կոստանդինոս Մեծը հայոց հետ դաշինք կնքելու առթիվ ասում է, թե «ժողով ևղև մեծ... բազմաբիր իշխանօքս դաղմատական», տես Կ. Շահնազարյանց, «Գաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը», Փարիզ, 1862, էջ 14: Հետո՝ հայոց հազարապետներին նվիրում է «նշանակս և դրօշս դաղմատացիս», անդ, էջ 18: և հրամայում է, որ «համօրէն մարդիկ սեփհական ազդացս Գաղմատացուց և Հայոց ամենեկին անգլխահարկ լիցին», անդ, էջ 23: Ուրեմն հասկանալի է, որ Հովհաննես Կամենացին այս հատվածում դաղմատացի անվան տակ նկատի ունի հոռմեացիներին:

Սակայն հայերի մոտ դաղմատացի անունը տրվել է նաև աստասարակ այն բոլոր ժողովուրդներին, որոնք դավանությամբ հոռմեական կամ կաթոլիկ են, և հենց Հովհաննես Կամենացին ինքը քիչ վերև այս անունը տվել է լեհերին, որք են ազգաւ դաղմատ և դաւանութեամբ Հոռմայեցուց» (տե՛ս էջ 35): Այսպես և XIII դարի բանաստեղծ Ֆրիկը զանազան ժողովուրդների մասին խոսելիս նրանց կրկնանուններ տալով՝ սպանացիներին տվել է դաղմատ կրկնանունը, տես Մ. Մկրյան, «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն», Երևան, 1938, էջ 2:

8. Հայկական աղբյուրները հոռոմ անունն են տալիս բյուզանդացիներին: Հեղինակն ուզում է ասել, որ Օսման II-ը, ինչպես իր նախորդները, նստած էր երբեմնի բյուզանդական կայսրերի գահի վրա:

9. Այստեղ մեր հեղինակը գործ է անում երեք դուզանհո թվականներ, որոնցից առաջինը փրկչական թվականն է՝ 1621:

Երկրորդը հայկականն է: Հայկական թվականն սկսվել է մեր թվականությամբ 551/552 թվականին, ուստի և նրա 1070-րդ տարին իրք համապատասխանում է փրկչական 1621 թվականին: Հայոց թվականը առաջ էր շարժվում յուրաքանչյուրը 532 տարիներից բաղկացած տոմարական շրջաններով, որոնք տարիների թվի կտրացված հաշվով անվանվում էին «հինգհարիտակ»-ներ: Առաջին հինգհարյուրյակի լրանալուց հետո երկրորդը սկսվել էր 1084 թվականին, իսկ երրորդը՝ 1616 թվականին: Հովհաննես Կամենացին այստեղ առաջին հինգհարյուրյակին է անկարգում:

Երրորդ թվականը իրամականն է, սակայն ոչ հիշրեթիներ, որի հաշ-

վումն սկսվում է 622/623 թվականից, Քանի որ Հովհաննես Կամենացին իւլամական թվականի բոլորած տարիների թիվը գնում է 980, ապա պարզ է, որ նա որպես մեկնակետ ընդունել է 641 թվականը, որը 18—19 տարով ուշ է հիջրիթի թվականից: Կարծում ենք, որ Հովհաննես Կամենացին իր այս հաշիվն սկսելով, ինչպես ինքն է ասում, «ի բռնութենէն Տանկաց», նկատի է ունեցել արաբների կողմից Հայաստանի մայրաքաղաք Դվինի առումն ու ավերումը, որն սկիզբ դրեց արաբական նվաճումներին Հայաստանում: Դվինի անկման թվականի մասին տարակարծություններ կան պատմական աղբյուրներում, բայց, ըստ երևույթին, ճշտությունից հետո, չէ Հովհաննես Կամենացու հաշիվը, այն է՝ 641 թվականը, հմմտ. Մ. Թրմանյան, «Աղգապատում», մասն Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 704—705: Հմմտ. նաև Կ. Նզյանի ի մի բերած աղբյուրների ցուցմունքները հետևյալ հրատարակության մեջ. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 176, ծան. 9:

Մի երկու խոսք էլ Քաղբրդի մասին, որի անունը մեր հեղինակը կապում է Մահմեդի և արաբների «բռնություն» հետ: Քաղբրդ, Քաղբր, Քաղբր անունը հայացած ձևն է արաբական զորավար Խալիֆ իբն Ալալիդի անվան, տե՛ս Բ. Կյուլեսերյան, «Իսլամը հայ մասենագրութեան մէջ», Վիննանա, 1930, էջ 336—338: Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ում նրա մասին գրում է. «Որ և ութ ամօք յառաջ քան զՄահմէտ, իշխան ոմն, անուն Քաղբրդ, առաջին նստեալ զլուս իսմայէլացոցն, և զօրջանալ անբեաց զԴամասկոս, որ է Դմբշիս, և Ելեալ ի Հայս, բազումս ի Պարսից և ի Հայոց ի սուր սուսերի արկ» և այլն, անդ, էջ 121: Այդ պատճառով հայերն իրենց թշնամական վերաբերմունքն են արտահայտել Խալիֆին՝ նրա անունը դարձնելով Կաղբրդ, որը մեր լեզվի մեջ նշանակում է՝ «մեծ պարկ ի փոր կենդանայն... ընդունարան ապաւտի», տե՛ս «Նոր բառգիրք հայկազան լեզուի», հատոր Բ, Վենետիկ, 1837, էջ 972: Ըստ Զվանշերի՝ արաբներն իրենց այս նշանավոր զորավարի անունով «առ ժամանակ մի և Քաղբթականը կոչեցան», տե՛ս «Համառօտ պատմութիւն Վրաց, բնծալեալ Լուսնշերի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 102:

10. Միգրամոնղ III-ը թագավորել է 1585—1622 թթ.:

11. Մրսուրման կամ մուսուրման՝ փոխանակ մուսուրման-ի: Այս ձևը, ինչպես և բուսուրման ձևը, հաճախ պատահում է նաև եվրոպական և ռուսական աղբյուրներում:

12. Օսմանյան Կայսրության վարչական ու զինվորական պաշտոնները վերաբերող այս հատվածում թեթև անորոշություն է տիրում, որովհետև մեր հեղինակը, զժրախտարար, թուրքական տերմիններ չի գործածում: Սակայն՝ այդ ժամանակ թուրքիայում գոյություն ունեցող պետական կարգի ուսումնասիրության հիման վրա հնարավոր է որոշ ճշտումներ կատարել: Այսպես՝

«Մեծամեծք և ցախարարք».— Պետք է հասկանալ մեծ վեզիրին

وزیر اعظم որը սուլթանի տեղակայն ու առաջին մինիստրն էր, և նրա խորհրդականներին՝ Գիվանի անգամներին՝ վերջիններս էին մյուսֆրին مفتی (սուլթանի տեղակալը կրոնական գծով և օրինակաշունչյան ներկայացուցիչը), կաղիլակներնրر قاضی العسکر (զինվորական դատավորներ) և երկրորդական կարգի վեզիրները. տե՛ս Ricaut, L'état présent de l'Empire Ottoman, Rouen, 1677, livre I, chap. XI. Հմմտ. նաև J. de Hammer, «Histoire de l'Empire Ottoman», trad. par J.-J. Hellert, t. III, Paris, 1836, p. 305—311.

«Պետք է գաւառակալը».— Պետք է հասկանալ բեգլեր-բեգիներին بکلیر بکی որոնք էյալեթները կամ նահանգների զինվորական ու վարչական պետերն էին, և սանջակ-բեգիներին سنجاقي بکی որոնք սանջակների կամ զավառների զինվորական ու վարչական պետերն էին, տե՛ս Ricaut, livre I, chap. XII. հմմտ. և livre III, chap. X.

«Ջօրք և զօրագլուխը».— Պետք է հասկանալ թուրքական հեծելազորն (սիփահիներ سپاهی) ու հետևակազորը (հնիչերիներ بيكيجورى) և նրանց պետերը, տես Ricaut, livre III, chap. II—IV, VI—VII և X. նաև J. de Hammer, «Histoire de l'Empire Ottoman», t. I, Paris, 1835, էջ 123—127.

«Իրնապետք և զօրակներ».— Պետք է հասկանալ կափուջի-բաշի-ներին قیوجی باشی և նրանց ղեկավարություն տակ գտնվող զորքերին, որոնք կոչվում էին կափուջիներ قیوجی «զոնապան», «բաբապան», հմմտ Ricaut, livre III, chap. X: Հովհաննես Կամենացին թուրքական այս տերմինները թարգմանել է հայերենի՝ ղոնապան=կափուջի և ղոնապետ=կափուջի-բաշի:

Կափուջիները պալատի կրտսեր պաշտոնեությունն էին պատկանում: Նրանք զանազան պարտականություններ էին կատարում սուլթանի ծառայության համար թե՛ պալատի ներսում, թե՛ դրսում, և ուղեկցում էին նրան՝ պատերազմի ժամանակ:

13. Տես նախորդ ծանոթագրությունը:

14. Տես № 12 ծանոթագրությունը:

15. Թրք. բովի طوب، توب «թնդանութ»:

16. Թրք. բյուֆենք تفتك «հրացան»:

17. Այն է՝ Գանուր: Այս գետի անվան գերմանական Donau ձևից մեր միջնադարյան աղբյուրներում պատահում է Saureau, և հետզհետե նաև թուրքական աղեկցությունը՝ Թոնա, Թունա:

18. Թուրքական բանակը Դանուրն անցնում է հուլ. 11/21-ին.

տե՛ս J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“. t. VIII, Paris, 1837, էջ 278.

19. Այն է՝ Վարշավա:

20. Լեհերեն կրթակ krzyzak «խաչակիր»: Անկարկոթյունը վերաբերում է Տևտոնյան կարգի գերմանացի ասպետներին, որոնք XIII դարից սկսած հաստատվելով Մերձբալտիկայում, երկար ժամանակ սպառնալիք էին դարձել Արևելյան Եվրոպայի պետություններին և հասկապես Լեհաստանին:

21. Նետոզներ (աղեղնավորներ) կամ նետոզաց ազգ անունն են տալիս հայ մատենագիրներն առհասարակ թաթար-մոնղոլներին:

22. Վիլնայի վոյեվոդա և Լիտվայի հեռավան հարույ Պոդկիևիչ (Jan Karól Chodkiewicz, wojewoda wileński, hetman litewski). Նրա մասին տես J. Tretiak, „Historia wojny chocimskiej 1621 r.“, Lwów, 1889, s. 67—72.

23. «Չորագլուխ ի վերայ համօրէն աշխարհին Իլախաց», այսինքն՝ արքունի մեծ հետմահ (hetman koronny wielki). Արքունի հեռավանութունը խոզկիևիչին արվել էր, ինչպես ասում է Օթսենալը, 1620 թ. դեկտեմբերին Վարշավայում գումարված սեյմում. տես «Կամենից», էջ 89. հմմտ. J. Tretiak, s. 70.

24. Հայկական աղբյուրներում Օլախ, Ուլախ կամ Վլախ անունով են հիշատակվում Վալախները: Վալախների երկիրը՝ պատմական Վալախիան գտնվում էր Կարպատյան լեռների և Դանուբ գետի միջև, այժմյան Ռումինիայի հարավային մասում, և բաժանվում էր երկու մասի՝ Մոմոտևիայի և Օլտևիայի: Սակայն հայկական աղբյուրներում, ինչպես ուրիշ օտար աղբյուրներում, Օլախաց երկիր անունը շփոթութամբ արվում էր և Մուդավիային: Այդպիսի առումով ենք գտնում գործածված, օրինակ, XVI դարի հեղինակներ Մինաս Թոխաթեցու ու Հակոբ Թոխաթեցու գրվածքներում և բազմաթիվ այլ հիշատակարաններում: Այդպես նաև Հովհաննես Կամենացին այստեղ նկատի ունի Մուդավիան, որտեղ գտնվում էր Խոտին գյուղաքաղաքը: Տես նաև ծան. № 65:

25. Ըստ Օթսենտ Կամենացու՝ խոզկիևիչի զորքը 1621 թ. հուլի 7/17-ին շարժվում է Օրինայի դաշտից և 10/20-ին հասնում է Խոտինի սահմանը, տե՛ս «Կամենից», էջ 93: Ըստ լեհական մի աղբյուրի՝ խոզկիևիչի բանակը Խոտին է հասնում հուլ. 8/18-ին, տե՛ս J. Tretiak, s. 210:

26. Նիստր գետ — Լուսակա՛ն Тўрас-ը, որը սկյութական ցեղերի կողմից անվանվում էր Danastris, որտեղից էլ առաջացել է՝ Dnistris, Dniestr, այն է՝ Դնեստր. և մուդավերեն՝ Nistru (Նիստրու): Լեհական աղբյուրներում անվանվում է և՛ Dniestr (Դնիեստր), և՛ Niestr (Նիեստր): Թուրքերն ու թաթարներն այս գետն անվանում էին Փուալա՝ Դնեստրի գլխավոր գետաբազուկի անունով: Ինչպես կտեսնենք՝ Հովհաննես

Կամենացին օգտագործում է նաև Փուալա ձևը՝ Օթսենտի հետևորդությամբ:

27. Վաղդիսլավ արքայորդու շարժվելու մասին տե՛ս J. Tretiak, s. 117—119.

28. Մարցին Կազանովսկի (Marcin Kazanowski).

29. Կուլմի վոյեվոդա Յան Վայեր (Jan Wajer կամ Weiher, wojewoda chelmiński, starosta pucki).

30. Ըստ Օթսենտ Կամենացու՝ հիշյալ 12.000 զորքը բաղկացած էր 8.000 գերմանացիներից և 4.000 լեհերից, տե՛ս «Կամենից», էջ 93:

31. Հայկական աղբյուրներում Լվով քաղաքը կոչվում է նաև Իլով, Իլվով, Լով, Լեվ, Լեպոլիս և Լեմպերկ (Լեմբերգ) ձևերով:

32. Ըստ Օթսենտի՝ լեհական թագածառնոց Վաղդիսլավը Կամենից է հասնում օգոստ. 13/23-ին, երկուշաբթի, և հաջորդ օրը շարժվում է դեպի Խոտին, տես «Կամենից», էջ 93: Բայց լեհական աղբյուրներում այս ամսաթիվը մի վեց օրով առաջ է շարժվում, հմմտ. հաջորդ ծանոթագրությունը:

33. Չեռագրում օգոստ. 14/24-ի օրը սխալմամբ նշված էր «ուրբաթ». մենք սրբագրեցինք և դարձրինք «երեքշաբթի»՝ ըստ Օթսենտի ժամանակագրության, որը նրա աղբյուրն է, հմմտ. «Կամենից», էջ 93—94: Սակայն լեհական աղբյուրները թագածառնոցի Խոտին ժամանումը ղնում են ավելի ուշ՝ օգոստ. 20/30-ին, երկուշաբթի օրը, տե՛ս J. Tretiak, s. 119, 211.

34. Ըստ Օթսենտի՝ այս կռիվները տևում են «չեռ շաբաթ», տես «Կամենից», էջ 94: Կռիվների սկիզբը օգոստ. 17/27-ն էր, հմմտ. М. А. Алекберли, „Хотинская война (1621 г.)“, Черновцы, 1957, стр. 81.

35. Ըստ Օթսենտի՝ թուրքական զորքի թիվը 250.000 էր, տես «Կամենից», էջ 94:

36. Ըստ Օթսենտի՝ թուրքական թնդանոթների թիվը 250 էր, տե՛ս «Կամենից», էջ 94:

37. Չեռագրում Խան-գերիչ էր. մենք նրա վերջին՝ չ տառը վերացրինք, այն համարելով բնագրի բնօրինակողներից մեկի կամ հենց եղծված բնագրի վերականգնող նույնիքն Սարգիս դպրի կողմից վրիպմամբ ավելացված, և անձուր դարձրինք Խան-Գերի, որը պիտի արտասանվի Խան-Քերի, քանի որ հեղինակի մոտ կիրառված ուղղագրական սխտեմում (այժմյան արևմտահայ) գ տառի հնչյունը շփոթվում է Կ-ի հետ: Խան-Քերի-ն մեր կարծիքով մի անուն է, որը կարող էր արվել Չրիմի թաթար-խաներին, որոնք «Քերի»-ների կամ «Գիրեյ»-ների հարստության էին պատկանում: Կոմանախոս հայերը, ըստ երևույթին նաև հայախոսները, «Գիրեյ»-ներին «Քերի»-ներ էին անվանում, հմմտ. «Կամենից», էջ 72, տող 28:

Հովհաննես Կամենացու մոտ հիշատակված Խան-Քերին Ղրիմի թաթարների խան Զանխրեկ-Գիրեյ II-ն է, տես С. Лэн-Пуль, „Мусульманские династии“, С.-Петербург, 1899, стр. 196. Ժամանակագիր Խաչատուր Կաֆայեցին ևս հիշատակում է, որ սուլթան Օսման II-ի հետ 1621 թվականին Լեհաստանի պատերազմին մասնակցողը «թագաւորն մոզոց ճանպէջէրէ խանն» էր, տես Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրութիւններ XIII—XVIII դարերի», հտ. Ա, Երևան, 1951, էջ 210:

38. Կամենիցի հայերը, որոնց թիվը մի ժամանակ 900 տուն էր կազմում, ունեին բազմաթիվ եկեղեցիներ՝ Ս. Նիկողայոս, Ս. Աստվածածին, Ավետման, Ս. Լուսավորիչ և Ս. Խաչ: Ս. Լուսավորիչ եկեղեցին գտնվում էր քաղաքի հարավային կողմում, հայոց թաղում, ընդարձակ տարածութիւն վրա, և XIX դարի սկզբներում դեռ գոյութիւն ունէր ավերակ վիճակում, տե՛ս Մ. Բժշկյան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 154: Հիշատակվում են Ս. Լուսավորչի հրկիզման նախորդ երկու դեպքեր ևս, մեկը 1575 թվականին՝ թաթարների ձեռքով, մյուսը 1602 թվականի մեծ հրդեհի ժամանակ, տես «Կամենից», էջ 46 և 63—64: Ս. Խաչ եկեղեցու մասին հիշատակութիւններն առհասարակ քիչ են: Օրսենտի ժամանակագրութիւնի համաձայն՝ Ս. Խաչը 1612 թվականին նուսպահան հրկիզվել էր թաթարների կողմից, տե՛ս «Կամենից», էջ 72:

39. Ըստ Օրսենտի՝ սուլթանի բարկութիւնը դո՛ւրս գնացողներն էին՝ Ենի-չերի-աղաին, որը պաշտոնանկ է արվում, մի թուրք փաշա, որը գլխատվում է, և Օլտաի (Մոլդովիայի) իշխան Ալեքսանդրը, որը շվեդական բանտարկվում է, տե՛ս «Կամենից», էջ 95. բայց այստեղ պատվում է, որ դեպքը տեղի էր ունեցել երկու օր առաջ՝ օգոստ. 25/սեպտ. 4 շաբաթ օրը:

40. Այն է՝ Բաղդադի կուսակալ Մուսթաֆա փաշան:

41. «Հարիւրապետ». ըստ Օրսենտի՝ քոսմիստր (լեհ. rotmistrz), տես «Կամենից», էջ 96:

42. Պրոկ.-թրք. բայրակ بىراق «գրոշ»:

43. «Լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ». համանարար՝ արաբ. لا اله الا الله լա իլահ իլլ-Ալլահ, որը նշանակում է «Զկա աստված՝ բացի Ալլահից»: Մահմեդական բանակների զորքերն այսպիսի ազդեցիկ էին գրոշում պատերազմների ժամանակ:

44. «Փոքր զօրավար», այն է՝ դաշտային հետման hetman polny, հմմտ. «Կամենից», էջ 96: Դաշտային հետմանը Ստանիսլավ Լուբոմիրսկին էր, Սանգոմիրի ստարոստան (Stanisław Lubomirski, starosta sandomierski). Ընտրվել էր 1620 թ. գեկտեմբերին, Վարշավայում գումարված սեյմում, տես «Կամենից», էջ 89:

45. «Մեծ հեթման», այն է՝ արքունի մեծ հետման, hetman koronny wielki, հմմտ. «Կամենից», էջ 96:

46. Բերդակալ Պոլցկի (kasztelan Połocki).

47. Միկոլայ Շենիավսկի (Mikołaj Sieniawski, krajczy koronny):

48. «Մեծ զօրավար», տես ծանոթ. № 23 և № 45:

49. «Երկու այր ի զինուորաց և երկուսասնը ի զինուորացն ծառայից»: Ըստ Օրսենտի՝ 2 տղարը towarysz և 11 պախուլեկ pacholek, տես «Կամենից», էջ 97:

50. Ըստ Օրսենտի՝ 5.000 կազակ, տես «Կամենից», էջ 98:

51. Կազակների մոտ տեղի ունեցած այս անցքերի մասին խոսում է Հակոբ Սորիսկին՝ իշխան Զբարասկուն ուղղած իր նամակում, տես Յ. Tretiak-ի մոտ, էջ 207:

52. Բատտիստայի որդի Կոստանզին Վելելին (Costantino Battista Veleli կամ Velleli, Vevelli, Vavelli), ազգութիւնը իտալացի, Մոլդովիայի և Վալախիայի իշխան Ռազու Միհնեայի փեսան էր: Նա 1611 թվականից սկսած հիշատակվում է որպէս բոյար (բոյար) Վալախիայում, հետագայում անցնում է Մոլդովիա և այնտեղ սպանվում 1633 թվականի ժողովրդական ապստամբութիւնի ժամանակ:

Կոստանզին Վելելին, ինչպէս ասում է Հովհաննես Կամենացին, որպէս բանագնաց թուրքերի կողմից էր ուղարկվել, բայց խոսում էր Ռազուի անունից: Վերջինս՝ Ռազուն հայտնի է որպէս խաղաղասեր տրամադրութիւն տեր մարդ: Նա 1601 թվականից սկսած, որոշ ընդհատումներով, Վալախիայի իշխան էր եղել, իսկ 1616 թվականին նշանակվել էր Մոլդովիայի իշխան, բայց լեհ-թուրքական հարաբերութիւնների լարման այս շրջանում տեսնելով մոտալուտ պատերազմի վտանգն ու չկարողանալով դիմադրել դրան, հրաժարվել էր և 1620 թվականին նորից էր ստանձնել Վալախիայի իշխանութիւնը: Հովհաննես Կամենացին ետտինի պատերազմի ժամանակ նրան հիշատակելով որպէս «պարոն Պուլտանայ» (Մոլդովիայի իշխան), նկատի ունի նրա նախկին պաշտոնը: Թուրք պատմագիր Քյաթիր Չելեբին ևս մի տեղ նրան վրիպմամբ անվանում է Բոլդան վոյվոդայը, հմմտ. „Islam Ansiklopedisi“, 5. cilt, 46. cüz, sah. 569.

Ըստ լեհական ազրուրների՝ Վելելին լեհական բանակատեղն է հասնում սեպտ. 2/12-ին և լեհական բանագնացի հետ միասին մեկնում է սեպտ. 4/14-ին. մանրամասնորին տես և հմմտ. Յ. Tretiak, s. 157—161. Լեհ բանագնաց Հակոբ Փելենսկին (Jakób Żeleński կամ Żeliński, Zieliński) դաշտային հետման Ստանիսլավ Լուբոմիրսկու պալատականներից էր:

53. Բուլինի (կամ Բուլայի) կուսակալ Կարակաշ Մոհամմեդ փաշա: Այս գլխում հեղինակը Կարակաշ անունը գրում է երկու ձևով՝ Քարակաշ և Խարակաշ. վերջինս Օրսենտի ժամանակագրութիւնի հետևողութիւնը է, ըստ կոմանական արտասանութիւնի, հմմտ. «Կամենից», էջ 98—99:

54. Թրք. գլխուր կամ գլավուր كؤر «անհավատ», «անկրոն»: Թուրքերն այսպէս էին անվանում քրիստոնյաներին:

55. Ըստ Օրսենտի՝ սուլթանը Կարակաշ փաշային տալիս է 6.000 ենի-

չերի, 12.000 ուսմելլան հեծյալ և 5.000 անատուլան հեծյալ. տե՛ս «Կամեննից», էջ 98:

56. Քրք. խանդակ خنداك «խրամ», «ախան», «պատնեհ»:

57. Ըստ Օքսենտի՝ լեհական կողմից ընկնում են 7 հոգի, իսկ թշնամուց՝ 2.800, տե՛ս «Կամեննից», էջ 99:

58. Զեռագրում հազար երկու է՝ «հարիր» բառի բացթողումով: Մենք լրացնում ենք (1200)՝ Օքսենտի Ժամանակագրության հետևողությամբ, տե՛ս «Կամեննից», էջ 100:

59. Այսինքն՝ Ղարահարի կուսակալ փաշան, որի անունը չի նըշված, և Ալի փաշան, որը հավանաբար Քողանջի Ալի փաշան էր: Ըստ թուրքական աղբյուրների՝ այս կովում վիրավորվել են Քողանջի Ալի փաշան և Բոլլի բեգը, տե՛ս J. de Hammer, t. VIII, p. 281.

60. «Արապն փաշային» արտահայտության մեջ փաշա բառով հեղինակը հավանաբար նկատի ունի երկրորդ վեզիր Լյուսկյին փաշային, որը սեպտ. 7/17-ին հրամանատար էր նշանակվել այն զորամասերին, որոնք պիտի գործեն և այժմ գործում էին Գնեստրի մյուս կողմից, տե՛ս J. de Hammer, t. VIII, p. 281. Սեպտ. 13/23-ի այս դեպքերի մասին տես նաև J. Tretiak, s. 171—172.

61. Լեհական աղբյուրների համաձայն հոտկիեիչի մահը տեղի է ունեցել սեպտ. 14/24-ին, ուրբաթ օրը, կեսօրից հետո, տե՛ս J. Tretiak, s. 170, 225. Ինչպես տեսնում ենք՝ Հովհաննես Կամենացին Օքսենտի հետևողությամբ, այդ դեպքը դնում է սեպտ. 15/25-ին, շաբաթ օրը. հմմտ. նաև «Կամեննից», էջ 100:

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ, ինչպես լեհական աղբյուրներն են ասում, հոտկիեիչի մահը գաղտնի էր պահվում լեհական բանակում, որպեսզի նախ զորքը չհուսալքվեր և ապա թշնամին չիմանար, և միայն հաջորդ օրվա մարտերի ժամանակ է, որ լեհական զորքն իրազեկ է դառնում այդ մասին, այն էլ՝ թաթարների գորգոտցներից. տես J. Tretiak, s. 173: Այսպիսով է, որ հոտկիեիչի մահը Օքսենտի օրագրության մեջ գրանցվել է մի օր ուշ և այդպես էլ անցել է Հովհաննես Կամենացու աշխատությանը:

62. «Մառայ». ըստ Օքսենտի՝ պախուլեկ: Տես նաև ծան. № 49:

63. Այն է՝ Ստանիսլավ Լուբլինսկին՝ Սանդոմիրի ստարոստան, որը դաշտային հետման էր. հոգկիեիչն իր մահից առաջ վերջին պահին նրան էր հանձնել նաև արբանի հետմանության լիազորությունները. տե՛ս J. Tretiak, s. 217. նաև «Կամեննից», էջ 101:

64. Անշուշտ անշուհաուտ իմաստով, թրք. ուղուսուլ اوغورسوز «վատասն», «չարաբեր», «ծախորդություն չերող»:

65. «Մինթացիք», այն է՝ վալախները: Վալախայի լեոնային մարը, որի սահմաններն սկսվում էին Կարպատյան լեռներից, կոչվում էր Մուևանեխ (Լեոնաստան): Այս անունից առաջ է եկել հայկական աղբյուրներ-

ում գործածված Մուևանի (Մուևդանի) երկիր, Մինտանի (Մինդանի) երկիր, Մինտանաց (Մինբանաց) երկիր անվանակոթյունը, որով հասկացվում էր ամբողջ Վալախիան, քանի որ Օլախաց երկիր կամ Վալախաց երկիր անունը մեր աղբյուրները հաճախ տալիս էին նաև Մուրավյային. տե՛ս վերևում, ծան. № 24:

66. Սուլակները صولاق սուլթանի թիկնապան զօրքի մի տեհսակն էին. նրանց պետք էր ներշնչելով բանակի սպաներից էր:

67. Բալթացիները بالتجى (տապարակեր) նույնպես սուլթանի թիկնապան զօրքի մի տեսակն էին:

68. Ըստ Օքսենտի՝ 4 փաշաների զորքի թիվը 3.000 էր, տե՛ս «Կամեննից», էջ 101:

69. «Քոփապետ», այն է թրք. բոփչի-բաշի طوبچی باشی «չրեոտանային զորամասի պետ»:

70. «Հագարապետ». ըստ Օքսենտի՝ ուսումիստր (լեհ. rotmistrz), տես «Կամեննից», էջ 102:

71. Խոսքը սպանված ենիչերիների մասին է, որոնց թիվն, ըստ Օքսենտի, ոչ թե 4.000 էր, այլ 1.400, տե՛ս «Կամեննից», էջ 103:

72. Օքսենտը Քուլդանցիներին (մուլդավացիներին) չի հիշատակում. խոսելով միայն «Մուլդան»-ների (վալախների) մասին, ասում է, որ նրանց կորուստը 5-ից 6 հազար էր. տե՛ս «Կամեննից», էջ 103:

73. Ըստ Օքսենտի՝ վիրավորների թիվն «ավելի քան 1.000» էր, տե՛ս «Կամեննից», էջ 103:

